

7114

Elongat. fuscipes -
M. 9

281
7 - 32

1908 p.

04 NOV 2009

Դ-32/Հ. Հ. Հովհաննես Վահագիան

Ա Բ Զ Ե Մ Տ Ե

ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆ

ԵՐԱԽՏԵԱՑ ՄԵԾ ԵՒ ՅԱՅՏՆԻ
ԲԱՐԵՐԱՐԻՍ, ՓՈՔՐ ԵՒ ԱՆՁԱՆՈՅ
ԲԱՐԵԿԱՄԻՍ:

«Բրոգ չտփոց չտփէք,
չտփեսցի ձեղ».

— 9. թ ե 3 —

ՍՈՒՅԻԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՁԵԱՆՑ

80
ՀՊ-104

1903

Տողարան Այլազեանց և Նազարեանց
ե թ ե ի Ա. Ն. (4)

~~180~~ 7-3.9 48.
91-914

Ա Ր Ձ Ե Բ Ն

Վ Ա Ր Ձ Ա Տ Ր Ո Ւ Թ Ի Ւ

ԵՐԱԽՏԵԱՑ ՄԵԾ ԵՒ ՅԱՅՏՆԻ
ԲԱՐԵԴԱՐԻԱ, ՓՈՔՐ ԵՒ ԱՆԾԱՆՈՅ
ԲԱՐԵԿԱՍԻԱ:

tag 06

«Արով չափով չափեք,
չափեսցի ձեզ»:



1903

Տպարան Այլվազեանց և Նաղարեանց
Եթե և Ա. Ն. (4)

1 FEB 2014

714

ԲԱՐԵՍԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ ՆԱԽԱԳԻՏԵԼԻՑ:

Արքան ուղիղ է ժողովրդական լնզանբացած ասացուածո՞ «Բախտաւոր աստղի տակ ծնուածը միշտ ճակատագրի յաջողուածներին կհանդիպի», կարծես նոյնքան ստոյգ է և սորան ճակառակ վկայուածը, «Զարագուշակ գիսաւորի երևման ժամանակ ծնուածն աշխարհային կենցաղի մէջ չարատանջ կեանք կանցուցանի»: Մնահաւատ նախապաշարմանս ակնարկութեամբ՝ չգիտենք 1837 թուականի դեկտեմբերի 10-ին գիսաւոր աստղ երկացած է՝ թէ ոչ, սակայն մեր ապարախտների թուին սպատկանած լինելով՝ բովանդակ կեանքի ասպարիզում շատ և շատ արգելքների, զրկանքների, տառապանքների, զրպարտութեանց, ճարածանքների և յանիբաւի անարգանքների ենք հանդիպած. այնու ամենայնիւ վերնախնամ տեսչութեան հաճելի է եղած պահպանել մեզ առանց յուսաբեկութեան:

Ներկայ գրքոյկը՝ մատնացոց կլինի մեր կրած—տառապանքների մի մասին վերայ՝ զոր ակամայ տհաճութեամբ հրատարակում ենք ոչ այնքան առ մեզ զութ և զորով ձըշելու յարգելի կարգացողներից, քան որքան նոցա երբեմնին գայթակղուած միտք խաղաղելու անձնաւորութեանց ճանաշման վերաբերութեամբ, թէպէտե շատ և շատ ուշ, ըստ որում անձին տէր չենք, այլ պատկանում ենք մեր կոչման, պաշտօնին, ազգին և հոգեոր իշխանութեան: Աւրեմն աննպատակ թնդ չհամարուի այս աշխատութեան տպագրութիւնն՝ որ 'ի շնորթիւն միամտութեան կառաջնորդէ, քան 'ի կործանումն գայթակղութեան, որովհետեւ անարակոյս կզարթուցանէ բարեկմիտ ընթերցողների ուշադրութիւնն թէ՝ մինչի եղբ Հայուստանեաց եկեղեցւոյ սահմանադրական Քահանայտպետներն՝ իրենց բնական մտաւոր կարողութիւններից կապաւուած-կողոպառուած ժամանակ, խաղալիկ

ովէտք է դառնան այս և այն անբարեմիտ բաղդախնդիր կոնդակագիրների յանարդանս իշխանութեան պատկառելի վարկման և 'ի նախատինա անպարբերութեան հայ ազգութեան:

Սորա օրինակը՝ բացի Գերապատիւ Ներսէս եպիսկոպոսի փետրվարի 22-ին արձակած նամակինոր յիտոյ աւելացած է, գրութիւնը՝ 1884 թուականի յունուարի 24-ին ընդ համարաւ 25, ուղարկած էինք Ռուսով քաղաք Յովհաննէս Տէր-Արքահամեանցին հրատարակելու: Սակայն երբ ամենապատիւ Մակար սրբազն արքեպիսկոպոսի փետրուարի 14-ին էջմիածնից քարշուած հեռագիրը ստացանք որով պատուիրում էր մեզ այդ գրքուկի տպագրութիւնն դադարեցնել, հարկագրուեցանք խնդրել նորանից մեզ վերագանձնել: Նա՝ Տէր-Արքահամեանցն իւր նամակով յանուն արժանապատիւ Մելքիսեդեկ քահանայ Քալանթարեանցին առյն տարուայ սեպտեմբերի 3-ին ծանուցանուեմէ. «Գերապատիւ Առոքիաս հպիսկոպոսի բրոշիւրն «Սո ձեռն վարձատըրութիւն» վերնագրով՝ գրաքննութեան զրկել եմ ի Սահակապետերբուրգ յշ փետրուարի տարւոյ համարաւ 110, «և մինչ ցայժմ յետ ստացած չ'եմ: Սորա պատճառն այն է անկակած՝ որ գրքի բովանդակութիւնն եկեղեցականի «վերայ լինելով, Պետրուրպի գրաքննուարանը բրոշիւրի «բնագիրն էջմիածին զրկած է 'ի գրաքննութիւն, ուր և մնացած է արխիւր մէջ, իրեն անյարմար տպագրութեան»:

Սակայն ո՞քքան եղաւ մեր զարմանք՝ երբ Գետրուրպի բժշկական համալսարանի ուսանող շամախեցի պարսն թագէոս Զաքարեանց, մեզ հաղորդեց 1885 թուականի փետրուար ամսի վերջին, երբ իմլասին Աստրախան էինք գնում, որ տպարանատէր Յովհաննէս Տէր-Արքահամեանի մայրաքաղաքի գրաքննական ժողովն ուղարկած տպագրելի օրինակը գտնուումէր այն ժամանակ արգոյ Կարապիտ Յարութիւնեան Եղեանի տաճան, ուր և ուսանող պարոնը կարգացած է: Ի՞նչ խորհուրդ ունէր արգեօք ազգասէր պարոնի այնպիսի վարմունք, մեր անուան վերաբերութեամբ ամեն-

հայն յիշոցաբանութիւններ հրատարակելու ոչ միայն արգելք չ'լինել, այլ խրախոյս անգամ տալ, իսկ մեր փառականի արգարացուցման վկայաբանութիւնք առներ, կաշկանդել իրեն մօմ: Այս օրինակ գործողութեան մէջ անկողմանկալ արգարաբութիւնն չ'է գերակատարն, այլ միակողմանի կիրք և կուսակցութիւն, որքան և նույիրական համարուի իշխանութեան վարկման հովանաւորութիւնն:

Այսպիսի մանրամանութեանց ծանօթանալին յիտոյ՝ երբ Մեղու Հայաստանի լրագրում այդ բանազրական կոնդակի մասին տեղեկութիւն հրատարակուեց՝ աստրախանցի այժմ հանգուցեալ Բուզագեանցն, որ պաշտօն ունէր Ներքին Գործոց Նախարարութեան մէջ, մասնաւոր նամակով մեզ յորգոր կարգաց յզել այդ գրքոյիը Կոստանդնուպօլիս արգոյ Համբարձում Ալանալիանցին «Փունչ» շաբաթաթիւրթի մէջ մասն առ մասն, կամ առանձին զրքուկով տպագրելու: Իսկ երբ հրատարակուեց նոյն կոնդակ թուրքիոյ մայրաքաղաքի շատ թերթերի մէջ՝ Գերապատիւ Տէր Մելքիսեդեկ սրբազն հպիսկոպոսն առանձինն զրութեամբ մեզ յորդորեց անշուշա լուսթեան չ'տալ այդ վերին աստիճանի տմարդի վարմունք, այլ հերքուղականով պատասխանել: 'Ի հնուումն որոյ տետրակիս մի օրինակն ուղարկուեց նորին Սրբազնութեան յանձնել Արևելեան Մամուլի խմբագրութեանն հրատարակելու, սակայն մեզ ցայսօր անյայտ մնաց սորա լոյսընծայութիւնն:

Վեց տարիներ անցնելուց յիտոյ, այն է 1891 թուականի ապրիլ ամսի առաջին օրերն, 'ի Տէր հանգուցեալ սրբազնագոյն Մակար Կաթողիկոսն առանձինն կոչելով մեզ իւր մօմ՝ վշտահար սրտով ասոց. «Ինչպէս երեւում է քո գլխին փոթուրիկներ պիտի բարձրանան, ինչ արիր երեմիա, Ներսէս «և Արքուտակէս եպիսկոպոսների քեզ զրած իսկական նաև մակները՝ հանգուցեալ կաթողիկոսի բանաղբանաց կոնդակի վերաբերութեամբ, ինձ ըհը նորանք, պարոն Պրօկուրօրը ցանկանում է տեսնելը: Մօսս են, առացի և անմիջապէս սենեակ վերապատճառով՝ բերեցի յանձնեցի իրեն: Բանի

մի օրեր մնացին իւր ժօտ, ժօտաւորապէս ապրիլի 10-ին վերստին կոչելով՝ վերադարձոյց ինձ նորանք, ծանուցանելով. «Ինչ որ պարտք էի համարում» այդ անցեալ բանսար «կութեամբ յերիւրուած տիսուր և ամօթալից գէպքերի մաս «սին, մի առ մի խօսեցայ պարոն կանչելի Պրօկուրօրին» «յատկապէս պարոն Խանաղով գաւառապէտի ներկայու «թեանն որպէս վկայի: Աւելորդ է քեզ հաշիւ տալ, միայն «գուցէ նա Սինոգիցն էլ հարցմունքներ անի պաշտօնական «թղթով, թերես և քեզանից մանրամասնութիւններ ցանե «կանայ տեղեկանալ, պատասխանեցէք նորան ինչ յայտնի «են Չեզ. միայն ևս ափսոսում եմ» որ հեռագրով քեզ ար «գելեցի յարմար ժամանակին դոբանց հրատարակութիւնն, «ըստ որում աշխարհու և իւրայինք մեր գիտեցածից աւելի «արմառացած են չարութեան մէջ»:

Ահա, այս գժբախտ տեսքակն է՝ որ հակառակ չերկաց
և նախելին համոզմանս՝ արտայայտուած յանուն Տէր-Արիս-
տոկէս հպիւկողոսի արձակածու նամակի մէջ, այսօր 23
տարիներից յիտոյ լոյս է տեսնում միմիայն արդարու-
թեան և ճշմարտութեան պարտք կատարելու նպատակաւ
անցեալ քողածածուկ գործողութիւնների վերաբերութեամբ:
Եւ այս նորա համար, որպէս զի երկրորդ անգամ համոզուի
Աստրախանի վիճակի բարեպաշտօն մերազգի ժողովուրդ՝
թէ մեր մասին պաշտօնապէս գոյութիւն չունէր այն նզո-
վից կոնդակն՝ որոյ մասին այնքան թմրկահարութիւն արին
մեր բարեկամները բոլոր քաղաքների և աւանների հրապա-
րակներում և մեր ձեռողիքը պատասխանները տարածու-
եցին, և թէ կեղծ չ'էր մեր տեսչական պաշտօնավարու-
թիւնք Գէորգ Շորբորդ կաթուղիկոսի մահուանից յիտոյ
մինչև այսօր:

U. U. b. q.

Ներկայ 1884 տարուայ առաջին խսկ օրերը քաղաքիս մէջ ձեռքէ ձեռք, անէ տուն, հրապարակէ հրապարակ և կրտակէ կրտակ սկսու պտտիլ հանգուցեալ Գէորգ Վեհափառ Կաթողիկոսսի կոնդակի օրինակն, որ իբր թէ 1880 թուականի դեկտեմբերի 31-ին ընդ համարով 571, իմ մասին յանձնուած է Սրբազն Սինոգին: Նոյն արարողութիւնը իսկութեամբ կտարուել է և վիճակիս քաղաքների մէջ, ինչպէս մասնաւոր համբաւներից ստուգուեց: Ինձ համար սորանից անակնկալ կաղամնդչէքպարզն չէր կարող լինիլ: Այդ Հայրապետական ջնորհագրի հետ իբրև ծանուցաւմն կայ գրուած և մի քանի տող հատընտիր խօսքեր՝ որոնք պարզեամբ պատճեաց պակասութիւնը լրացնուած են: Այս է կոնդակի պատճենը ամենայն հարազարաւոթեամբ:

«Ֆեռզ ծառայ Քրիստոփ և անհասանելի
«կամօթն Աստծոց Եպիսկոպոսակես և Կարո-
«ղիկոս ամենայն Հայոց, ծայրազոյն Պատրիարք
«համագալակի նախամեծար Արռոյ Երաւան-
«եան Առաքելական մայր եկեղեցւոյ Մրոյ Կա-
«ռուղիկէ Էջմիածնի. Մինօքի Սբբոյ Էջմիածնի:

«Առ ՚ի խաղաղացուցանել զյուղմունս և
«զերկպառակութիւնս հայկազուն պարզամիտ
«ժողովրդեան» հոգեսոր որդւոց մերոց, յԱղէքսան-
«դրամոլ քաղաքի և ՚ի վիճակի նորա, ՚ի 1877

«թուին բարւոք տնօրինեաց Սինօդդ հեռացուցա-
«նել անտի զթելագիրն յուղմանց և խոռվութեանց
«և գառիթն բազմատեսակ գայթակղութեանց ըզ-
«շնորհագուրկ եպիսկոպոսն Սուքիս Պարզեանց
«բառնալով զչարն 'ի միջոց ժողովրդեան։ Ար և
«աստ 'ի Հայրապետական Մայր Աթոռոջս, ի
«առորք էջմիածին յայտնեալ զչար հոգի իւր և
«բարձրացուցեալ զեղջիւր ամբարտաւանութեան
«ընդգէր ընդգէմ տնօրէնութեան և հրամանաց
«Սինօդի և Հայրապետականս իշխանութեան,
«իրքի զնոր իմն Նիկոլ մերկացեալ բոլորովին ըզ-
«շնորհս աստուածայինս, զոր ընկալեալն էր 'ի
«ձեռնադրութեանն յեպիսկոպոսութիւն, ամե-
«նայն զազրալի լրբութեամբ, արբեցութեամբ
«և անտուակութեամբ 'ի վարս իւր և 'ի զնոցս,
«որպէս ապացուցանեն և գրաւոր և բանաւոր
«վկայութիւնք բազմաց 'ի ժողովրդոց Աղէքսան-
«դրապօլոյ և վիճակին, որպէս և 'ի բազմաց
«եկեղեցականաց և աշխարհականաց այլոց տեղ-
«եաց ստուգեցաք, այնչափ յանդգնեալ մինչև 'ի
«հայ լրագիրս Տիֆեաց ստորագրութեամբ իւրով
«կոչել զանձն ըմբոստ Կաթուղիկոսական իշխա-
«նութեան և հրահանդաց և հրամանաց Սինօ-
«դիդ, որպէս յամենայն տեղիս՝ ուր դաեալ է
«պաշտօնիւ, այսպէս ընթանալով բաժանեալ է
«դհօսն Քրիստոսի յերկուս, կէտ նալատակի ու-
«նելով ինքեան միայն զանձնական օգուտն իւր,
«ընթանալով հակառակ կանոնաց և օրինաց
«Հայաստանեայց որբոյ եկեղեցւոյ, որպէս յԱղէք-

«սանդրապօլ, նոյնպէս և 'ի վիճակին Ախալցիսոյ,
«կատարեալ յանդգնութեամբ առ ոչինչ համարեալ
«զկարգս և զկանոնս, զծէս և զարարողութիւնս
«որբոյ եկեղեցւոյ մերոյ, զխաղաղութիւն և ըդ-
«ուէր պատուական ժողովրդեանն և զիշխանու-
«թիւն և զիբաւասութիւնս Հոգեոր ծայրագոյն
«իշխանութեան անպատճելով Իսկ 'ի կարգելն
«մեր յառաջնորդութիւն Բեսարաբիոյ և նորոյն
«Նախիջևանի զՄակար սրբազն Արքեպիսկո-
«պոսն յառաջ քան զամս երկուս 'ի 15 Մարտի
«1879 ամի, ինըրեաց 'ի մէնջ թափանձանօք
«տանել ընդ իւր 'ի նոր ստանձնեալ վիճակ իւր
«զՄարքիսն, որ ձեռնասուն աշակերտ իւր էր
«և ինտմովք նորա զարգացեալ 'ի մանկութեանէ
«անտի, և մեք 'ի յարգանս Արքեպիսկոպոսին
«Մակարաց զիջեալ 'ի խնդիրն տուաք հրա-
«ման տանելոյ ընդ իւր, այնու միայն պայմա-
«նաւ, զի ոչ իրքի անձն հոգեորական և ոչ իրքի
«եպիսկոպոս, այլ իրքի աշխարհական ծառայ և
«սպասաւոր կարող է տանել ընդ իւր, կարծե-
«լով մեր անշուշտ, զի նա հայրական բարի
«խրատուք գուցէ յաջողեսցի գարձուցանել ըզ-
«շարն 'ի վատ զնացից իւրոց 'ի զզումն ապաշ-
«խարութեանն, այլ որովհետեւ մինչև ցայսօր չե-
«րկեցաւ 'ի նմա պտուղ բարի, անզեզջ է նա և
«անապաշտ որպիսի յամառեցելոյն 'ի չարիս
«մբ երբէք վրկութիւն հոգւոյ ըստ քրիստոն-
«էական հաւատոյ մերոյ և ըստ ծշմարիս վարդա-
«պետութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ»։

«Թւստի զարդիս առեալ՝ ի կշխ զայս ամենայն և առաւել զչարիս յապագային վասն «ազդի և եկեղեցւոյ, և որովհետեւ մեք եմք ձեռնադրեալ զնա յաստիճան եղիսկոպոսութեան, «երկնչիմք յԱստուծոյ զի մի եղիցուք և մեք կը «ցորդ անիրաւութեանց, չարամտութեանց և «մեղաց նորա, իմա շնորհազուրկ Սուքիասի «Պարզեանց: Վանսորոյ պատուիրեմք Սինօդիդ «փութով հրատարակել յտմենայն վիճակս՝ ի «գիտութիւն և ՚ի զգուշութիւն ամենից Հայոց «՚ի ձեռն առաջնորդաց Մերոց Ռուսաստանի, «Տաճկաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի «և յամենայն տեղիս, ուր գտանին հաբազատ «որդիք առաքելական սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, զի գիտացեալ զչարութիւն և զչար «գնացս ընդդէմ եկեղեցւոյ մերոց, մի ընկալ «ցին զՍուքիասն ոչ իրի զեպիսկոպոս, ոչ «իրի զքահանայ և ոչ իրի զքրիստոնեայ, «այլ զգուշացին ՚ի նմանէ ըստ ամենայնի «իրի ՚ի թունաւոր օձէ և ՚ի կարձէ, մի առնել ընդ նմա հաղորդակցութիւն ամենին և «մի ընկալցին ՚ի տաւնս իւրեանց, քանզի հոտեալ անդամ է նա, մինչև զարձի առ Տէր և «զղացի կատարեալ սրտիւ և ապաշտեացէ «և արժանի լիցի ընդունելութեան շնորհաց «Տեառն Աստուծոյ և Փրկչին մերոց Յիսուսի «Քրիստոսի»:

«Գէորգ Դ. Կաթողիկոս ամենայն Հայոց»:

Այսպէս է նաև ծանուցազրի իսկութիւնը.

«Մեծարդոյ Հայր, ուզարկելով առ Զեզ պատ «Ճինն կոնդակի հանգուցեալ վեհափառ Կաթուղի «կոսի ամենայն Հայոց Տեառն Տեառն Գէորգայ «՚ի, կիրաւիրեմք Զեր և քաղաքիդ համայն ժողո «վրդականաց խորին ուշադրութիւնը կարդալ «այն և հասկանալ, որ Զեր այժմեան առաջնորդ «Սուքիաս եղիսկոպոսն Հայրապետական նպով «իւք բանագլուած իւք ապականեալ զործոց «համար և զրկուած է եղիսկոպոսական իրաւունքներէն. նա անգամ քրիստոնեայ կոչու «ելու արժանիք չնւնի, թող եպիսկոպոս կամ «առաջնորդ հաւատացեալ հայ ժողովրդոց: Մակար եպիսկոպոսն..... պաշտպանութեան «մտօք զողանալով կաղողիկոսական զործերից «բանագլանաց իսկական կոնդակն՝ ինքն ևս իրի «՚ի ներկայս Տեղապահ, յաջողացրեց իւաբդաւանութեամբ՝ Սուքիասի առաջնորդութիւնն, «բայց ահա վաւերական պատճեն ընդօրինակեւ «լով հանգուցեալ կաթուղիկոսի ինքնածեռագիր «սեազրէն կուղարեիմ Զեզ, որպէս զի ճանաչե «լով այդ բանագլեալ և նպովիալ կդերն հետի «մնայք նորանից իրի մի անարժան հեթանու «ստմիտ անձնէ, մինչև նա զործով չ'ցուցանէ «իւք սրտի կատարեալ քրիստոնէափայել զդշումը «և ապաշխարութիւնն հանգուցեալ երջանկա «յիշատակ Հայրապետի զերեզմանին և ոսկե «բանցն և սուանալ ներումն և թողութիւն նորըն «տիր Հայրապետէն: Ուրեմն լաւ հասկանալու «էք՝ որ այդ Սուքիաս Պարզեանցի եպիսկոպոս-

առութիւնն է անվաւէր, հետևորար և առաջնորդութիւնն կեղծ: Վատահութեամբ կարէք յիշեցնել Սուրբիաս Պարզեանցին մինչ ցարդ Զեղ գաղանի: Անացեալ այս եղելութիւնն և հետևար յատնել Աբովյան սրբոյ էջմիածնի և խայտառակել այսպիսի խարդաւանութիւն Մակար եպիսկոպոսին»:

18¹²₂₀-81

Կ. Սահմաթեանց:

Վաղարշապատ էր զրուած նամակատան դրօշմի մէջն և գեկոմմըրերի 17 անցեալ 1883 թուականի:

Աստրախան էր զրուած նամակատան դրօշմի վերայ և Յունուարի 4 ներկայ 1884 թուականի:

Բ.

Փոքր ինչ այստեղ դադար առնելով քանի մի յետահայեաց ակնարկ պէտք է ձգեմ անցեալ իրողութիւնների վերայ: Արդէն մերձաւոր ժամանակի լրագրական հրատարակութիւններից յայտնի է ընթերցող հաստրակութեանը իմ Վեհափառ Կաթողիկոսի հետ ունեցած անրաւականութիւնը, որն որ յառաջացաւ հանգուցելոյ գերօրինակ պաշտպանութիւնիցն սուրբ Աթոռոյ նիւթական և բարոյական արգեանց վնասակարների վերաբերութեամբ: Յայտնի են շատերին, որ ես միշտ դրով և բանիւ վեհարանականք թշնամանած եմ իրեկ ազգային եկեղեցւոյ սեպհականութեանց աւարներին բաժանորդ և բաժանարար: այդ մասին էլ առանց յանցանքների ապացուցութեանց իմ արժանի պատուհաս կրեցի Երեանի նահանգապետի

միջամտութեամբ Գեղարդայ վաճար աքսոր գնալով: Թէ որքան տանջուեցայ և տագնապեցայ այդ տեղ նոր գաածս սոկրացաւից և աւազակների գիշերախառն յարձակմունքներից, նոյնովէս յոյանի են շատերին: Երբ իմ բոլոր զրաւոր թախանձանքներս՝ չնորհիւ օրհնաբանեալ բարեզթութեան Վեհափառ Հօրին հաստրակաց, ընդունելութիւն չգտան Սրբազն Սինօդի առաջ՝ զիս այլ վաճար տեղափոխելու, ուր օգն խիստ և խոնաւ չլինի, ընդունելութիւն չգտաւ նորին Սրբութեան մօտ և իմ անձամբ Վաղարշապատ գնալն և հիւրնկալի բերանով թոյլուութիւն խնդրելը ներկայանալ իրեն, այլ ինձ առաջարկուեց անպայմանաբար զրաւոր մեղայագիր տալ յանուն կաթողիկոսի, ես իմ արդարութեան վերայ պնդելով՝ վերադայ Գեղարդայ վաճար, զրեցի քսան և հինգ թերթից բաղկացած մէկ յայտարարական պրութիւն յանուն Տէր Գէորգ Դիք և 1878 թուականի հոկտեմբեր ամսոյ 20-ին վանահօր ձեռքով ուղարկելով էջմիածին՝ ինքնազուխուղարկեցայ Նախիջևան, եղբարցս տունն: Գրեցի նոյն թուին և ազգարարական թուղթ Մայր աթոռի միաբանութեան այն անդամների անունով՝ որոնք ինձ յանցաւոր էին համարել իրենց արձանագրութիւնով կաթողիկոսին չհնաղանդելուս պատճառաւան, և նոյն վանահօր միջոցով ուղարկեցի իրենց: Դոյն յայտարարութեան թղթի մէջ որքան համառօտախօսութիւնն թոյլ կ'տար մի առ մի բացարած եմ Նորին Օծութեան՝ սկսած ի թուսատան դալու օրէն, այն առիթներն՝ որոնք գորացել են ինձ վերայ յարուցանել ամենակերպ հալածանքներ բոլոր պաշտօնատարու-

թեանցս ժամանակ Տփխիս, Ախալցխա, Ալէքսանդրապօլ և Էջմիածին։ Յոյս ունիմ որ ինչպէս վերոյբերեալ հայրապետական անգործագիր կոնդակ վեհարանէն գուրս գալով՝ այնքան ընդարձակ ծաւալ զըտած է հասարակութեան մէջ, մէկ օր և իմ գրութիւնս շրջաբերութեան գուրս կ'գայ, որովհետեւ՝ ի գիշերի չեմ գնացած, այլ ուղղակի համարձակած եմ կը կնել Նորին Վեհափառութեան ամէն ճշգրիտ նախանցեալ պատմութիւնք։

Համուռմ հեմ Նախիջևան, այնտեղ ստանում եմ Գերապատիւ Միրազան Մակար Արքեպիսկոպոսի առանց ամսաթուի զրած նամակն այս բովանդակութեամբ, «Գերապատիւ Սուքիս սրբազնն եպիսկոպոսի իմաստի իմագալ ՚ի Տէր։ Ներեցէք ինձ, որ զայս «քան միայն կարացի հոգալ, զի հրամանաւ Սիանոփի գնացես ՚ի հայրենիս ՚ի գիւտ առողջութեանդ կամ օդափոխութեան աղագաւ։ Շատ «ցանկալի էր ինձ տեսաւորել ընդ Զեզ և խօսիլ «զապագայից, բայց չկարացի, առ այս Ներու «զութիւն, միայն խնդրեմ անգորը սրտիւ և ան «խոռվ մտօք անցուցանել զաւուրս, չափաւոր և «համեստ քաղաքավարութեամբ կենցաղավարել «ընդ մերձաւորաց և հեռաւորաց, անբամբաս «զնացիւք և բանիւք փառաւորել տացես զհայր «մեր, որ յերկինս»։

«Որովհետեւ ՚ի կարմիր վանս զանին եւ «պիսկոպոսական զգեստք, լաւ լինէր՝ թէ Էջմիածնապատկանն առաքէիր առ իս բառնաւ «լով զթոնթոր Վեհափառ Հօր։ Տեսանես զի

«հայրական սիրոյ իրաւումբ խօսիմ ընդ Քեզ, և «ոչ թշնամաբար։ Ասպա ուրեմն՝ խնդրեմ, ըզ «զրեալմն իմ կատարել և մնալ խաղաղութեամբ «՚ի Տէր»*):

Ստանում եմ ապա Գեղարդավանից վանահայր՝ բարեհնորհ Վարդան վարդապետից Սինօղի Դատաստանական մասնից նորա անուամբ յ30 հոկտեմբերի նոյն 1878 ամի ընդ համարաւ 2563 ներքոյեղեալ գրութեան պատմութիւնք։ «Ըստ որում որպէս տեղիկացաւ Սինօղս թէ՝ Սուքիս եպիսկոպոսն Պար «զեանց, որ զամանի այդք, ինողէ յաղագս ոդա «փոխութեան գնալ ՚ի հայրենիս իւր ՚ի նախիջևան, ծանուածիք նմա, զի չ'ը առ այն ար «գելք ՚ի կողմանէ Սինօղիս։ Անդամ Սինօղի «Գրիգոր վարդապետ, Առենաղպիր Ս. Թաղիանսունց, Գործավար Փ. Նաւասարդեանց»։

*) Թէ ի՞նչ էր Վեհափառ Հօր թոնթորն-տրտունջ, Էջմիածնապատկան զգեստների վերաբերութեամբ, ահա կը խօսի իմ յայտարարութիւնս յանուն Սինօղի սրբոյ Էջմիածնի ՚ի 18 հոկտեմբերի 1876 ամի ընդ համարաւ 108։ «Բնակչաթագավառութեամբ զառաջաղբութիւն տընտեսական մտին Սինօղիկ սրբոյ Էջմիածնի՝ զար «ձակեալն յ՛ այսը հոկտեմբերի ընդ համարաւ 2244, «որով ըստ հրամանի Վեհափառ Կաթողիկոսի ամեն «նայն Հայոց ծանուցանելով» թէ ՚ի հուց ժամանաւ «կաց հետէ սովորութիւն է, զի իւրաքանչիւր եպիսկոպոս պարտաւոր է պատրաստել յինքնէ վասն «իւր զեպիսկոպոսական զգեստս» պատուիրէ զա «թոռապատկան զգեստն ընդ գրութեան մերոյ փութով վերադառնուցիւր ի Սինօղդ»։

Գ.

Միամտութեամբ հոգւոյ կարօտալից ազդական-ներիս շըջանում և երբեմնապէս փոխադարձ այցելու-թեամբ բարեկամների, ծանօթների, մանաւանդ յաջորդ՝ բարեհնորհ Գրիգոր վարդապետ Տէր Ստե-փաննոսեանի հետ օրեր եմ անցկացնում, և ահա ստանում եմ ամենապատիւ Տէր Մակար Սրբազն Արքեպիսկոպոսի ներկայ գրութիւնն՝ արձակուած՝ ՚ի 6 Ապրիլի 1879 ամին:

Առ ներկայս առաջադրութիւն չկարեմք առանց «յիշատակութեան թողուլ զքանի մի ճշմարտութիւնս, «նախ գրէթէ ամենայն արքեպիսկոպոսունք և հայիսկո-«պատունք զտանիցնալք զարդիս յԱթոռդ սըրոյ էջմիած-«նի՛ որպէս ստուգիւ ՚ի վերայ հասեալ գիտեմք, չունի՞ «զմեպհական զգեստապատրաստեալս ծախիւք իւր-«հանց, պրօան և բազմամեայ ժամանակօք յառաջ ձեռ-«նադրեալք են քան զմեզ, և ոչ պահանջէ ՚ի նոցունց «զմնարդարութիւնն ՚ի գործադրել զաթոռապատկան «զգեստոն: Երկրորդ՝ որպէս յայտ է յառաջին պարբե-«ըութիւնէ պատասխանուցս ՚ի հնուց ժամանակաց «սովորութիւնն» յաւէտ վերապահի վիճակատէր ե-«պիսկոպոսաց, ՚ի թիւս որոց թերիս դասէ զմեզ վե-«հափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց, ստկայն և «յասմիկ տարբեր հանգամանք ժամանակի և թեմակա-«լութեան հպիսկոպոսաց Հայոց չկարելով զուգաձայ-«նել ընդ հնոցն՝ յորժամ վիճակաւորն Տէր Եր արդ-«եանց վիճակի և միայն յամի ամի տասանորդէր զար-«գիւնս իւր Հայրապետի և փոխարէն ստանայր ըդ-«տասանորդս ի քահանայից՝ որպէս ՚ի կանոնս հնոցն է տեսանելի, անբատիր զմեզ առնեն ՚ի գործադրելն «զաթոռապատկան զգեստս, ըստ որում արդիւնք

«Գերապատիւ Սուքիաս եպիսկոպոսի ՚ի «Տէր խնդալ. Շնորհաւորելով զտօն հրաշափառ «սրբոյ յարութեան Տեառն Յիսուսի՝ ծանուցանեմ «սիրելութեանդ, զի զգիր ողջունի Զեր ՚ի 22 «մարտի անցելոյ ընկալայ յ30 նորին, և ուրախ «եղէ յոյժ ընդ քաջառողջ գրութիւն անձինդ «պատուականի:»

*Հ 52
○ 60
○ 63
○ 60
-*

«վիճակին՝ ՚ի հոգս որոյ աքնիմք զօրհանապազ, ստա-«նայ սուրբ Աթոռն, իսկ մեզ մասն ելանէ ՚ի վեց հա-«զար բուրլեաց չափով եկամտիցն հինգ հարիւր ար-«ծաթ միայն, չ'հայեցնալ զի յայտարարութեամբք մե-«րով յանուն Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց՝ ՚ի 20 նոյեմբերի անցեալ և յ3 օգոստոսի ներկայ «ամաց թուահամարօք—63, խնդրեցաք յաւելուած «սունկի՝ ՚ի գէմս բերելով զանսխալ ստուգութիւնն, թէ «ուսանող մի (Կ. Կոստանեանց)՝ ՚ի հաշիւ արգեանց «վիճակիս ստանայ զիօշակ հաւասար մեզ: Երբորդ՝ «եպիսկոպոսական զգեստօք՝ ՚ի քաղաքս յայոկոյս Կով-«կասու չ'գտանին՝ ՚ի վաճառ բերեալք, յորոց հասր «լինէր ընարել կ գնել զյարմարաւորս՝ գէթ արգեամբք «եկեղեցեաց քաղաքիս, ապա առանձինն յասդնեգոր-«ծել ապսպարել պէտք են, և ում արդեօք, անդէտ, «անփորձ և բախտախնդիր անձանց, արարուած որոց «և գործոց անձաշակ խրթնութիւն՝ ունի շարժել ըզ-«ծաղը ազօթաւորաց՝ ՚ի պատարագեն և ներքել ըզ-«բարձր կոչումն առաքելական: Եւ Զորբորդ՝ ՚ի 14 «հոկտեմբերի անցեալ 1875 ամի ըստ քանիցս թա-«խանձագին յորդորանաց պարոն Ստեփաննոսի Դէ-«մերձեանց՝ ակնարկութեամբ Վեհափառ Կաթողիկոսի «ամենայն Հայոց, նուի իրաբերեցաք ձեմարանի սրբոյ Էջ-«միածնի միանուագ զմի հազար բուրլիս արծաթոյ, և «զի համաձայն խոստմանց Վեհապետեանց յետ ձեռնա-



«Յիրաւի հանապազորեայ նահատակութիւն
«է վասն իմ մնող անոք, անօդնական և անընկեր,
«զի չիք ինձ պատահօք խօսակից ոք, ոչ մտան-
«ող և ելանող և ոչ միաթարութիւն կամ յոյս
«բարեփոխութեան վատթար վարչութեան, ուրեմն՝
«մնայ ինձ անդրէն բացակայիլ ՚ի տեղուշէ առ-

«գըրութեան յեպիսկոպոսութիւն ունէաք գնալ ՚ի վի-
«ճակն Շամախոյ, ուր սոճիկը կրկին էին համեմա-
«տութեամբ Աղէքսանդրապոլու, այս է մի հազար
«ուրբի, որոշեցաք ՚ի տարիկան հասութից մերս՝
«վճար նոյն ծեմարանի գմի հարիսը յիսուն ուրբիս,
«և ըստ կրկնակրկին հորկադրանաց յայտարարու-
«թեամբ մատուցաք Կաթողիկոսի ամենայն Հայոց ՚ի
«նոյն թիւ ամսոյ գնոյն գումար ՚ի հաշիւ ներկայ
«1876 ամի՞ դորոյ հարապատ պատճենն մատուցանեմք
«՚ի բարենկատողութիւն Դորին՝ առ մեղ պահելով
«բնախարսակն ուղղարգեալ գրչով Վահրամ Սրբադան
«եպիսկոպոսի Մանկունիք Եթէ Ճեմարանն է Սրբոց
«Աթոռոյն սեպհականութիւն և ոչ անձին Կոթողիկոսի,
«արդէն ուռիբարերելով մօրն միրոյ Կաթողիկէ եշ-
«միանի զմի հազար հարիսը յիսուն բուրիս արծո-
«թոյ՝ արդար իրաւունու համարեմք մեղ գործադրել
«զաթուապատկան զգեստն, որ չ'արժէ առաւել քան
«զնարիւր արծաթիս»:

«Արդ ահաւասիկ՝ Սրբադան Հարք-Առենակալք
«Ախողի մերս պատասխանիք, եթէ Դոյնն և Վեհափառ
«Կաթողիկոսն ամենայն Հայոց անրաւական գտանիք
«վերոյթերեալ պատճառանօք՝ հաճեցարհւք նախ՝ դար-
«ձուցանել առ մեղ գ1150 բուղլին՝ որով և որոշել
«ընդ մայրն և ընդ որդին և ապա՝ պահանջել զաթո-
«ռապատկան եպիսկոպոսական զգեստն»:

«ար զիմելով ՚ի Բեսոարաբիայ մինչև ականել
«թէ զինչ ունիցի ժամանակն ծնանիլ»:

«Ինձ միակ միսիթարութիւն էր խոստումն
«Վեհին վասն յանձնելոյ զՁեզ իմում տեսչու-
«թեան, այլ յետոյ փոխեաց զբերանն ասելով թէ
«առանց զբաւոր կարգադրութեան Ախողի եթէ
«կամիս, տար ընդ քեզ զեպիսկոպոսն իրեւ զձեռ-
«նասուն Թու Ես զայսօրինուկ թոյլառութիւն
«Հառի յանձն զիտելով թէ այսու եղանակաւ
«Հունիցիք և Դուք յանձն առնուլ գալ զետ իմ:
«Ուրեմն՝ ինձ մնայ միայնակ ուղևորիլ ՚ի Բես-
«սարարիայ, և Ձեզ ամենայն երկանամութեամբ
«և անգորըութեամբ կալ մնալ ՚ի տան եղբացզ՝
«ալարապելով զբաւոր աշխատութեամբ և երբեմն
«այցելութեամբ մերձակայ վանօրէիցն Աստապա-
«տու և Երնջակու և ո՛չ այլոց հեռաւորաց: Զի թէ
«ճուղիվական է ստուարամարմին երկրագունդն,
«անուածուր է կառավարութիւնն աշխարհի, և մի-
«մեանց տեղի տուողը են յաշողութիւնք և ձա-
«խողութիւնք, ապա հաւատով իերուք, զի փո-
«փոխի ընդ փոյթ և Զիր վիճակ ՚ի բարին, եթէ
«միայն լուսկացութեամբ՝ ակնկալջիք անօրէնու-
«թեան Տեան Աստուծոյ, որում մնամ ամենախո-
«նարհ ծառայ»:

Սյու զրութեան նոյն ամի և ամսոյ 19-ին
այսպէս եմ պատասխանում: «Ամենապատիւ-

^{*)} «Լուսկացութիւն» բառն ինձ ակնարկում է կշմիած-
նի խանճապինթոր վարչութեան վերայ պագային լրագիրնե-
րում յօդուածներ գրելն, ինչպէս էր երեանից «Մեղուի»

«Սըբագնն Տէր, ընկալեալ զզրութիւն Տէլու-
«թեանդ՝ տուեալ 'ի 6 ամսոյս, երկիցս և երիցս
«ընթերցայ զտողս բանից գտեալ ի նմին և
«զարմացայ. «Ինձ միակ մխիթարութիւն էր, զրէք,
««խոստումն վեհին վասն յանձնելոյ զՁեզ իմում
««տեսչութեան, այլ յետոյ փոխեաց զբերանն
««ասելով՝ թէ առանց զբաւոր կարգադրութեան
««Սինօդի եթէ կամիս, տար ընդ Քեզ զեպիսկոպոսն
««իբրև զձեռնասուն Քո: Ես զայսօրինակ թոյլ-
««տուութիւն չառի յանձն, զփտելով՝ թէ այսու
««եղանակաւ չունիցիք և Դուք յանձն առնուլ
««գալ զիետ իմ»:

«Զգիտեմ որպիսի պայմանաւ էր խոստումն
«Վեհին վասն յանձնելոյ զիս Ձերում տեսչութեան,
«և յետ փոխելոյ զբերանն՝ որպիսի ինչ անպա-
«տեհութիւն համարեցաւ լինելն իմ ընդ Բարձր
«Սըբագնութեանդ, երբ քաջ գիտէիք, զի կա-
«թողիկոսն չունի բնաւին մոռանալ զյայտա-
«ըարութիւն իմ. իսկ ես յայսմհետէ դժուարա-
«նամ ուր և իցէ միամիտ հոգւով յանձն առ-
«նուլ զպաշտօն ինչ՝ քանի սպիք վիրացն 'ի
«սրտի են զերագոյն վարչի հոգեսր գործոց:
«Զգիտեմ, որպիսի ինչ գրաւոր կարգադրու-
«գրութիւնն լինէր Սինօդի վասն իմ, երբ չեք
«Սինօդ՝ ըստ բուն իւրումն նշանակութեան. երբ
«հանրածանօթ էր անարգար և բոնաւորական

1878 թուականի 34 համարում գրածս կալուածական խըն-
դրոց մասին, ընթերցողները գրքուկիս վերջին՝ իբրև յաւե-
լուած, կտեսնեն նոյն յօդուածը:

«վարումն նորին ընդ իս. և երբ լինելն իմ ընդ
«Ձեզ՝ իբրև զձեռնասուն, պատիւ մէծ բերէր
«Տեանդ և ինձ: Ըստ որում յետ մերժելոյ զիս
«Վեհափառ Հայրապետի 'ի ծառայութենէ ժո-
«ղովրդեան և փակելոյ առաջի երեսաց զզրումն
«վանիցն Սըբոյ էջմիածնի՝ Դուք ժողովէիք զիս,
«եթէ ոչ իբրև զանձն արժանաւոր, զէթ իբրև
«զնողնորսական ոք, զի մի յուսահատութիւնն
«աիրեսցէ իսպառ, և այս առաջինութիւնն տօ-
«նէր 'ի Ձեզ յամենայն ծանօթից և յանձանօ-
«թից: Իսկ ես՝ եթէ յաւուրն երիտասարդու-
«թեան Ձերոյ պիտանի էի, որպէս զառանին
«սպասաւոր, վերակացու և խօսակից, առաւել
«այժմն 'ի ծերութեանդ օգտակար լինէի 'ի տան
«բանիւ, զրով և հսկողութեամբ, և արտաքոյ
«փոխանակէի զպարտս Ձեր յեկեղեցւողջ, և այ-
«ցելութեամբ 'ի քաղաքս Բեսսարաբիոյ, յորս
«սակաւաւոր մերազգիք մէծ պէտս ունին քա-
«րոզչի և խրախուսողի արիմանալ 'ի զործո ու-
«սումնասիրութեան, կրօնասիրութեան և ազգա-
«սիրութեան՝ վերստին կողմնակի ձեռվ զսպա-
«սաւորութեանս ինուի զպաշտօն և փառաւոր
«առնէի զանուն Նօրդ, որով և առաջի խղճիս և
«որդիական պարտուցս ազատացեալ զտանէի:
«Եւ առաւել քան զայս կաթողիկոսն չկարէր
«առնել չնորհ Ձերդ Բարձր Սըբագնութեան և
«առարագըլոյս: Աներկըմլ զիտեմ՝ յցեղափո-
«խութիւն վատթար վարչութեան, Սինօդն եր-
«բէք և երբէք չկարէ շարունակել զկարգեալ

«քննութիւնն վասն արարմանց անդամոց հոգեոր կառավարութեան Հայոց Աղեքսանդրա-
«պօլու, ուրեմն և չունի յետ կոչել զիս: Իսկ
«Վեհափառ Հայրապեան՝ եթէ երբէք յանձնել ու-
«սիցի ինձ զիմակ, արտաքայ սահմանաց Թու-
«սիոյ ՚ի Պարսկաստան կամ ՚ի Դավրէժ առա-
«քեսցէ իբրու ՚ի մշտնչենաւոր աքսոր, յորո
«երբէք չկարեմ զնալ՝ թողեալ զսակաւիկ
«պատասն հանգստութեան, թէն այսպէս ձայն
«և ասպարէզ տուեալ լինէք ինձ գործով ապա-
«ցուցանել զտարապարտ հալածանո իշխանու-
«նութեան: ՚ի մերջոյ, եթէ ներկայութիւնն իմ
«Զեղ ոչ զմխիթարութիւն ընտանի խօսակցի
«պատճառէր ՚ի տնակացութեան ժամանակս և ոչ
«զիւրէք զաշխատանսն ՚ի գործանութեան, զն-
«նէ պաշտպանէք զպատիւ կոչմանո և զմեծ
«համարումն անձին Արբանութեանդ, որ զա-
«նուն Հայրութեան հաճեցայք զնել լիմ վերայ
«ի պատանեկան տուրցո: Առաւել մխիթարա-
«կան է ինձ և վայելչական՝ որպէս անձն հոգի-
«որական, ՚ի տան Հոգեւոր ծնողիդ լինել քան
«մարմնաւոր եղբարցո»:

«Անկեղծ ճշմարտութեամբ արտայայտեալ
«զսիրտ և զհամոզմունս իմ ուրախանամ ընդ
«քացակայութիւն Տեառնդ ՚ի գրիաց մօրն լուսոյ՝
«որ շնորհիւ հօրուի զհարապատ ընդ հազարա-
«մինմ յԱստուծոյ՝ հրեշտակի խաղաղութեան
«յանձն առնել զմանապարհորդութիւն Զեր և

«ընդ երկայն առուրս տալ վայելել զհովիւդ բա-
«րի ՚ի յարդանս և ՚ի ճշմարիտ ակնածութիւնս
«հօսին, յորոյ վերայ զնովանին ունի տարածանել
«զովարար անսչականն Զեր գաւաղան, և մնամ
«երկայնամութեամբ և մեծաւ անդորրութ-
«եամբ անօրէնութեան Տեառն Աստուծոյ վասն
«մթնշաղ ապագայիս»:

¶.

Այս զրաւոր փոխանակութիւններից յետոյ հե-
«ռագիր եմ ստանում Սըբազան Մակար Արքապիսկո-
«պոսից շուտով Երեան զնալ և իւր հետ ուղեկցիլ
«Բեսսարաբիոյ Քիշնի քաղաքն: Տփխիսում ծանօթ և
«բարեկամ անձնաւորութիւններ՝ անմեզութեանս և
«տարապարտ զրկանացս վկաչելով հանգերձ, ինձ խոր-
«հուրդ են տալիս և յորդոր կարգում, ՚ի սեր հոգի-
«որական կոչմանս՝ որ հաստրակական շահուց ծա-
«ռայութեան համար ինձ տրուած է, կամաւոր զի-
«ջումն առնել, ինայել Հայտատանեայց եկեղեցւոյ
«Հայրապետութեան նշխարեալ իրաւանց և զղջումն
«յայտնել Կաթողիկոսին: Յուղեալ սրտով կրածո գառ-
«նալէտ դէպքերն համառօտմ եմ շատերին, յիշնում
«եմ մի առ մի Երեանի Նահանգապետի հետ՝ թարգ-
«մանութեամբ պարսն Բագրատ Նաւառարկեանցի,
«տեղի ունեցած խօսքերն և բացէ ՚ի բաց հրաժարելս՝
«զրաւոր ծանօթութիւն տալ եղելութեանց մասին
«Բարձրագոյն քաղաքական իշխանութեան՝ առարկե-
«լով առ Նորին Գերազանցութեան առաջարկութիւնն:

«Սինօդում նստած պետութեան կողմանէ օրի-

«նապահ կարգուած Պրօկուրօրն արդէն իւր
առուած դատողութեամբ ապօրինի համարելով
«Սինօդի բոլոր իմ մասին նշանակած պատիժ-
«ներն՝ խնդրած է դադար տալ իմ հալածանացս.
«Երբ նորա բողոքոյ վերայ պատշաճաւոր իշ-
«խանութիւնն, որից չ'էր կարող ծածուկ մնալ
«և ոչ մէկ բան, չ'յօժարեցաւ ուշադրութիւն
«դարձնել, ես իմ անմիջական տեսչութեանս
«վերայ ուղղակի բողոքող լինիլ ուր և իցէ բնա-
«ւին չ'եմ կամենում: Վարուեցէք ինձ հետ ինչ-
«պէս կ'կամենաք. բարոյական ուժի դէմ չ'եմ
«ընկճուած, զինուորական զօրութեան դէմ ոչ
«հնար ունիմ ոգորելու և ոչ դիմադրելու»: Եւ
այս կրկնութիւններն նորա համար միայն, որ կարո-
գանամ հաւատացնել բարեմտութեամբ գայթակու-
աններին, ըստ որում խղճմտաւոր մարդիկ յաջողել
էին արդէն լուրեր տարածել՝ իրը թէ քաղաքական
ատեանների դիմած եմ:

Գնացի Քիշնե, չնորհիւ Սրբազնորդի
բարեկթութեան՝ վայելում էի հոգեոր անդորրու-
թիւն և կենցաղական ամենակերպ զիւրութիւնք. ոչ
մի բանում կարօտ չ'զգացի. ամենայն զրկանք և ար-
համարհնք հոգեոր ծնողիս գորովանաց մէջ լուծու-
ած և չ'քացած տեսայ: Անհրաժեշտ հարկից ստի-
պուած Տէր Վիճակաւորն՝ 1880 թուականի վետ-
րուարի 19-ին, օրհնութեան գրով՝ միջոցաւ Պետրոս
եպիսկոպոսի հաճութեամբ կաթողիկոսին, զիս նոր-
նախիջնան ուղարկեց ժողովարարութիւն առնել նոր
առաջնորդարանի շինութեան համար. ըստ որում

Քիշնեի կալուածոց արդիւնքը եջմիածին գնալով յօ-
զուտ Ճեմարանի՝ ուրիշ ոչ մի կերպ հնար և դրամ
չ'կար վայելուչ բնակարան ձեռք բերելու: Ամենայն
սիրով յանձն առի այս առաջարկը. բեմբասացու-
թիւններ ունեցայ տեղւոյն եկեղեցիներում, մի ան-
գամ ևս սուրբ պատարագ մատուցի՝ Խալիսկեան
Դպրանոցի աշակերտաց հրաւիրանօք-Գաբրիէլ Սրբա-
զան Սրբեպիսկոպոսի հոգեհանգիստ կատարելու, որի
մասին թէ հայ և թէ սուս լրագրներում ծանօթու-
թիւններ տպագրուեցան: Ծանօթացայ մէկ քանի
զարդացած և սւեալ անձանց հետ, որոնք լրագրա-
կան հրատարակութիւններից տեղեակ լինելով ինձ
հասած անիրաւութեանց՝ նորա ևս օգուտ չ'համարե-
ցին այնպէս ընդ երկար անգործ մնալ: Ամենից աւե-
լի մեր չնորհարան աղղային բանաստեղծն՝ իւր տե-
սակցութիւնները վեհափառի, Մանկունու, Սինօդի
սնդգամոց և այլ աղղեցիկ անձնաւորութեանց, Տրփ-
խիսի, Երեանի, Աղեքսանդրապոլի և Ախալցխայի երի-
տասարդների հետ պատմելով՝ իրեւ հասարակաց կար-
ծեաց թարգման, հարկադիր սիրոյ խօսքերով պահան-
ջնում էր խօնարհիլ, հաւատացնում էր կաթողիկոսն
ևս հակամէտ է ՚ի հաշտութիւն, բայց առաջին քայլն
ինձ կապատկանի առնել, որպէս հոգեոր զաւակ և հն-
թագրեալ:

Ե.

Նուիրակութեանս պաշտօնը յաջողութեամբ
կատարեցի, դարձայ Քիշնե, նոյն անգորը և խաղաղ
կեանքը ժպատաց ինձ. օր ըստ օրէ բարուց խստու-

թեան սառնամանիք կարծես սկսում էին տեղիք տալ
բարեկամների յորդորական սիրախօսութեանց և առա-
տանում էր ինձանում զութ և կարեկցութիւն առ
Սրբազնագոյն Քահանայապետը, թէև մէկ ներքին
թովմայականութեան ձայն ինձ յետ էր պահում վըճ-
ռական քայլ անելուց: Այս անհաստատութեան մէջ
մինչդեռ ես գանդապում վարանում եմ, առել ար-
գեօք կաթողիկոսին զրով մեղայ, ինչ նետեսմաք կու-
նենայ այդ փոփոխութիւնն, 'ի սրտէ ներտ մն կ'լինի,
կ'մոռացութին ամենայն տիրուք պատահարներն. և ահա
ստացաւմ է Տփխիսից պարու Պետրոս Սիմէօնեանցի
նամակը յթ օգոստոսի 1881 ամի Գերագութիւն Ա-
ռաջնորդի անուամբ, որոյ մէջ իմ մասին յետադայ
տողերս կան:

«Ինչպէս երկումէ Վեհարանը ճգնաժամի
«մէջէ և իւր Վարչական գործերի համար էլ
«մարդիկ չունենալու պատճառով: Երեք օր
«յառաջ Սեղրակ Մանդինեանց եկաւ էջմիածնից,
«ուր գնացել էր իւր պայման կապելու՝ համար:
«Նորա ըերանով Մանկունին (ուրեմն Վեհա-
«փառը) ապագարել էր ինձ, որ ես միջնորդ
«լինիմ և յորդորելով զրեմ Զեղ և Սուրբիան
«Սրբազնին, որպէս զի սա մեղայական զրէ
Վեհափառին, որ ամենայն ուրախութեամբ կը-
«ցանկայ նորան գործունէութեան ասպարէզ
«բանալ պաշտօն տալով, նոյն զգացմունքն ու-
«նին և Սարդիս վարդապետ Տէր-Գասպարեանցի
վերաբերութեամբ: Ինչ կ'մնայ ինձ, ես կարծում
«եմ, որ Սուրբիան եղբայրս չունի պատճառ

«մեղայ գալու՛ իւր արդարութեան համար:
«բայց եթէ Զեր Սրբազնութիւնն ու նա լաւ
«կ'համարէք այդ ընդհանուր զործի համար՝
«Դուք գիտէք: Հոգեոր վարչութիւնը յետին
«առորութեան հասած է ամենուրէք այս կող-
«մերս:

«Դուրանից յետոյ հանումէ Սուրբ Էջմիածնից
Գերագութիւն ներսէս եպիսկոպոսի յժ-ն նոյն ամսոյ
և ամի գրութիւնն յանուն նոյն թեմակալին, ուր իմ
մասին սոյն խօսքերն են զրուած: «Յաւուրս այսո-
սիկ՝ ի խօսակցութեան ընդ Վահրամ եպիսկոպոսի,
ասաց նաև թէ «շատ անձինք միջնորդեն զՍուրբիաս
«եպիսկոպոսէ առ Վեհն, առ որ և նա ցանկայ
«ներել նմա, բայց լսուէ, եթէ զրեսցես նմա, զի
««միով մեղայական թղթով զիմեսցէ նորին
««Սրբութեան խնդրելով զմազութիւն» իսկ ես
««ճշմարիտն ասեմ, չվստահացայ ուղղակի զրել
ինքեան, այլ Սրբազնութեանդ զրելով՝ կամե-
ցայ Զեօք իրազեկ առնել նմա զմիտս նոցին:
«Այսպէս և Յակովը աւագ քահանայն Սուրէն-
եանց ինքրեաց զՍարդիս վարդապետէ, նմա
«ևս պատասխանեցին մեղայական թղթով զիմել:
«Ճակաւին չզիտեմ, թէ Սարդիս վարդիս վարդապետն
«համաձայնեացի՝ արդեօք տալ թուղթ մեղայա-
«կան՝ թէ ոչ և զի՞նչ նշանակէ մեղայականն,
«չկարեմ հասկանալ»:

Զդիտեմ, Սրբազն ներսէս եպիսկոպոսին
Բնչ է պատասխանում Տէր վիճակաւորը, միայն պա-
րուն Պետրոս Սիմէօնեանցին օգոստոսի 22-ին ծա-

«գրուած է, թող, մէկ քանի օր սպասենք, սու-
«կաւ ինչ բարեփոխենք, և ապա ուղարկիր»:

Շաբաթական միջոցը իմ միտքս չ' կարո-
դանում փոխել շրջել գէպի բարեփոխութիւնն
անգամ, «թող՝ ի սրտէ լինի զզջումն պնդում եմ,
«որպէս զի ՚ի հոգւոյ լինի և թողութեան օր-
«հնութիւնը»:

Այս, ինչ որ Արարատ ամսագիրն 1881 թու-
ականի հոկտեմբերի տետրակումն ամբողջութեամբ
չ' բատարակած ժամանակն անգամ, գութ ու գո-
րով ունեցող, պատոյ զգացում ճանաչող և մարդ-
կային կոչման արժանիք գիտեցող մարդիկ սոսկու-
մով ասում էին. «մինչև այդ աստիճան անարժան
կիրք ամօթ էր», առանց կարմրելու կրկին ես ինքս
հրատարակում եմ իմ ի 14 սեպտեմբերի նոյն ամի
ստորագրած և ցայսօր անմոռաց աչցց յառաջ ու-
նեցած մեղայականն: «Զերդ Արքազնակատար Օծու-

«թիւն, Աստուածարեալ Հօտապետ. Երջանիկ
«զանձն համարէի՝ Վեհափառ Տէր, յորժամ ընդ
«հովանեաւ Հովուապետական գաւազմանի Գերա-
«գոյն զլիսոյդ Հայաստանեայց առաքելական
«սուրբ եկեղեցւոյ իմովսանն սպասաւորէի իրիք
«իրիք հոգևոր պիտոյից ազգին համաձայն նու-
«իրական ուխտի կոչմանս: Այլ՝ որպէս սովո-
«րական ՚ի կենցաղումս են ձախողակի գէպը՝
«վրիպեցուցիչք յընթացից գործոյն, նոյն և ինձ
«պատահեցաւ իբրև անփորձ անձին, որ ապա-
«տան եղեալ ՚ի կարծեցեալ իրաւունս իմ, բա-
«նիւ և գործով անհնազանդ գտայ առ հրամանս

նուցանումէ. «Սուքիաս եպիսկոպոսի մասին ինձ ևս
«առաջարկութիւն եղաւ դեռ յէջմիածին, բայց
«ես չ' կարողացայ առ այն ստիպել եպիսկոպո-
«սին. այժմս լինում են նոյնպիսի առաջարկու-
«թիւններ թէ Զեր և թէ այլոց միջոցաւ: Ար-
«գարե, եթէ Սուքիաս եպիսկոպոսի, ինչպէս և
«ամեն հոգեսրականի նուիրական պարագն է,
«հասաբակաց ծառայութեանը նուիրուիլ, ես
«կարծում եմ, ովքաք է որ անձնականը փոքր
«ինչ զրկուած և զոհաբերուած լինի յօդուտ և
«՚ի սէր հասարակականին: Տեսնենք այս մասին
«ինչ հոգացողութիւն ձեռք առնել ցոյց կ'առան
«հանգամանքներն»:

Վերոյրերեալ եղելութիւններից յետոյ՝ մէկ օր
Գերապատիւ Առաջնորդը սրաւաշարժ ձեռվ ինձ նըկա-
րագրումէ Եբբայական ժողովրդի պատմական կեան-
քից Դաւթի առ Սաւուղ անյիշաշարութիւնքը. Առ-
տուծոյ օծելոյն բարձր նշանակութիւնքը, ննազան-
դութեան ամենատեսակ զոհողութիւններից գերազան-
ցութիւնը. Գէորգ Կաթողիկոսի՝ համեմատութեամբ
իւր նախորդների, ազգաշէն գործողութիւնքը, և յան-
ձնումէ մտածել եղանակ նորա հայրական օրհնու-
թեան արժանաւորելու: Շատ աջողակ կշռուած էր
հարուածն. սիրտ շարժում է: Դառնում եմ սեն-
եակս, արտասուախառն զրում եմ մեղայականիս նա-
խարաւակն, մատուցանում եմ ՚ի նկատողութիւն: Գո-
րովասիրտ և խորագէտ անձը փոքր ինչ տհաճութիւն
ձեացնելով՝ «շատ զիջողութիւն ես արել, ասում է,
«մեր խօսակցութեան տպաւորութեան տակ

«մնծի Քահանայապետիդ, ուստի և զրկեցայ ՚ի «բաղդալի շնորհաց Հայրենի խնամոցդ։ Զարդիս «զփորձ առեալ յանցաւոր սխալանաց»՝ ըեկեալ «սրտիւ և խնամքեալ զիմօք զամ ընդ անտուակին որդւու զոչել։ «Հայր մնզայ յերկինս և առաջի Թո»։ տարածանել առ պատուանդանաւ «Աթոռոյ շնորհաց գթառատ Հայրապետիդ զսրբ-«տազին զղումն և զապաշտանս իմ ընդ հրապարակական անհնագանդութիւնս Ձերոց բարե-«բար ազդարարութեանց և ամենահպատակօրէն «հայցել զթողութիւն յանցանացս»։

«Ասրին ակնածութեամբ մատուցեալ ՚ի «համբոյր սրբանեալ աջոյ Հոգեոր ծնողիդ իմոյ, «Քահանայապետ մեծ, կամ և մամ տիրական «այցելութեան։ Ձերդ Սրբազնակատար Օծու «թեան ամենախոնարհ ծառայ և որդի Սուքիաս «եպիսկոպոս»։

Իսկ թէ ինչ պատրաստակամութեամբ ընդունուց իմ առ ՚ի սրտէ մեղայականս Նորին Սրբութեան կողմանէ, անա Մանկունի եպիսկոպոսի նամակի օրինական առ սրբազնն Առաջնորդն յշ հոկտեմբերի նոյն ամիւ։ «Գերապատիւ սրբազնն Հայր, Տէր Մա-«կար Սրբեապիսկոպոս. Յետ առեսելոյ իմոյ հեռապրաւ Ձեզ յուրախութիւն զներելոյ Վեհա-«փառ Հայրապետի ամենայն Հայոց Սուքիաս ե-«պիսկոպոսի Պարզնանց, յաւուր՝ յորում ընկա-«լաւ զմեղայտդիրն և ես հեռապրեցի անմիջա-«պէս, փութամ յաւելուլ և զներկայ գրութիւն «իմ ՚ի պատասխանի յարդելոյ զրութեան Պերա-

«պատուութեանդ, որ ՚ի 14-էն սեպակմբերի, «զի որպէս Սինօդն հրամանազրեաց Ձեզ այսօր-«եամն սուրբանդակաւ, ըստ հրամանի Վեհա-«փառ Հայրապետի ազգիս, կարէք յետ այսորիկ «ունել Ձեզ յաջակից զՄուքիսս եպիսկոպոսն «ուր և որպէս կարեսր և հաճոյ իցէ Ձեզ, և զի «համբարինթաց գրութեամբ Ձերով յայտնէիք ինձ «զանհրաժեշտ կարօտութիւնդ աջակցի միում, «ահաւասիկ կարէ Պարզեանցն լրացուցանել ըզ-«պէտսդ»։

«Մանկունիէն ակնարկուած Սինօդի հրա-«մանն այս է։ «Հրաման Նորին Կայսերական «Մեծութեան ինքնակալին ամենայն Ռուսաց ՚ի Շուստուրչական Հայոց Սինօդէ Սրբոյ Էջմիած-«նի, վիճակուոր Առաջնորդին Նախիջեանի և «Բենուարաբիոյ Գերապատիւ Մակար Արքեպիս-«կոպոսի։ Ըստ հրամանի Նորին Կայսերական «Մեծութեան ՚ի Սինօդին լուան զմեղայական «Սուքիաս եպիսկոպոսի Պարզեանց՝ ՚ի 14 սեպ-«օւնթերի տարւոյս յանուն Վեհափառ կոթողի-«զիկոսի ամենայն Հօյոց, որով ինոդէ Ներել «յանցանացն։ Ի լուսանցի վերոցիշեալ մեղայա-«կանին Նորին Վեհափառութիւնն արտեալ է առօրինակ մակագրութիւն։ «Ընթերցեալ զայս ««մեղայազիք զղման և ապաշտանաց Սուքիաս ««եպիսկոպոսի Պարզեանց՝ որ վասն յանդուզն և ««ըմբռստ զնացից իւրոց և անհնապանդութեանն ««ընդդէմ եկեղեցւոյ, Հայրապետական հարձը իշ-««խանութեան և հրամանաց, ընկալեալ հաճու-

« «թեամբ զսրաառուչ խոստովանութիւնն ապա-
« «շաւանաց ներեմք յանցանաց սորա հայրաբար
« «ըստ քրիստոնէական սուրբ պարտաւորութեան
« «և պատուիրեմք Սինօդիդ հրամանագրել Գե-
« «րապատիւ Մակարայ Արքեպիսկոպոսի թեմին
« «Հայոց Նախիջևանու և Բեսսարաբիոյ, զի թոյ-
« «լատրեսցէ սմա յետ այսորիկ կատարել զհո-
« «գևոր պաշտօն ՚ի սուրբ եկեղեցւոջ մերում,
« «յանձնեսցէ սմա զյարմարաւոր ինչ պաշտօն
« «՚ի վիճակի իւրում, կամ կարգեսցէ փոխանորդ
« «Նոր-Նախիջևանի, միանգամայն առաջադրեմք
« «վախճան դնել ամենայն գործոց սորա»: Հրա-
« «մայեցին. զվերոգրեալ մակագրութենէ Վեհա-
« «փառ Հայրապետի ծանուցանել Գերապատու-
« «ութեան Զերում վասն տեղեկութեան և պատ-
« «շաճական ՚ի կողմանէ Զեր տնօրէնութեան:
« «Իսկ գործոյն Սինօդիս կազմեցելոյ վասն ան-
« «հնագանգութեան Սուքիսս եպիսկոպոսի տու-
« «եալ վաղճան՝ համարել աւարտեալ յաղագս
« «տալոյ յիւրումն ժամու ՚ի դիւանն ՚ի պահ: յ30
« «սեպտեմբերի 1881 ամի ՚ի սուրբ Էջմիածին:
« «Անգամ Սինօդի Ներսէս եպիսկոպոս. Գործա-
« «վար Փ. Նաւասարդեանց. թուահամարաւ 2450»:

Զ.

Սոյն այս հրամանի հիման վերայ կարգուեցայ
առաջնորդական փոխանորդ Նոր-Նախիջևանում, ուր
մի և կէս տարի ժամանակ թէ ի՞նչպէս կառավարեցի
իմ փոքրիկ հօտս, ինձ չի պատկանիլ ասել: Նախի-

ջևանն մեր այլ գաւառուական քաղաքներին չի նմանի
իւր բնակիչ ազգայնոց զարգացմամբ, բարւոյ և չտ-
րի ընտրութեամբ և ծառայողին գնահատելով. տեղ-
ւոյն բարեմիտ ժողովրդեան կ'թողում վերջին առ
կենդանութեամբ մեծի Բարունապետին արածս սպա-
սաւորութեան մասին յայտնել կարծիք: Սակայն այս
հարկ կ'համարիմ ասել՝ որ հոգեոր Բարձրագոյն իշ-
խանութեանս հաճոյ լինելու գժբախտութիւնն ու-
նենալով՝ ստացայ Նախիջևանում պարգև եպիսկոպո-
սական պնակէ՝ Գերապատիւ Վիճակաւորի 1882 ամի
հոկտեմբեր ամսոյ 25-ին ընդ համարաւ 261 սոյն
պաշտօնական գրութեամբ. «Առաջնորդական Փոխա-

« «սորդի Վիճակին Հայոց Նոր-Նախիջևանի՝ Գե-
« «րապատիւ Սուքիսս եպիսկոպոսի: Վեհափառ
« «Հայրապետն ազգիս յաւուր տօնի անուանա-
« «կոչութեան իւրոյ բարեհաճեալ է շնորհել Սըր-
« «բաղնութեան Զերում զանակէ եպիսկոպոսա-
« «կան՝ պատուիրելով Գերապատիւ Վահրամ ե-
« «պիսկոպոսին՝ առաքել զայն հանգերձ արծա-
« «թեայ սոկեզօծ շղթայիւ առ մեզ վասն յանձ-
« «նելոյ Զեզ կրել ըստ պատշաճին: Զայս քաղցր
« «պարտաւորութիւն սիրով կատարելով՝ ընդ
« «սմին առաքեմք առ Գերապատուութիւնդ ըզ-
« «պարզեն զայն Հայրապետական և մնամք առ
« «Զեզ բարեհաճ»: Բացի այդ ընծայարերութիւնը
ստացայ և Ծայրագոյն Հօտապետի օրհնութեան կոն-
դակն՝ արձակուած նոյեմբերի 8-ին: Իսկ թէ որ
համարով և ի՞նչ բովանդակութեամբ, այդ ստուգել
թողնում եմ նոցա, որոց մատչելի է վեհարանական

գրութեանց նախարարակները հետազօտել և սկագրութեանց ինքնաձեռագիրներն ընտրել։*

Այսպէս, ամաչելով վերև դրուած անդրբրիստուսեան նզովից կոնդակին իբրև զուգակշիռ զետեղել հայրական օրհնութեամբ լի վերջին հովուականը, որպէս զի առաջին հազուագիւտ պարգևագիրը չկորուսնէ իւր արժանաւոր փայլն ու ճաճանչ, խորին խոնարհութեամբ ծանուցանում եմ որ զիս Աստըրախանայ և կովկասու վիճակի ժամանակաւոր կառավարիչ նշանակել է Սրբազնն Սինօդը՝ հրամանով՝ ի 14 յունուարի 1883 ամի ընդ համարաւ 53, մինչդեռ Մակար Սրբազնը ոչ աեզապահ էր և ոչ էջմիածին՝ որ իմ կեղծ առաջնորդութիւնը յաջողէր, այլ տակաւին Քիշնէ էր: Ահա պատմական ապացոյց ճշմարտութեանս, որ ամենապատիւ Տեղապահը՝ նոյն տարուայ վետրուարի 19-ին, Նախիջևան համանելով Բեսսարաբիայէն՝ որ երթայ Սուրբ Աթոռ Պետութենէն որոշուած Սինօդի Ատենապետութեան վորանորդի պաշտօնը կատարելու, ազգայնոց առաջաւորներն՝ առաւելապէս թեմական Դպրանոցի հոգաբարձուք, ինզրում էին ինձ թողնել այդ տեղ, որպէս զի իմ ջանիւք գլուխ բերուած նորաբաց և նորահաստատ Սուրբ Հռիփսիմեան ուսումնարանը և Հայ-

*Յատուկ ինձ շնորհուած կոնդակի հետ ստացայ և Նորին Սրբութիւնից օրհնութեան կոնդակ մեծապատիւ բժիշկ Գէորգ Տիգրանեանցի անունով՝ որին յայտնում էր գոհունակութիւն իւր յանուն ճեմարանի 40,000 ոռութիւն նուիրաբերութեան մասին, որոյ թելադիր սկզբնապատճանն էս էի նորահաստատ իւրանզութեան ժամանակ:

ուհեաց ընկերութիւնը ներկայութեամբս հաստատութիւն գտնեն, և ստանում եմ պատասխան թէ՝ «Ես Բեսսարաբիոյ վիճակի առաջնորդութենէն դեռ «Ես արձակուած չ'լինելով և կոնսիստորիայում «մարդ չ'ունենալով, Սրբազնն Սինօդի տնօրէնութեան մասին երբէք ծանօթ չ'եղած, Սուրբիաս եպիսկոպոսին թողել եմ վիճակում, որ «Երթայ Քիշնէ և առ ժամանակ կառավարէ: «Բայց որ դուք նորա ներկայութիւնը կարեսոր «Եք համարում, բարի է, կ'թողում այս տեղ և «միինոյն ժամանակ կ'յանձնեմ կառավարել բու «լոր վիճակը»: Այս բարեհաճութեան համաձայն պահանջեցի Քիշնիի կոնսիստորիայէն՝ առաջադրութեամբ՝ ի 23 վետրուարի համարաւ 1, ամենայն փօշտայով պաշտօնական թղթերն ինձ ուղարկեն, նորանց կատարողականը նշանակեմ և վերապարձուցանեմ, լսու որում աեզափոխուել չ'եմ կարող գոնէ առ ժամանակ՝ ինչպէս թեմական Ատենապետ հաղորդագրութեամբ՝ ի 12 նոյն ամսոյ ընդ համարաւ 537, Սրբազնն Առաջնորդի նախկին անօրէնութեան մտօք պահանջում էր:

Համար ով հանեց Վեհափառի գործերից իւր իսկական կոնդակն՝ եթէ ոչ Մակար արքեպիսկոպոսն. թող խօսի գրաւոր ապացոյցը. «Գերապատիւ Սրբազնն Հայր, երբ հանգուցեալ Կաթողիկոսի թղթ՝ «թերն և կոնդակներն կարդում էին, յանկարծաչքովս ընկաւ այս անիծեալ (ոչ օրհնեալ) «կոնդակն, որի պատճէնը ահա ուղարկում եմ «Հայրութեանդ, Որքան որ մեր Սինօդի գոր-

«ծերին հետաքըբիր եղայ և ման եկայ՝ այսպէս
«կոնդակ չ'է մտած. այս ի՞նչ խարգախութիւն
«է, (ոչ, Հօտապետական կարգադրութիւն է)
«չ'եմ հասկանում: Թող մեր Մակար Սրբազնը
«նորա չարահոգի (ոչ բարեհոգի) մարդոցն
«պաշտպան հանդիսանայ. : Միթէ այս տա-
«նելու բան է (ահա տանում եմ): Սորա հետ
«առայս եմ ծանօթութիւն թէ՝ հիւանդութեանս
«պատճառաւ ամսոյս 16-ին ուղերելու եմ Տըփ-
«խիս մի ամիս ժամանակաւ, եթէ նամակ գը-
«րելու լինիք՝ ուղղակի Տիկիս գրեցէք: ՚ի 11
«օգոստոսի 1883 ամի ՚ի Սուրբ Էջմիածին,
«մհամ Սրբազնութեանդ միշտ յարգող և մտերիմ
«Երեմիա եպիսկոպոս»:

Բաւական չ'է Գերապատիւ Երեմիա եպիսկո-
պոսի վկայութիւնն. ուրեմն յառաջ բերենք այս տեղ
և երկու հատուած սրբազն Արիստակէս եպիսկոպոս
Սեղբակեանի նամակիցը՝ գրուած 1883 թուականի
գեկտեմբերի 18-ին, որովք ասումէ, — «Գերապատիւ
«Սրբազն եղբայր. երեք նամակին էլ ստացել եմ
«և յայտնում եմ Ձեզ ՚ի միամտութիւն: Ինձ
«տիրացրեց նոյեմբերի 29-ին գրած նամակին,
«որ յայտնում էր Ձեր տիրապին միայնութիւնը.
«Երբ արդեօք Հաժդերխանի սառած, ցամքած
«հայերը պիտի ջերմութիւն զգուն իրանց ե-
«ղակների մէջ. Երբ պիտի հայ արիւնը միւս
«անգամ զըջան առնի նոցա սրտերի մէջ և նոքա
«իմբուեն իրանց զործունեայ, եռանդուն ա-
«ռաջնորդի շուրջը և միմիթարեն ու սփոփեն

«նորան, աջակցեն նորան»: Ձեզ արդէն Երեմիա ե-
«պիսկոպոսն ուղարկել է պատճէնն այն կոնդակի,
«որով յիշատակամեռ Վաթուղիկոսը իրը հետեւալ,
«իրը հերձուածող, իրը անաստուած էր կամե-
«նում հրատարակել Ձեզ: Արդեօք, եթէ յաջողի
«ինձ Էջմիածնի միաբանութեան անցեալ և ներ-
«կայ տիսուր և միանգամայն ցաւալի գրութեան
«վերայ մի քանի խօսք ասել փոքրիկ տեարա-
«կով, Դուք իրաւունք կտայիք ինձ և այդ կոն-
«դակի պատճէնը, որ ունիմ, մէջ բերել. և ցոյց
«տալ, թէ նոյն իսկ սրտեռանդ ծառայող և
«արդիւնաւոր մի եպիսկոպոսի վիճակ մինչեւ
«որ աստիճան կարող էր խաղալիկ լինել մի
«անգղամ Մանկունու կամայականութեան և
«զայլութի, սորանից էլ եղբակացնել տալ, թէ
«ի՞նչ կարելի էր և կարելի է պահանջել մի մի-
«արանութիւնից, որ չունի որոշած պարտուց և
«իրաւանց սահման, որի պատիւն էլ կեանքն էլ
«միշտ ոտնակուն են եղած այս կամ այն բռնա-
«ւորից, և այն»:^{*}

Երեմիա և Արիստակէս Սրբազն եպիսկոպոս-
ներից յետոյ, որպէս զի վկաների թիւն երեք լինի,

*Ահա թէ ի՞նչ ենք պատասխանել դոյն առաջարկին նոյն
ամսի 31-ին. «Գերապատիւ Սրբազն եղբայր, ինձանից
«իրաւունք էր ինդրում «յիշատակամեռ» Դէորդ կա-
«թողիկոսի իմ վերաբերութեամբ գրած, բայց Սինօդին
«չ'յանձնած-ինչպէս հաւատացնում է Սրբազն Երե-
«միա եպիսկոպոսը, կոնդակի պատճէնն հրատարակեր
«եթէ յաջողի Ձեզ մէկ տեարակով խօսել Էջմիածնի
«միաբանութեան կրաւորական վիճակի վերայ»:

լունք և Գերապատիւ Ներսէս Եպիսկոպոսին, որ
հետեւը 1884 թուականի փետրուարի 22-ին, յետա-
գայ հանգամանքներն է պատմում. «Տեղեկացայ և
«այն եղելութիւնքը՝ որ Մեղուի միջոցաւ հրա-
«տարակուած էր. զիտեմ՝ թէ Զեղ վիշտ պատ-
«ճառած կլինի. այնպիսի ստոր միջոցների դի-

«Յայտնի բան է, բնաւին տարակնյա չնւնիմ» որ
«ազգի մէջ գտնուած բարեմիտ անդամոց գութ և կա-
«րեկցութիւնն կ'շարժի այդպիսի մի հրատարակու-
«թիւն, ինչպէս անդործադիր կոնդակն է, սակայն
«չե՞ն գտնուիլ այնպիսի խղձամեններ ևս՝ որոնք.....
«Գէորգի դամբարանն ՚ի վեր քան զամենայն սրբու-
«թիւն պատուելով՝ վերստին լրագրական խնդիր չը-
«դարձնեն այն դժբաղդ գէպքն՝ որ վերջին ծայր անի-
«բաւութիւնից ստիպուած տեղի ունեցաւ, և զիս այն-
«քան տարապարտ չարչարանքներէն, վատանունութե-
«նէն յետոյ բոլորովիմք համոզեց՝ որ շատ վաղէր մէր
«ժողովրդի վերաբերութեամք բանաւորի կամայակա-
«նութեանց գէմ խօսելն: Այն, Դուք ևս կխսուովա-
«նիք՝ որ այդ այդպէս է: Անա Զեղ ապացոյց Արձագանքի
«տարոյս 49-րդ համարի առաջնորդողն՝ որ անգոյ և
««անլուր «ապրեցէք ընդ երկար և ալօթեցէք ինձ հա-
««մար, կառավարեցէք զործերն և ամենայն ինչ կարդ
««ու կանոնի մէջ պահեցէք» խօսքերը դնելով դիակ-
«նացածի բերանն՝ ցնց է տալիս նորան կարդ ու կա-
«նոնի բարեկամ, նախանձախնդիր: Դորանից յետոյ
«ճեմարանի մէջ հանդիպած դէպքերն ընդքողով յի-
«շատակելով՝ աւարտումէ տօնեցիալ որրոյ վարքը.
«Բո հաւատը կապրեցնի Քեղ, երջանկայիշատոմկ Տէր,
«գու հաւատալով՝ հիմնեցիր դիտութեան տաճարը.
««Նորա մէջ կենդանի կմայ Քո յիշատակը, և դժոխքի
««դոնիրն անկարող կլինին յաղթահարել նորան»:

«մումը Զեր թշնամիների, որոնք խաւարի
«մէջ են կամենում գործ տեսնել: Բայց միթէ
«կարելի է այդպիսի անձանց վատ և չարահնար
«արարմունքից վիրաւորուիլ և վշտանալ, քանի
«որ գիտենք այդ մարդիկ ի՞նչ են և որպիսի
«ստոր միջոցների են դիմած: Այդ խեղճ արա-

«Զգիտեմ, կյիշէք արդիօք Կաթուղիկոսի Բիւրա-
«կանէն դարձը 1874 թուին և Զեղ, ինձ, Գէորգ վար-
«դպիկա Սուրբէնեանցին և այլոց հանդերձ նորաժողով
«աշակերտներով վեհարան կանչելը և մի առ մի ըո-
«լոր աշակերտացուք..... տնտղելէն յետոյ՝ այս նշա-
«նաւոր... խօսքերն այդ տպայոց ժողովողներիդ ասկելը.
««Ծօ, ազգին մէջ ուշիմ, կայտառ և փայլուն տղայք
««Հկայի՞ն, ի՞նչ զնացեր ժողվեր էք այս չիբքին-միր-
««քին տղայքը. դիմախտարութիւն չէք կարդացած, որ
««գեղեցիկ տղայքը մտօք ընդունակ կ'լինին»: Այն, և
«ևս հաւատում եմ, որ Ճեմարանն իրեւ... հիմնեցաւ և
«ուր ուրեմն Աստուծոյ գութն և խնամք պէտք է
«քաղցրանայ մաքրէ նորան: Պարտական է երեանի
«Երիտասարդութիւնն, որ ցայսօր չ'հրատարակեց Ճէ-
«պէճեանցի արարմանց առթիւ բացուած քննութեան
«արդիւնքը»:

«Կ'յիշէք ապաքէն Փորձ հանդիսի իմ մասին
«Սանկտ-Պետերբուրգից հրատարակած նամակն՝ որ
«եղեանց և Սանսարեանց պարոնների գործն էր.
«այժմեան այդ անգործ կոնդակի հոգին նոյն նամակի
«ուղղութիւնն ունի: Իւր ժամանակին ևս շատ լաւ
«ապացոյց ունէի իմ Ճեռքում Գէորգ Կաթուղիկոսի առ
«իս արձակած կոնդակն, որով Աղեքսանդրապոլու
«գիւղօրէից երեք քահանայից, երեք մեծ քիհեաների
«և վաթսուն տուն հասարակութեան կրօնափոխութ-
«եան առաջքն առնելու համար, ինձ առում էր այս

«բածները՝ որ անուանաբեկ են եղած ամեն
«տեղ, զանազան միջոցների են դիմում, կարծելով
«թէ դորանով միայն կարսղ են հասարակաց
«բանագատութիւնից ազատուիլ: Ի՞նչ և իցէ,
«այն կոնդակը երբէք և երբէք մտած չ'է Սի-
«նօդ, այլ միայն սեր գրուած և այնպէս մնա-
«ցած է եղել գործերում ինչպէս տեղեկացանք—
«թէ իբր՝ երբ գուք մեղայ չ'ասէիք, այն ժա-
«մանակ պիտի տային Սինոդին, և այդպէս մնա-
«լով մնացել է կաթուղիկոսական գործերի մէջ,

«խօսքերն. «Եկեղեցի Հայաստանեաց զՁեզ դաւանի
««մին՚ի հաւատարմագոյն և յօգտակարագոյն որդւոց
«իւրոց»: Այս խօսքերով, կամ ամբողջ կոնդակով Պե-
«տերբուրդի պարոններին կարնդ էի տաել հրապարա-
«կաւ եկեղեցւոյ գլուխն առաւել իրաւունք և հասու-
«թիւն ունի նրա անդամաց արժանիք կշռելու՝ քան
«թէ Զեզ նման ոտք և ձեռք համարուած անդամներ,
«բայց չկամեցայ ընդ երկար ձգձել խնդիրն, այլ
«թողի: Կաթուղիկոսի ինձ հետ վարմանց պատճառ-
«ները համառօտիւ շատ այլ գրաւոր փաստերի հետ,
«ամփոփեցի և 1878 թուին իրեն ուղարկելով՝ զնացի
«Նախիջևան եղբարցս տունն: Դոյն իսկ յայտարարու-
«թիւնը՝ թերեւ ինձ յաջողուի, Պօլիս ուղարկելով
«տպել տալ և իւր գերեզմանի վերայ իրեւ պասկ
«զնել, զնել նաև պատկ և միաբանութեան անդամոց
«ումանց զլիին, որոնք Գէորգ չորրորդի բոլոր անձնա-
«հաճութեանց աիրական լուռթեամբ տանելով՝ իմ առ
«նա յայտարարութիւնը, զատեցին և զիս յանցաւոր
«ճանաչեցին: Յայտնի բան է՝ զրաք կ'լինին իմ ան-
«հատականութեան մասին. իսկ ընդհանրութեան վե-
«րաբերուած բոլոր գործեր՝ ժամանակը կարնդ է գը-
«նահատել»:

«և ո գիտէ թերես ի՞նչ չար դիտումներով: Երբ
«յանձնաժողով կազմուեցաւ քանի մի անձ ինքն
«իրենց գողութիւններ դուրս բերելու համար,
«Երեմիա եպիսկոպոսը այդ գործերը տանում է
«իւր մօտ նոցանից բան իմանալու համար, յան-
«կարծ այդ սեազըութիւնը երբ աչքին է ըն-
«կրնում առանց խոհեմութեան, իսկայն սորան
«սորան ծանուցանում է: Զարութեամբ լցուած
«մարդը-չ'իք Ստեփաննոս եպիսկոպոս և Խորէն
«Ստեփանէն ստանում են նորանից այն սեազըի
«պատճէնն և այդ չար հնաբքն են մտածում
«գործ գնել: Բայց խնդրեմ այդպիսի չնշին ա-
«բարձունքից ընաւ միք միբաւորուիլ, այլ ամե-
«նայն համբերութեամբ Զեր գործութիւններով հրատա-
««թիւնը՝ կաթուղիկոսի ինձ հետ վարմանց պատճառ-
«ները համառօտիւ շատ այլ գրաւոր փաստերի հետ,
«ամփոփեցի և 1878 թուին իրեն ուղարկելով՝ զնացի
«Նախիջևան եղբարցս տունն: Դոյն իսկ յայտարարու-
«թիւնը՝ թերեւ ինձ յաջողուի, Պօլիս ուղարկելով
«տպել տալ և իւր գերեզմանի վերայ իրեւ պասկ
«զնել, զնել նաև պատկ և միաբանութեան անդամոց
«ումանց զլիին, որոնք Գէորգ չորրորդի բոլոր անձնա-
«հաճութեանց աիրական լուռթեամբ տանելով՝ իմ առ
«նա յայտարարութիւնը, զատեցին և զիս յանցաւոր
«ճանաչեցին: Յայտնի բան է՝ զրաք կ'այս յայտել»:

«Ի յաւելուածոց սրտիս այսքան խօսելէն յետոյ,
«Զեր կամացն իմ թողնում, սիրելի՛ եղբայր, այն ան-
«գործ կոնդակը Զեր խորհրդածութիւններով հրատա-
««թիւնը՝ կամ ոչ, իսկ սորա, և ինձ ուղղուած կոնդա-
«կին զուգակցիուը տեսնելու համար, ուղարկում իմ հա-
««թիւնն անիրաւ համարելով՝ մեզագրանք կարդալ,
«ըստ որում այն զրուածք հանգուցելոյն ընկ կարծիքն
«է եղել իմ մասին, զոր զործազրել ինքն ևս ակնածու-
««թիւն է ունեցել և 'ի թաքստեան թողել: Բայց թէ
««թիւնը՝ ի՞նչ կերպարանք և հայեացք կ'ատաք այդ հրա-
«տարակութեան, որ սպասուած օկուան բերէ՝ քան
««վնաս, չ'գիտեմ»:

Վերստին դառնանք Տփխիսու վիճակի առաջ-
նորդ՝ Տէր Արխոտակէս եպիսկոպոսին, և յիշատա-
կենք նորա նոյն թուականի յունուարի 17-ին արձա-
ձակած գրութեան մի յօդուածն՝ որ իբրև պատաս-
խան մեր ենթադատութեան-հաստատումէ Ներսէս
սրբազնի ասածներն ամենայն իսկութեամբ։ «Յի-
«շատակամեռ Կաթուղիկոսի կոնդակի մասին
«Զեր գրածները կարի իրաւացի գտնելով՝ ես
«վճռեցի բոլորովին յետ կենալ իմ մտադրութիւ-
«նից։ ՚ի գէպ, այդ կոնդակն ինչպէս երևումէ,
«Զեր թշնամիների ձեռքում երեացել է մի գէնք
«Զեր հօար պղտորելու և Զեր վարկն իբր թէ
«վայր ձգելու համար նոցա աչքում։ Այստեղ
«ծանօթներիցս մէկը Վաղիկաւկազից ստացել է
«մի նամակ, որ և ինձ մօտ կարդաց. նամակա-
«գիրն գրումէ, որ էջմիածնից գրել են այդ քա-
«ղաքը, թէ հանգուցեալ Կաթուղիկոսը Սուքիսո
«եպիսկոպոսին լուծումէ եպիսկոպոսական առ-
«տիճանից մի կոնդակով՝ որը Մակար եպիս-
«կոպոսը գողացել է կաթուղիկոսական գործե-
«րից և ծածկել, և խորհուրդ են տալիս առաջ-
«նորդ անդամ չ'ձանաչել։ Նամակից առ այժմ
«յայտնի չ'էր լինում թէ էջմիածնից ովքեր են
«գրողները, բայց ես ամենայն հաւանականու-
«թեամբ կարծումեմ, որ Ստեփանին և Ստեփան
«եպիսկոպոս Միթթարեանցն է»։^{*}

*Գերապատիւ Սրբազն Սեղբականի «ամենայն հա-
ւանականութեամբ կարծիքն» հաստատում է Տէր Ներսէս ե-
պիսկոպոսի հաւասարի վկայութիւնն.

Ե.

Այսքան ընդ երկար և ձանձրալի պատճէնաբա-
նութիւններից յետոյ՝ յուսամ թէ կ. Սահրաթեանց,
լինի նա սուրբ անմեղութիւն կամ լարուած խար-
դախութիւն, գոնէ փոքր ինչ համոզուել ունեցաւ, որ
ինչպէս առաջնորդութիւնս կեղծ չ'է, միայն տեղա-
պահի ազգեցութեամբ յաջողուած, նոյնպէս և կոն-
դակի անյայտութեան նորին Սրբազնութիւնն անմա-
սըն է ըստ որում նորա էջմիածին եղած ժամանակ
Վեհարանը գեռ փակ էր։ Իսկ երբ նա գնաց կայսեր
թագադրութեան հանդիսին և անցաւ Քիշնե իւր ա-
ռաջնորդական գործեր տնտեսելու, Սինօդն սկսաւ
ցուցակագրել Վեհարանի պաշտօնական գրութիւնք։
Կոնդակի բարձման գործողութիւնը՝ ինչպէս վերոյ-
թերեալ թուանշանն ցոյց է տալիս, օգոստոսի 11 է.
Տեղապահնը վերագանումէ էջմիածին նոյեմբերի ըս-
կիզբներին։ Այդ, իւր տեսակում մի հատիկ, կոնդակի
ծանուցազրի խօսքերով ես,

Նախ՝ «ապականեալ գործոց Տէր եմ. եպիս-
կոպոսական իրաւունքներէ զրկուած եմ, քրիս-
տոնեայ կոչուելու արժանիք չունիմ, թող թէ եպիս-
կոպոս կամ առաջնորդ հաւատացեալ հայ ժողո-
վրդոց»։ Սոցա վերաբերութեամբ յարգելով իւմաս-
տնոյ պատուէր։ «գովեսցէ զքեզ ընկերն և մի քո-
րերան, օտարն՝ և մի քո շրթունք», ոչինչ չ'եմ կա-
մենում ասել. թող բարեհաճի զատել սուրբ էջմիածնի
միաբանութիւն. որոյ անդամ լինելու պատիւն ու-
նիմ 35 տարի ժամանակ. բարեհաճի դատել և հայ
հաստրակութիւն այն քաղաքների և գաւառների՝ ուր

պաշտօն վարել ինձ յանձնուած է եղել հոգեսր իշխանութենէն: Ապականեալ գործերի համար տեղեկութիւն ունենալ ցանկացողներ լիովին կ'աւեսնեն յետագայ բաժնուամ: Թէ եպիսկոպոսական իրաւունքներէ զրկուած եմ, թող համոզուի ամենայն այս գրքոյկ կարգալու և հասկանալու կարողութիւն ունեցող մեծ և փոքր անձնաւորութիւն: Քրիստոնեայ կոչուելու արժանիք չնւնեցող նոքա են, որոնք զօր ամենայն ամօրէնութիւն և զրպարաւութիւնը՝ մարդարէի ասածին նման, «իբրև զջուր կըմպէն». ինչպէս է և ծանուցագիր կարկատողն Սբբազան Մակար արքեպիսկոպոսի նկատմամբ: Որովհետեւ ճշմարիտ և անսուտ է Յիսուսի հրամանն՝ «ծառն ՚ի պտղոյն ճանաչի»: Եպիսկոպոս կամ առաջնորդ հաւատացեալ հայ ժողովրդոց ոչ միայն ես, այլ չնւնի արժանիք և նա, որ լոկ հօան խուզելու և ոչ արածելու մէջ կըտեսնէ իւր պաշտօն, որ միայն հօտի անդամոց գովասանքներով և ծափահարութիւններով՝ իբրև ճըպուան օգով կերակրուած, կըարձրանայ և կ'փառաւորուի. ինչպէս էր զերերջանիկ Տէր պարգևատուն Հայրապետական նզովից և բանագրանաց կոնդակի:

Երկրորդ՝ «կոնդակի վաւերական պատճէնը ընօբինակուած է հանգուցեալ կաթողիկոսի ինքնաձեռագիր սեագրէն»: Եթէ զորա (ծանուցագրի) ներքի զրուած 1881 թուի 12-րդ ամսոյ 20-ին թուանշներ կարգանք ուղիղ մտօք ժամանակագրութեան, չերմեռանդ հրատարակիչը «ուռան ՚ի հօրէ սատանայէ է» սոսկալի գատագնոի տակ կ'զնէ իւր զլուխը, ըստ որում այն ժամանակ կաթուղիկոս դեռ կենդանի էր

և ոչ ըստ զրեցելոյն «հանգուցեալ»: Իսկ թէ վաղարշապատի և Աստրախանի արքունի նամակատանց գրութիւնը վերաց կ'նայցնիք, այն միջոցին կ'հաւատանք՝ որ անցեալ 1883 ամի դեկտեմբերի 17-ին էջմիածնից արձակուած այդ փառաւոր ծրաբն այսաեղ ըստացուել է ներկայ 1884 ամի յունուարի 4-ին, և է արտագրութիւն արգարի վեհարանի թերթերից. բայց թէ Տ. Գէորգի «ինքնաձեռագիր սեագրութիւնից» դժուար է հաւատալ: Որովհետեւ նա բաւականին խորիմաստ քաջածանոթ լինելով հայկական գրականութեան՝ արժան չ'էր համարում ինքն զրել կոնդակների հախարտակ, այլ սորան և նորան էր յանձնուում: Երբեմն միայն երբ օտարի զրչով շարադրած զրութեան նախարտակ հաւանելի էր լինում նորին բազմտղիտութեանը, այն ժամանակ միայն նեղութիւն էր յանձն առնում թերուս գրագրի նման (Շինորկէ գիտմամբ՝) տառասխաններ անելով՝ արտագրել և տալ կոնդակաց մաքրագրողին, այն էլ միայն նորա մօտ անմեղութեամբ ձևանալու մտօք այն ինչ որ չ'էր: Այս անսուտ ճշմարտութեան հարիւրաւոր վկայը կան, որոց եթէ հարկն պահանջէ՝ կարելինէ անուանել: Մակայն ներկայ օրհնութեան զրուագի համար խղճիւ պէտք է տոել բառեր և իմասաներ սուրբ Հայրապետին են, իսկ շարայարութիւն իւր հոգեզաւակին: Վասն զի երկուսի ներքին հոգեկան մաքուր զգացմանց պատկերներ ցոլցոլում են նորա մէջ, երկուսի քինաւոր սրտից յաւելուածին պաշար տեսնուում են այսաեղ:

Երրորդ՝ «Եթէ հեթանոսամիտ անձն եմ»: Ոչ կոնդակագիրը՝ և ոչ նորա տիրասէր ծանուցագրի

կարող չ'են վկայել։ Մարդոյ միտք, սիրտ և հոգին կ'ըննէ՝ իբրև նորա ոստիկան, միայն Արարշի ամենագիտութիւնը, այդ ամբարիշտ յանդզնութիւն լաւ էր՝ թէ իբրև վերապահէր կեղծ թէ անկեղծ կ. Սահրաթեանց. քան թղթոց հաւատայր։ Պարոն հրատարակի, ցեխոտ ոտներով օթոցների վերայ քայլելն անկրթութիւն, ուամկութիւն է. բայց հոգետես գուշակութեամբ մարդու խիղճ և միտք քննելն ամենաձեռներէց լրբութիւն։

Չորրորդ՝ «հանգուցեալ երջանկացիշատակ Հայրապետի գերեզմանէն, ոսկըներնէն և նորընտիր Հայրապետէն թողութիւն պէտք է ստանամ կատարեալ զըղջմամբ»։ Դիականացելոյ անզգայ, անշունչ գերեզմանն և որդնալից ոսկերք ի՞նչ թողութիւն կտան, երբ կենդանի խօսուն լեզուի ներումն սնւա էր, երբ բարբառող բերան փոփոխական էր, երբ բարբախող սիրտ անվարժ էր Գողգոթայի աստուածացին Նահատակի ներողութեան զգացմանց։ Երբ «Ներեմբ հայրաբար» խօսքը արուեստական փողահնչիւն էր և ոչ գորովագութ հոգւոյ արտաքերութիւն։ Երբ «ըստ քրիստոնէական սուրբ պարտաւորութեան» բառերը աւետարանի լայնամիջա շնորհաց վարժարանին աշակերտութենէն չ'էր յառաջացած, այլ շարունակեալ ոխակալութենէն։ Երբ կեանք անարատ և վարք սրբասուն չ'ին պատկառելի արած զնա՝ ինչպէս զսուրբն Ստեփաննոս Սիւնեաց եպիս. կոպոս, որ իւր սպանող Մոգն աւանի ապաշխարող- կնոջ Թանահատի վանուց հիման տակէն ձայնէր, արիւնթաթաւ մահուանէն տարիներ յետոյ, «ով կին դու, թողեալ լիցին մեղք քո»։ Երբ նա զիս՝ քան թէ

ես զինքը բարոյապէս մահացուցի։ Ինքը, կոնդակազիքն ներումն ստացաւ Յովհաննէս, Արէլ, Սարգիս և Գաբրիէլ Արքեպիսկոպոսների գերեզմաններէն, ոսկըներէն, զորս վատանունութեամբ մեռոյց. ոմանց գիտէներ ևս հրապարակի վէճ դարձոյց մինչի անշուք թաղումն, որպէս զի և այլք իւր զղջման օրինակին հետեւէին։ Ով է երաշխատոր նորընտիր Հայրապետի ինձ թողութիւն և ողորմեսցի կարդալոյն։ Եթէ այդ կայք և Կյարգուէր՝ ի՞նչու կոնդակի գործադրութիւն նորան չթողուեց, այլ վաղաժամ հրատարակուեց՝ի գայթակութիւն հաւատացելոց։ Թերես ընտրելին լինի Պետրուրիպի Փորձին մէջ զիս դատապարտող նամակագիրն, թերես լինի մի ոք յաւերժայիշատակ Զորբորդի բարեխրատ հոգեստուններէն, թերես լինի մէկն Արձագանքի տօնելի սրբոց նոր ցուցակ պատրաստող և հոգեկտակ խրատաքանութիւն կարդացող գրիչներէն։

Հինգերորդ՝ «Խարդաւանութիւն է յատկացնում Մակար Արքեպիսկոպոսին և հրաւիրում է զժողովուրդն խայտառակել։ Խարդաւանութիւն լայնիմաստ բառը ում առաւել կյարմարի, այն միամատութեամբ ոչինչ բանից տեղեակ չ'եղող անձին, թէ՝ի զուր թշնամանողին։ Այն բազմահնար անձին, որ Բարձրագոյն կարգադրութեան յօդուածներ փոխելով և էջմիածնի միաբանութիւնը երդմնաթղթով պարտաւորելով՝ իրենց միակ ժառանդ ճանաչել Մայլ Աթոռն, իւր անընչափաղութեամբ դիզած գանձը կարգագրեց բաժանել ջերմեռանդ, աշխատակիցների մէջ ամէն տեսակ խաչագողից և յուշկահարից յաջողակ ճարպիկութեամբ, թէ այն հոգեստրականին՝ որ ոչ ապօրինի շահ կսպասէ

և ոչ անարդար բաժանումն։ Խարդաւանութիւնը ում
կյարմարի, այն անձին՝ որ տարիներ յառաջ առ ինքն
մեղուցեալ, քաւած, որրած մասնաւոր յանցանք
եկեղեցական հաւատալիաց և կրօնական սրբու-
թեանց վերաբերելով՝ միջնադարեան անաթեմական
արձանագրութեանց մէջ կարմբադեղով-իրրի արեամբ
կարձանագրէ հազար և մի զբարտութիւնք կցկցելով
նորմն, և Զեղ՝ որ մեղսակցութեամբ հանրահոչակ
տարածող էք, թէ այն մարդուն, որ այդպիսի քինա-
ւոր և հարհանգեալ որոգայթագրութեանց բանալին
երբէք չ'է տեսած և չ'է կարող գործադրել։ «Վայ,
որ գայթակղեցուցանէ» և այն ոչ միայն մէկ փոքրիկ,
այլ ամբողջ վիճակ, քաղաք և ժողովուրդ։ Ինչ որ
կ'վերաբերի ծանուցագրոյ մէջ բաց թողածս մէկ
քանի բառերին, զորս 'ի պատիւ մարդկային կոչման
է. Սահրաթեանի յառաջ չ'բերելով կէտերով անցայ,
կ'բացարեմ անթերի, երբ զինքն ձանաչել և տեսնել
բաղդ կունենամ։



Ո՞վ գերերջանիկ հոգիացեալ մեծ Բարունապետ.
Դուք երկնքում, ես երկրում։ Դուք Աստուծոյ ար-
դարադասութեան անսահման բոցափայլութեան գէմ
յանդիման մերձատեսող, ես ընդ կրից մարմնոյ կցոր-
դուած՝ իրրի ընդ հայելի օրինակաւ բժժոտ աչօր 'ի
հեռաստանէ նկատող։ Դուք Հայրապետական ընդ-
հանրական անցիշաշար աթոռոյն վերանստեալ ընդար-
ձակասիրտ կառավար Հայաստանեաց սուրբ եկե-
ղեցւոյ, ես ստորաստիճան, նեղսիրտ, սխալական և

անփորձ պաշտօնեայ։ Վկայեցէք, աղաչեմ. Աղեքսան-
դրապօլու և այլ վիճակների հայկազուն պարզամտ
ժողովրդեան յուզման և երկպառակութեան առիթ ես
եմ, թէ Վեհաբան, որ ամէն վիճակում յատուկ գոր-
ծականներ և արբանեակներ ունենալով՝ միակ իւր
կամաց ներգործութիւն էք յառաջ վարում ազգի մէջ։
Սինօդի, Առաջնորդաց և կոնսիստորիաների հետ եղած
օրինական կարգապահ յարաբերութիւն խզելով և
նըանց իրենց ստորագրուածների հետ պատշաճաւոր
ընթացք ընդմիջելով՝ անիշխանական վիճակի էք
հասուցանում եկեղեցին։ Ուսւաստանով չ'բաւակա-
նացած՝ Տաճկաստանն էք ձեռք առնում, և խաղաղու-
թնամ բարեբեր շոնչ փչելով՝ ազգային վարչութեան
մասնաբաժիններ միմեանց դէմ 'ի կոիւ զինուորում
և մեծագումար ընծաներով պատրիարք բառնում իւր
ըստ արժանոյն վերաբազմեալ աթոռէն։ Որ Մայր
Աթոռոյ միաբանութեան արդիւնաւոր և բազմավաս-
տակ անդամներ յետս տանելով՝ ընդ չ'պիտոյն էք
զրում, և իւր անարժան սպասաւորներ և այլ անընդու-
նակ, առունենածառ բանսարկուներ յառաջ բարշում՝
բանագետ ազգայնոց իրաւացի զայրոյթ շարժելով։

Հայ ազգին բազմատեսակ գայթակղութեանց
առիթ չարն, շնորհազուրկ Սուքիան եպիսկոպոսն է,
թէ Գէորգ Զորբորդ, որոյ անուշաբոյր վարուց և
քաղաքավարութեան ստուերազիծ նոյն իսկ ձեռնա-
սուն զաւակների ձեռքով աշխարհիս կրօնական մայ-
րաքաղաքէն—Հոռվմէն բիւրաւոր վիմատիպ թերթերով
ամէն քաղաք և նահանգ, աւան և գաւառ, տուն և
գիւղ տարածվում էին։ Շարավական և օրական

անցքեր արձանագրվում էին ամենայն հոգաբարձութեամբ Արէլ Արքակիսկոպոսի ձեռքով և մեծաղիր զրոյիներ բաղկացնում, ուր ամէն ոք կարող էր տեսնել սուրբ Հայրապետանոցի անկումն առաւել և ամօթալի՝ քան Բբիքոյ, Շմուէլի ասորւոյն օրեր, զորս ժողովալի մահուանէն յետոյ վեհարանը զրաւելով հաճոյասէր անձանց միջնցաւ-ինչպէս Միթթարեան Ստեփանոս վարդապետն էր, ոչնչութեան մատնեցիք և վրէժինսքրութեամբ զինեցայք անշնչացելոյն հետ աշխարհագոյժ անարդ թազումով: Մանկահասակ սպասաւորների Պօլոյ Պատրիարքարան, աղգային լրազրերի էջեր և ամէն բամբասանէր անձանց ձանձրացնեխն ուժ համար էին: Որոյ բարոյական մերկութիւն ծածկելու պատճառաւ էջմիածնի զանձարան պարտաւորուած էր գտնուում հազարներ համարել անհաղատակ սուպայահատակ երթիեկներին: Ճեմարանի վերակացու Պօլոս Ճեպեմեանի քաջադրութիւնների մտսին կտրգուած քննութիւն ուժ համար առաւել վայրաւն և որոտախոս զբուատիքներ էին հրւառմ: Վրուատիք՝ որ հազար անդամ կ'գերազանցէին քան զգայն բազմացի: ճառերուն շողորոթական ճարտարախոսութիւնը: Աւանայ սրբակրօն, միամիտ աղօթաւորների և Բիւրականի ու արջակայ զիւտիքի բնակչաց հազարաւոր զազրալի պատմութիւններն և անլուր անառակութեանց նկարազրութիւններն Սուրբիասի զայթակղեցուցիչ վարձաց համար են մինչև ցայսօր յեղեղիում, թէ Գէրդ Զորբորդի կենցազագրութեանց:

Սմբարտաւանութեան եղջիւր ևս բարձրացրած

եմ արդարութիւնս աշքի առաջ ունենալով չընդունել Հայրապետական սխալական իշխանութեան և Մինօդի բռնազրուեալ ապօրինի հրամաններ, զոր յետին ապուշներն անդամ կառնեն—ամենասոտորին դատարաններէն ամենավերին իրենց փաստեր տեղափոխելով; թէ կաթողիկոսական իշխանութիւնն միջոց ամենասահսկակ ապօրինութեանց նկատող անձնաւորութիւնն, որ իւր եսական հաճոյք և փառախնդրութիւնք կ'անուէ, միշտ և ոչ մերձաւորին կողկողանք: Որ իբրեւ հաւատոյ մասն կ'յանդինի քարոզել Սատուծոյ ականջիրեն բերանին գրուած ամէն ապօրինի վճիռ հաստատելու: Որ էջմիածնի եղբայրական միաբանութեան համար գարաւոր ժամանակներէ հետէ չըտեսնուած և չ'բոււած բանակետութիւնք կ'զործագրէր՝ վեղաբաւորներ շաթիբների, սուրհանդակների անողորմ հարուածների տակ մաշեր, ջարդեր, աքսորել: Որ իւր նիւթական շահուց առաջ առնող կարգաւորներ՝ չհասներ առանց հրամանի պատկելուն համար աճուրդի չ'յաջողած ժամանակի կ'զատափետէր, սաստրկասառոյց ձմերան եղանակին վանուց ՚ի վանս կըտարագրէր հանդերձ ընտանեօք և մահունց պատճառ կ'հանդիսանայր: Որ եպիսկոպոսի և վարդապետի տարեւոր միջոցներով կ'արգելէր Սատուծոյ աղօթից տուն իջանել, քահանայագործեր, ըստորում վեհարանական կոնց չէին հաճեր ծունը կրկնել, և այսպիսեաւ Հայտատանեայց սուրբ եկեղեցւոյ խորհրդական ձեռնադրութիւն և օծումն լոկ հրամանէ կամայականութենէ առկախ ցոյց կ'աար: Որ ոչ մի օրէնք, ոչ մի կանոն, ոչ մի պատուիրան քանոն և

կշիռ չ'էր ընդունիլ յանցաւորութեանց չափ սահմանելու, այլ իւր նեղաշրջան և մտապակաս ճանաչումն. նոյն ինքն լինելով հրամանաւու պատժոց՝ իրեւ դատաւոր, և նոյն ինքն գործադիր՝ իրեւ դահիճ, նմանելով լերանց և ձորոց անհրահանգ բանաւորաց՝ որոց բերանին մէջ կան շարունակ այս նշանաւոր խօսքերն: «ասն, բասն, քեասն», «ձեռք ձգեցէք, վեր կոխեցէք, կորատեցէք»:

Արքեցութիւն, անառակաւթիւն, լրբութիւն իմ վարուց մէջ առաւել կայ և ծանօթ հասարակաց՝ թէ այն հոյակապ անձի, որ թանգագին ըմպելիներով և կերակուրներով հաւասար և առաւել քան ամբողջ էջմիածնի պարիգոտաւորներ, բազմագումար դրամոց վատնումն կ'պատճառէր Մայր Աթոռոյ գանձարանին. իսկ հեռաւոր քաղաքներից այցելու ականաւոր հայտագետ կ'զանգատէր իւր կարօտաւոր կեցութեան մասին: Որ ոգելից նեղանիւթների դատարկ շիշեն մենավաճառութիւն արած էր պերճաշնորհ Պետրոս եպիսկոպոսին: Որ Վեհազնեայ Խաչատուր իշխանի և այլոց հարցերի առաջ-զեռատի սպասաւորաց քնարանի վերաբերութեամբ, կ'կարկամէր պատասխաններ տալը և զանձն արդարացուցանել գայթակղութեան յանցանքէն: Որ սպասաւորաց ազգական անունով Բուրսայէն, Եզիպտոսէն և այլ քաղաքներէ ճեմարան աշակերտութեան անցած մանուկներին Վեհարան գիշերախան երթեւելու պաշտօն յատկացրած էր և ամենակերպ սկսովանք նոցա միայն վերապահած: Որ կուր գետի տփերէն մինչև Քարսաղ գետոյն դաշտը իւր ամենօրեայ մտագրաղ նամակներ կ'թռուցանէր

«սէր իմ, սէր» և անզրադարձն կ'ժողովէր խնամով «Տէր իմ, Տէր» ճակատագրերով: Որ ազգային լրագրութեան բողոքն, ժողովրդի յուսահատութեան աղաղակ, այցելութիւն խնդրողների հառաջանք, զըզուանք արտայայտողների հծծանք փափուչի տակն էր առնում: Որ պատկառոտ Սինօդական անդամոց խրախուսում էր ակնածելի թեմական առաջնորդների պատոյն դէմ արշաւանք յարդարել, «զարկէք, ամաքարն բամբակի մէջ թաքուցած լինի»: Գիտէ ամենատեսն Աստուած, Եթէ Տփիսիսի, Ախալցխոյ, Աղեքսանդրապօլի և Նախիջևանի յարդելի բնակիչների առ իս հեռագրով կամ նամակներով սրտագին ուղերձներն ի մի ամփոփեմ «Զայն բազմացէն» մեծահատոր գիրք կ'դառնայ, բայց ի՞նչ օգուտ յատամաւմերձ շրթանց հիւսուած զովեստից խօսքերէն: Եթէ կայ արդարի իմ վարուց և գնացից մէջ արբեցութիւն, անառակութիւն և լրբութիւն, և այն ապացուցուած զրաւոր և բանաւոր վկայութեամբ հայազգի ժողովրդեան, հապա լինչու համար Վեհարանն ամբողջ շաբաթներ առաւօտ և երեկոյ Սինօդական հարց ժողովներ կազմելով զիս գատապարտելու առիթ կ'կրկտէր և ոչինչ չ'գտաւ՝ բաց յանհնազանդութենէ, որ յառաջացած էր անիրաւ հրամանարձակութենէ: Ո՞չ ապաքէն յիշուած յանցանքներէն մինն անզամ իւր ապացոյցներով բաւական էր զիս գատապարտել առաջի Աստուծոյ և ժողովրդեան, ուր էին այդ յանցանքներ այն ժամանակ, եթէ կային:

Քրիստոսի հօան յերկուս բաժանող անձնական օգուտ որոնողն էս էի, թէ այն մտերիմ, վեհարանա-

կան շահերին պաշտպան՝ կերպառ-փիլոն, խոչ, կամիլաւկայ, աւագ քահանայութիւն և ձեռնադրութիւններ զնով վաճառողներ և հաւատացելոց գալթոկդութիւններ։ Անձնական օգուտ որոնելոյ ապացոյցներ չեն արգեօք Տաթևու վանահայրութեան և վիճակին յաջորդութեան արդիւնքների ութհազար բուրի գումարաց գողութեան մասին Սինողի կայացըրած օրափիրն վեհարան պահանջնել և Միթթարեան Ստեփաննոս մարդապետից փրկանը ստացած արդարացնելու Վանահայրերի տարեկան մտից և ծախուց սևագիր մատեաններն առանձին ակնարկի արժանացընելով եկտեմուտները միշտ կրծառ յոցց տալ և ծախուերն ընդ երկար, իսկ յաւելուածներն իւր անակնկալ պարզեների համար կորդել շուարած վանահայրերէն, հուսկ ապա կտակածել թղթով յառաջ քան զմահն՝ վանօրէից նպաստառու և արդիւնարեր կարդալ իւր աննուեր անձնաւորութիւնն։ Կրօնափոխութեանց առիթ տուող Ես էի, թէ այս շարութեան մշակներ, որոնք զօր ամենայն արուեստ արած էին իրենց մերենայութեանց հաղբիք խայտադակելու փաստեր ձեռք բերել յաջողած անձնով՝ միամիտ ժողովրդեան թելադրուած բողոքներով, տեղափոխութեան և պատժոց ենթարկել Կաթողիկոսարանի միջոցաւ։ Ի՞նչու համար էր ինձ չնորուած 1876 թուականի մայիսի 12-ին ընդ համարով 149, Զեր Սրբութեան կանաչաթարմ մասներով տառազրուած կոնդակի ի միջի այլոց այս փաղաքշական խօսքերն։ Գոհութեամբ բազմաւ ընթերցաք զրացուցիչ յայտարարութիւն Զեր ընդ համարաւ 37, զոյզ ընդ

«պատճէնի խնդրագրոյ զղացելոցն և յետս կտսելոց «ի կրօնափոխութենէ, յոր զիմել բաղձային՝ տանց «կանխագոյն համոզման մտաց որպէս բացարեկիք» մւրախ եմք, զի Դուք այդշափ սիրալիր խնամով «միտ դնէք անթերի կատարման զիմաւորագրոյն պարագուց պաշտաման Զերոյ՝ որ է անշուշտ նախանձախնդրութիւն ամբողջութեան Հայաստանեաց եկեղեցոյ, որոյ որգիք կարօտին այն արթուն հովուաց, «որք գիտիցեն սիրայորդոր բանիւք քարոզութեան, «ոգեշահ խրատուց և ազգարարութեանց դարձուցաւնել զմիամիտոն ՚ի մոլորութենէ և զյուսահատեալն «շահել ՚ի յոյսն ապաշխարութեան՝ իբրև զաղաց «տարտուցեալս ՚ի ստենէ մօր իւրեանց հարազատի։ «Հաստատնն կացէք յայդմ փութաջանութեան և «Ժրացարուք յաւէտ ՚ի զործս բարիս, արիագոյնս «պնդելով զաիրա Զեր և զմիտս անփոփոխ սիրով և «հարազատութեամբ սոս Մայրս մեր սուրբ եկեղեցի, «որ զԶեղ զաւանի մին ՚ի հաւատարմագոյն և յօդ «տակարագոյն որդւոց։ Եւ մեք ինդրեմք յաւէտ ՚ի «Բարձրելոյն յաւելուլ զպարձանս արդիւնաւոր ծառ «ծառայութեանց Զերոց յասպարիզիդ հովեոր և արշ «ժանի առնել զԶեղ ըստ արժանեաց Զերոց երկնայի։ ին և երկրաւոր բարեաց և պարզեաց»։ Անձնական շահերի հեաամուտ Ես էի, թէ նոքա, որոնք ճաշոցների միայն կաղմելու խնդրոյն մէջ հազարաւոր բուրիներ էին վաստակում, թնդ այս իւղոտ աւարն ու բաժին՝ որք զոյն զրոց վաճառումէն և աւելորդաբար տպագրութենէն յառաջ էին զալիս։ Որ ձեռնադրութիւն եպիսկոպոսաց, փաղաքետաց, լուծումն

Հ'հաս մերձաւոր պսակաց և իրաւանց վերայ կաշառառութիւնն արուեստ և փերեղակութիւն էին արած։ Որ ոռոքը Աթոռոյն կալուածներ աննշան տարեվճարով իրենց սպասաւորաց ժառանգութիւն էին դարձրած։ Որ գանձարանի թանգարակին մատանիներ և այլ հազուագիւտ երեղիններ ընծայի անուամբ յաւար և յափշտակութիւն էին գրաւած։ Հայստանեաց ոռոքը եկեղեցւոյ ծիսից, կանոնաց և օրինաց հակառակ Էս էի ընթանում, թէ նոքա, որոնք ժամերգութիւն, Ամենակալի անուան փառաբանութիւն, հնաւանդ եկեղեցական սովորութիւնների յեղափոխութիւնք իրենց փառասիրական հաճոյքներին էին զոհարերում։ Խաչ, խաչվաններ, միւռոն, մասունք սրբոց, եկեղեցական անօթներ, զգեստներ իրենց յառաջընթաց կարապետող դաստկարգում և հնազրոշմ խորհրդականութիւնք այլանդակում՝ բոլորովիմք արդարացուցանելով Մարկոս Աղաբէկեանի հանրածանօթ բողոք, «հայկական եկեղեցւոյ դաւանութեան անդիտութեամբն»։ Միայն Նիկոլիներ կան Հայոց եկեղեցւոյն վնասակարներ, ի՞նչու չ'են յիշւում Սուրբմակ, Բրդիշոյ և Շմուէլներ հանդերձ հին և նոր նմանեօք։

Հոգիոր ծնողիս ևս բարեհաճում էք շեղակի ձեռով բաժին հանել Զեր անուանի օրհնութիւնարերի մէջ— «զիս նորա ձեռնասուն և ինսամովին ՚ի մանկութենէ զարգացեալ կարգալով»։ Հատուածիս վերայ փոքրինչ կանգ առնելով՝ ողջամիտ Հայրապետիդ սիալ կարծիք ուղելու համար, կենսագրութեանս վերայ մէկ թուցիկ ակնարկ պիտի ձգեմ։ Ես ծնած եմ 1837 թուականի գեկտեմբեր ամսոյն 10-ին, մտած

եմ յէջմիածին վանական դպրանոցի գիշերօթիկ յաշակերտութիւն 1849 ամի հոկտեմբերի 20-ին, ուր ուսմանս ընթացք աւարտելով՝ հրամանաւ ներսէս կաթուղիկոսի և կարգագրութեամբ Ախողի 1856 թուի մայիսի 26-ին ընկալած եմ ջահընկալութեան աստիճան։ իսկ ընդ ձեռամբ և ինսամովք Գերապատիւ ոքրագան Մակար Արքեպիսկոպոսի մտած եմ 1857 ամի մարտ ամսոյ 25-ին՝ բարեհաճութեամբ Տէր Ղուկաս Արքեպիսկոպոս Արագածունի Տեղակալին։ ՚ի մանկութենէս աւանդութիւն չկայ էջմիածին ձեռնասուն ունենալու, այդ առաւել Տաճկաստմի քաղաքներումն է սովորական, ուր և ակնարկութիւնք են լինում այգսիսի անբարոյականութեանց համար Դատեան Յոհաննէս ամիրայի նման մարդկանց կողմանէ։ (1.) էջմիածնի նշանաւոր եպիսկոպոսների խնամատարութիւնք իւրեանց հոգեւոր, պատանեհանասակ գաւակիների համար լինում է ճիշտ այնպէս՝ ինչպէս ցայսօր Վենետիկի Միկթարեան վանուց «ընծայացու և ընծայարան» բառերն են արտայայտում։ Նոքա, որոնք կուսակրօն կենաց ցանկանում են նուիրուիլ, յատկապէս յանձնուում են համբաւաւոր եպիսկոպոսներին կամ վարդապետներին նոցա թէ ուսմանց թերին լցուցանելու, և թէ զրտկան երկասիրութեանց վարժելու։

(1) Շատերին յայտնի Ե՛ս որպէս սասայդ ճշմարտութիւն, որ վսկեմափայլ Յոհաննէս Բէյ Դատեան քանիցս Գէսորդ չորրորդին իւր պատրիարքութեան ժամանակ նկատմունքներ արած է Մանտաղնեան Մտեփաննոս, Դիմիրճեան Մտեփաննոս և Մանկունի Մտեփաննոս—մանկահասակ սպասաւորների պահպանութեան համար՝ որպէս անպատշաճ պատրիարքարանի հաստատութեանն։

Այլ թէ ի՞նչպիսի օգտակար ուղղութիւն է ստացել իմ
առ ոսս Ամենապատիւ Մակար Արքեպիսկոպոսի
հրահանգութիւնն՝ ըստ մասին ցոյց կ'տան էջմիածնի
գրանոցի կարգադրութիւն և ցուցակագրութիւնն, ըստ
մասին և ունեցածու ուսուցչական պարտաւորութիւնք
նոյն վանուց զպրանոցում, որոյ քառամեայ արդիւնք
չ'եմ ամաչիլ ասել ճեմարանի իննամեայ արդեանց
հաւասար է, եթէ առաւել չ'է։ Սակայն և այնպէս,
արդեօք, Պետրոս Եպիսկոպոսի Պոլիս Գօրեցի հան-
գուցեալ Եսայի Տէր-Դաւթեանցի ժառանգների ձեռ-
քէն յանուն Զեր մի հարիւր պօլիմպերեալ ոսկի ստա-
նալին, 'ի Տփխիս և յէջմիածին Տէր Դաւթեանց Յով-
հաննէս աւագ քահանայէն, Գօրեցի և Ղարեցի ձեռ-
նագրուողներէն յատկացեալ գումարներ կորդեին ա-
ռաւել պատուաբեր են Զեզ, քան իմ ամէն պատա-
հածս քաղաքն որ և է մէկ աղգային հաստատութեան
յիշատակ թողնելին պարձանք են Մակար Արքեպիս-
կոպոսին։ Արգեծք, Զեր ձեռնասուն և հոգիաշունչ ա-
շակերտ Ստեփաննոս Եպիսկոպոս Սանտալճեանի՝ ա-
ռանց հարկադիր պատճառների, Հոռմիայ պապի հո-
գաթափներին 'ի համրոյը և 'ի գաւանափոխութիւն
խոնարհելին էր փառահեղ, թէ իմ երկամեայ միջոց-
ներով ամենատեսակ յանիրաւի զրկանքների համրե-
րեն։ Գէորգ Զորիրդգի դաստիարակութեան պտուղ
Մանկունին առաւել շոնդալից բոմբիւններով ամէն
հայ մարզու սրաի ախուր զգացմանց արձագանք է
տալի՞ս թէ Մակար Արքեպիսկոպոսի իննամովք զար-
գացեալ 'ի քան և մի ամեայ հաստակէն և այսր—
Սուքիան Պարզեանց։ Որքան միատակ պարզութիւն

ձևանալ է, որ զիս իրբի աշխարհական ոք կ'յանձնէք
Բեսնարաբիոյ առաջնորդին տանել իւր հետ։ Երեկ-
նորա միւս աշխարհական սպասաւորների պաշտօռա-
զվագիր դուք ստորագրած և հրամայած էք Պա-
ղարշապատէն բացակայիլ։ Մակայն, եթէ Վարդգէս ա-
ւան պապական իշխանութեան սեպհական կալուած
կ'համարուէր, այդ գերօրինակ բաղդ չ'էր կարող ու-
նհնալ Հինն-Եսափիջիան՝ ուր ես էի զանուում։ Եւ
ի՞նչպէս՝ Քիշնի պատարագում եմ, Նոր Նախիջիան
նոյնն եմ առնում, քարոզում եմ, և այն իրբի Եպիս-
կոպոս, Պուք տեղեկանալով հանդերձ չ'ք պահան-
ջում, որ աշխարհական անձն իրաւունք չ'ունի այդ
եկեղեցական պաշտօն կատարել։ Այսքան փառաւոր
ճշմարտափոսութիւնք մէկ աղզբնալիր Հայրապետէ չ'էր
սպասուիլ։

Իմ անիրաւութեանց, չարամտութեանց և մեզաց՝
իրբի զիս ձեռնաղբող, կցորդ չ'ք լինիլ, անսուածա-
րեալ Դիտապիտ, երկիւզամ Հաղարապեա խորհրդոց
եկեղեցւոյ յաւիտենական Բանին։ որովհետի Դուք
միշտ անձնական արժանիքն էք ունեցել երաշխաւոր
Զեր ձեռնաղբութեանց և ոչ արձաթն։ Դուք միշտ
վարուց և բարուց անարատութիւնն էք ընտրել կոչման
յատկանիշ՝ քան ակնառութիւնն և ոչ երբէք Զերոյին
արբանեակներ յառաջ էք բարշել 'ի բարձր աստիճան
և բազմամեայ վաստակաւոր երախտաւորներն սրտա-
րեկ թողել։ Յո կենդանի հաւատքն՝ որով հաւատա-
րիմ լինելով Յիսուսի առ Պետրոս հրամանին՝ «Քրիս-
տոնէաբար չնորհեցիր ինձ յանցանքս», խոստվանե-
ցար, հազորդեցար և միաբանութեան աղիսեալ ցըթունք-

ներով՝ իբրթէ կեանք մաղթեցիր, օրինաւորութիւն և կարգապահութիւն աւանդեցիր, զ՞եզ կ'կեցուցանեն առաջի անկաշառ ատենին նորա՝ յոր յուսացար: Այս, անյողզգով մեացիր Քո շատ անդամ մօտատես այցելուների յանդիման արտայայտած գաղափարին՝ «մեծաւորն հաւատք և խիզ չպէտքէ ունենայ»:*

Հազար բերան գոհութիւն Զեզ՝ արժանայիշատակի Քահանայապետ, որ բարեհաճել եք շնորհագիծ զըչով մըցանակագիր պարզել ինձ, որով համօրէն ազգի եպիսկոպոսաց մէջ զիս անհատ եք արած, և ուր ըստ Զեր բարձր արժանեաց օձ և կարիծ նկարագրուած եմ՝ ի պատկեր Աստուծոյ ոտեղծուածու, բաց ափսոս որ այժմս մարդիկ իրենց ճանաշման են հաւատում, քան այլոց վկայութեան: Ահ, այդ յերկնից վայր անկեալ ամբարտաւանին՝ ի ցոյց առնուած թունաւոր միջատներ և սողուններ չեն արդեօք՝ որ շատերի սիրա կրծում են, խայթում, երբ նոցա կարծեցեալ մշտնջենաւոր իշխանութիւն ժամանականը է ճանաչուում: Երբ նոցա աստուածեղէն երազեալ անսխալականութիւն մեղանչական է համարվում: Երբ նոցա անպայման հրամանարձակութիւնք չեն յարգվում: Երբ նոցա՝ ի հարցն աւանդից արտաքս վազելն մատնացնց է անուում: Այդ սոսկալի խայթոցաւորներն չեն արդեօք՝ որք օթևան են առնում նոցա հողւոց մէջ, որոնք իրենց անձնաւորութեամբ երկինք ու երկիր մարմաւորուած են

*Իմաստուն և արգարազատ իշխանաւորի համար 8, Գէորգ Զորբորդ հաւատք և խիզ շայլութիւն և մեղկացուցիչ թուլութիւն կհամարէր:

երեակայում, և զիրենք պաշտելի ներկայից և ապագայից հոչակում: Արդեօք իսրայէլի փառազուրկ արքայն այդ անմաքութեան հոգիներէն չէր խեղդուում, և անպարտ Դաւթի վերայ հանապազօրեայ արշաւանք հանգերծում հալածուելով և ինքն միշտ նորա հեգութեան ուրուականէն: Արդեօք՝ այդ օրնութեան զրուագ՝ զոր ինձ՝ ի ժառանգութիւն հաճեցայք ձգել, Զեր այլակերպեալ փառաց արտացոլութիւն չէր: Քանի սուր ոլաքներ կան նորա մէջ, որ անաջողակ ձեռքէ արձակուելով՝ վրիպում են նպատակէն և իբրևնց մահաբեր նշանակութիւն կորցնում: Քանի հազարաւորներ կան՝ որոնք անխար համոզուած են ճշմարտութեանս՝ որ մտաթափներ և հողեկան հիւանդներ միշտ Աստուած և թագաւոր կանուանէն զիրենք: Իսկ երբ ոտք քահանայից զլուխ թագաւորաց է, ուր կ'բարձրանայ ուրեմն Քահանայապետ անուանակրչուածն:

Ներեցէք, երանաշնորհ վարդապետ, ես հաւատք չնմիմ հասարակեալ առածի սուրբութեան մասին, «մեռելոց վերայ լաւ, կամ ոչինչ»: ապա թէ ոչ աշխարհիս վերայ ոչ զիր և ոչ զպրութիւն կ'զանուէր. ոչ արուեստ և ոչ զիտութիւնք կ'ծաղկէին. ոչ պարկեշտութիւն և ոչ անսամօթութիւն կ'տարբերէին. ոչ բարոյականութեան յարգ և ոչ մոլութեան պարսաւ կ'յայտնուէր: Ուստի այսուհետեւ ներկայս նախերգանք համարելով՝ խոստանում եմ, եթէ ոչ Զեր հողապատեան գամբարանի վերայ կանգնել թանգազին մետաղներէ, կիմ և պորփիւր քարերէ քերուր քանդակով մահարձան. եթէ ոչ վայելչահիւս և կողրկա-

հոտ ծաղիկներէ, սարդենի և մրտենի մշտադալար սոսերէ հիւսել պսակ. եթէ ոչ ոսկեթել պարսիկ և հնդիկ գիտակներէ, գամասկեան և շինական բեհեղներէ սփռել գիտարդ. գէթ մէկ նըբաթել սեաւ, մահաստուեր շղարշ տարածանել. իմ խորին համոզունքո է՝ որ ոչ միայն պապական բուլլաներով եկեղեցեաց մէջ ընդունուած սրբոց կաճառէն, այլ նոյն խոկ հրաշխաք մեծահամբաւուած և 'ի վաղագարենի աւուրց տաճարաց մէջ տօնեցեալ արդար կարծուածներէն Յիսուսի ձախ կողմն անցնողը կ'ինին. Աշխարհին Հայոց բանաւոր պատմութիւն առ կենդանութեամբ Եզր Հայրապետի հալածեց, վատրեց Մայրավանից հանձարաւոր Յովհան Եպիսկոպոսին «Մայրագոմեցի» անարդ մակդիր տալով, այլ յետ մահուն գրաւոր յիշատակաբանք զօրաւոր կաթուզիկոսի անուն զիսիր վայլը տպագրութեամբ նշաւակ թռեցին իւրապիտեաց ցանկում. խոկ զՅովհանուն՝ վառաւորեցին ընդուզափառան: Եթէ համանգաման Զեր տարապարտ գոների մննչիւն չ'ասաւ 'ի լսելիս աղջին, թնդ իմ հողոցհանութիւնք հանին: Առաքելոյ խոսքով վերջ տամ այլարանօրէն հոգեխօսութեանո, «Ես չ'եի անըզդամ, Դուք արարիք»:

Սոյն Բ.-րդ պրակումս յառաջ բերուած բոլոր անհամատ և անարժան՝ բայց անսուած ճշմարիտ, հոգիխօսիկ լիշտառակութիւնների համար յատկապէս ներոզութիւն ենք խընդուրում ամէն ընթերցողներից, վասն զի մեղ ևս յոյանի են գրական արժանիքի քրէնք. վեհագունից լիշտառակի յարդանք և միամիտների կայթակրութեան գատառան, սակայն որպէս բան առ բան պատասխան կմնաթիր չ'կարացինք լուկ և անըշտակ թուղնել:

Իրրե վերջաբան մի քանի խօսք տաեմ և կնքեմ: Ինչպէս երեւցաւ կամայ և ակամայ, հեռաւոր և մերձաւոր, մասնաւոր և պաշտօնական գրաւոր փաստերից՝ թէ տարապրութիւնս էր անպարտ, և թէ մեղայական ստանալին ննարաւորեալ. որպէս զի տօնելի Հայրապետի ոչ թէ խոճի խայթն՝ որ ամէն մարդոյ մէջ Աստուծոյ անհաջառ արդարադատութեանն մանրանկարն է դադար տռնու. այլ ազգային Քահանայապետութեան նուիրական բարձր իրաւունք վերակրծնէի: Գերաստիճան անձանց և մեծ ժողովուրդների մէջ ևս կ'աւենուի այսպիսի երևոյթները Հուզմայ պատկերն՝ անյիշտակ ժամանակներից՝ 'ոկած' նոյնպէս և զիրենք ուղղափառ համարող մեծ ազգութիւններ, սովորութիւն որած ևս ամէն փոքրիկ հօտերէ և ժողովուրդներէ դաւանութիւն հաւտաց պահանջել, նորանց 'ի հերծուածոյ փրկերու բարեպաշտ մտօր, շնայելով՝ որ իրենց առնն ըլւըրաւոր ազանդների բայն է: 'Ի հարկէ զրկանք չեն եկեղեցական նուիրապետութեան արժանեաց հայրապետանոյի վաթարութիւնոր: Երեւցաւ և վայեց. այն ախուր ճշմարտութիւնն ես, որ իմ բոլոր խորհրդատուններ անքան մօտազոյն չ'են ճանաչած Գէորգ Զորբորգի անոխակալ հոգին, որքան ես՝ որ տատանուում եի վճռական քայլ անելու. խոկ մեծ մարզը՝ նզուից կոնդակ՝ իրրե ձեռն բարձրացեալ զլխոյս վերայ 'ի հարուածել, սարան, նորան ցոյց տալով հասաւ իւր նպատակին և ինձ հարազատների բերանով կտուկեց, իւր անխօս ոսկեներէն ստանալ թողոյթիւն:

Ուշագրութեան առարկայ խնդիրն այս է, եթէ
Հոգևոր Տէրն հասաւ իւր նպատակին, բաւականացրաւ
իւր փառասիրութիւն Սուքիաս ընդվեալ, ըմբռստ և
բարձրեղջիւր եպիսկոպոս գարշապարաց ներբոյ տա-
րածեալ աեանելով և հայրաբար գթացաւ ըստ քրիս-
տոնէական պարտաւորութեան ներելով՝ (խոստովա-
նիմ և հաւատամ) և Սինօդին հրամայեց պաշտօն
տալ, Սինօդին՝ որ շառագունեց մեղայագիրս արձա-
նագրել իւր օրագրութեանց մէջ, ինչու ապա եր-
կամեայ օրերով յառաջ գրուած կոնդակը չոչնչացրեց:
Դորա պատասխան ամենցն յայտնի է. վաղնջական
սովորութիւն էր հայոց Հայրապետներին իւրեանց
յաջորդների անունով կնքուած ծրարները թողնել՝
որոնց մէջ՝ թէև անյայտ ընտրուելու անձն, հրա-
հանգութիւն կտրուէր ազգի որպիսաբար կառա-
վարութեան համար անձնական փորձերէ և գիտակ-
ցութիւններէ յառաջացած։ Խնկելի Հառապետը ցան-
կացել է՝ որ իւր թեթև շունչ և հոգին գերեզմանի
այն կողմէն ևս հովուէ և կառավարէ վեհարանն յա-
ջորդողի միջոցաւ, և այդ ոչ միայն իմ նուաստու-
թեան վերաբերութեամբ, այլ և իւր արժանընտիր
մերձաւորաց և սպասաւորաց, թողնելով մէկ կտա-
կաձև գրուած իւր յետամնաց կայլից համար և մոռա-
նալով այն փարելի ձեմարան, որոյ կառավարութեան
ապահովութիւն միշտ մատնացնեց է արել իւր սեպ-
հական գանձուց վերայ՝ որք դժբախտաբար շարժու-
նութեան գաւակ են եղել ինքնապլուիս անհետանալով։
Ապա թէ ոչ մի որ և է խարհուրդ չէր կարող ունե-
նալ Սինօդի անուամբ գրած հրաման՝ երկու տարի-

ներով վեհարանում թողնել։ Այն ինչ որ իրեն վըս-
տահելի չէ եղել, յաջորդին է կտակաւանդել։ Երեխ
այս ուղղակցիու արդարախոնութեանց մասին մեծ
եպիսկոպոսապետ ցաւոց անկողին կթրչէր արտա-
սուօք, իսկ Մանկունին կ'սրբէր թաշկինակով։ Եթէ
այդպէս էր միայն, որբեմն՝ ինչն էր ստիպում դեռ
կաթուղիկոս չունեցած ժամանակ, որին կ'պատկանէր
թողած հրահանգին լաել կամ ոչ, այդ խոստովանա-
գրութիւնն՝ այսպէս եմ անուանում, ըստ որում Սի-
նօդին յանձնուած չէ եղել ըստ նամակի Երեմիա
եպիսկոպոսի, ՚ի լոյս ձեռագիր և տպագիր հրատա-
րակութեան հանել։ Պատճառն թերես պարոն Մելիք-
գագէի և Նոր-Դարի ՚ի թիւս այլոց և Սուքիաս եպիս-
կոպոսին կաթուղիկոսական ընտրելի ցոյց տալն էր.
մանաւանդ որ՝ թէ կոնդակի և թէ ծանուցագրի մէջ
կան քանի մի անարդար ակնարկութիւնք և առ Տե-
ղապահ Սրբազնն։ Այսպիսի ձարարութեան գէպք
պատահեցաւ և Սարգիս Արքեպիսկոպոս Զալալեանցի
չնորհիւ՝ ձեռագիր տեսրակներով արատաւորել Մատ-
թէոս կաթուղիկոսի մահուանէն յետոյ ընտրելիութեան
հրապոյը ունեցող կենզանի արքեպիսկոպուներ, որին
պատշաճաւոր անդրագարձ ևս տրուեցաւ։

Սիժմս մնումէ ազգայնոց ամենախորին ուշագրու-
թիւն գարձնել Հայաստանեայց Հայրապետութեան
Մայր Աթոռոյ և հնագարենի որբարան կարգացուած
վեհարանի վերայ թէ՝ ինչու այնքան արհամարտած է
այն, մինչև ամէն արդար և անարդար ձեռք խառնում,
խճճում են այնտեղ եղած խոստովանագրութիւնը և
պատճէնական մատեաններ, մոռանալով այն պատ-

մախառն ակնածելի աւանդութիւն՝ որ Հայոց Դիտապետի գործեր, կայքեր, ծառայք անձեռնամիենի են մինչև յաջորդի ընտրութիւն. ինչպէս և Բարձրագոյն հաստատեալ կանոնադրութիւն վաւերացնում է: Արդեօք այս իրողութիւններ չեն յառաջանում միաբանութեան արտակարգ զարմանքից վեհարանի խորդ, ոտար և անօրինակ վարմունքի մասին՝ զոր որոտախօս ճարտարաբանութենէ առաւել ազգութեզով՝ հոգութ միամիտ սրբութեան, բացատրում է Երեմիա եպիսկոպոսի նամակի հիացմունքը: Արդեօք չէ յառաջացած և նորանից՝ որ այդ հոգետունը՝ Գէորգի շնոհիւ, ոչ Տափիոսի, այլ Հոռմուլոսի և Սիրակուսացւոց իշխանաւորի ապարանքների երևոյթ է ստացել. ինչպէս էջմիածնի վերջին տարիների վանական կեանքին ծանօթներ կ'վկայեն. և Սրբազն Մակար Սրբեպիսկոպոսի զրութեան այս հակիրճ տողեր՝ «Յիրաւի, «Հանապազօրեայ նահատակութիւն է վասն իմ մնալ «անոք, անօդնական և անընկեր, զի չիք ինձ աս» ատանօր խօսակից ոք, ոչ մտանող և ելանող և ոչ »միթարութիւն, կամ յոյս բարեփոխութեան վատ» թար վարչութեան», առաւել յստակութեամբ կ'նկարագրեն: Եւ ում համար կայ միթարութիւն, մտանող և ելանող, երբ նորա համար չկայր, այս ինչ նա բոլոր միաբանութեան ուսուցիչ և դաստիարակեների վարժապետ էր: Ինչո՞ւ չպէտք է լինի. որովհետեւ բռնաւորութեան կասկածութիւնը ամէն ել և մուտքանումէ. ամէն մերկութիւն տեսնելու չափ մտաց լուսաւոր աչք ունեցողներին հեռացնում է:

Հայրապետութիւն և Հայրապետանոց բառեր

նոյանանիշ չեն թէկ հայ ազգի բարբառին համար, սակայն անբաժան առնչութիւն ունենալով եթէ առաջինն է մեր ինքուրոյնութեան, ազատութեան, գէթ ՚ի կրօնականս, դարերից ՚ի վեր սրբագործուած բարոյական արձան, վերջինս նորա համապատշաճ պատուանդանն է, ինչպէս կոթողն ամենիս համար երկրպագելի լինելու չափով նուրիական է, նոյնչափ պէտք է լինի համակրելի նորա հաստատուն ներքնավէմ. ապա թէ ոչ մեծագին ոսկի արձանի սեատեսակ կապարեայ հիմնաքար կ'համարուի: Մեսրոպ Թաղիալեան թքամանը թանաքաման տեսնելով վեհարանում՝ յոյսը կտրում, ոտից փոշին թոթափելով՝ չընդկաստան էր գնում. ինչ յոյս է տալիս մեզ այժմ վեհարան, ուր ամենասովորական բան ու գործն էր մարդոյ պատուի հետ խաղալ: Որոյ գէվիզն էր հաւածանք . յարուցանել փոքր ՚ի շատէ բանագէտ անձանց վերայ, քան թէ ժողովել: Դեռ ապագայն քանի քանի ինքնահնար՝ այս և այն քաղաքի հասարակութեան անուամբ, սորա և նորա վերայ բասրագրեր գուրս կ'հանի հանգուցեալի գործերէն, արոնք արիւնոտ ձեռքերով զգուշութեամբ պահարանած են: Ի՞նչ օգուտ թանաքամանի այսօրինակ կիրառութենէն: Նորընախը Հայրապետին կմնայ Տուբիայի ձկան սիրտ ու լեարգով, կամ Դաւթի սաղմոսարանով մտնել այդ վեհարան, որ այնքան բարձր անջրակետ զրած է վանահօր և միաբանութեան, Հօր և որդւոց մէջ:

Փ.

Հարցնում եմ, հաւանեցի՞ր՝ յարգելի՞ ընթերցող:

Գիտեմ, պատասխանդ երկաթագիր Ո՞Չ է: Հաւատա՛,
ես ևս չեմ համակրում պատահածին: Վկայք եմ
անուանում Գերապատիւ Երեմիա և Արփատակէս սըր-
բազան եպիսկոպոսներ. Երբ նոցա հետ ամիսներ յա-
ռաջ գրաւոր յիշատակութնն է եղել զրբուկիս ոկրպ-
րում դրուած կոնդակի մասին, ասել եմ իմ կարծիքով՝
որ չ'արժէ անգործագիր զրութեան վերայ դատաս-
տան առնել: Այն կ'նմանի դեռ հեղինակի գարակից
գուրս չ'եկած մէկ սեագրի, ուրեմն՝ և ոչ քննութեան
ենթարկայ: Բայց Երբ նոյնիմաստ ծանուցագրով
հրատարակուեց ամէն տեղ և տպագրուեց Կոստանդ-
նուպօլսոյ լրագրաց մէջ, այլ ևս չ'կարացի անիրա-
գործ համարել զայն և լոել. ըստ որում հարուածն
արդէն նպատակին հտած է, կողմնակի միջոցով լի-
նի այն թէ ուղղակի. ուրեմն պէտք էր հականարուած:
Այն, կան մեր մէջ շատեր՝ որ ստուգութեամբ հա-
մոզուած են «զգարշելիս պարտ է ծածկել քան հրա-
պարակել». որ աստուածաշնչական սուրբ պատու-
իրանին պատիւա կան, «գծանականս հօր քո մի ա-
ռակեսցես»: Հին առասպելաբանութիւնն էլ ագռաւին
հարս է անուանում, միայն ՚ի պատիմ անպատշաճ
իրողութեան անթաքնաղածութեանն սեափետուր
թուզունի փոխուած: Սակայն կան և այնպիսիներ՝
մանաւանդ թէ առաւելազանց թուով, որոնք ամօթ և
պատուոյ զգացում ունենալուս վերայ կ'տարակուոին՝
այսքան անարգութեան լուութեամբ տարածո ժամա-
նակ: Որովհետեւ և համբերութիւնն ևս չափ ու սահ-
ման ունի և եղածն եղած է արդէն, ուրեմն և այս
թող մնաւ տպագայից դատաստանին կոնդակի և ծա-

նուցագրի հետ, որպէս զի քննաբանք միակողմանի և
մակաբերական դիրք չ'բռնեն:

Ա. Ե.

՚ի 24 յունվարի 1884 ամի.

՚ի քաղաքն Աստրախան:

ՅԱՀԵԼՈՒԱԾՈ Ա.

Երիան, (թղթակցութիւն «Մեզու Հայաստանի»
լրագրի (1878. շաբաթ 2 սեպտեմբերի № 34.

Մեզ շատ անգամ պատահած է ազգային հան-
գէմների, ամսագրերի, շաբաթագրերի և օրագրերի
մէջ կարդալ գաւառական թղթակցութիւններ, ձա-
նապարհորդական նկատմունքներ և հնագարենի նշա-
նաւոր վանքերի շինուածքների նկարագրութիւններ:
Դրանցից շատերը զանազան խորհրդածութիւններ
անելով՝ յայտնաւմ են իրենց հեղինակների ջերմե-
ռանդութիւնը, սէրն ու սրտերի վաս զգացմունքներն
ազգային վաղաւուրց յիշատակարանների անեղծ պահ-
պանութեան համար: Ճշմարիտ որ, քիչ հայ սրտեր
կ'զնուուին՝ որոնք իրաւացի զայրութից չ'բարախեն
և քիչ զլուխներ՝ որոնք լրջութեամբ չ'խորհին երբ՝ օրի-
նակի համար, կարդան Փորձ» հանդիսումն Պ. Գրշի և Պ.
Քաջրերունւոյ հարցերն ու մեղագրութիւնները. «Բնչ
«Եղան, ուր գնացին այն սեպհականութիւնները,
«որոնց քառորդը այսօր հազիւ վայելում է սուրբ
«Աթոռը, չ'նայելով որ դորանք ունեցել են Շահերի
«և Սուլթանների հաստատուն ուղամներ և ֆիրման-
ներ, ունեցել են խաների, Փաշաների և Շեյխնե-

«լամիների թղթեր և դիւանական ու մասնաւոր անձանց գրութիւններ»: Եւ թէ, «Շատ վանքեր էջմիածնի համար դարձել են աքսորանքի տեղ: Աքսորուածները չ'են կարող ունենալ ոչ մի բարոյական պարտականութիւններին էջմիածնի առաջ: Իսկ էջմիածնը չ'ունի ոչ մի յարաբերութիւն աքսորեալների հետ, որ շատ բնական է: Ապացոյց, որ Դարալագեազու (Վայոց «Ճոր») Գնդեվանքումն գտնուած հնութիւնների մասին քաղաքական իշխանութեան կողմանէ գրագրութիւնները բացուելով՝ Կովկասեան հնագիտական ընկերութիւնը պահանջումէ զննութեան համար մէկ թեթև «փոքր իր և ստանումէ մոմակալ (շամագան), այն «ինչ սուրբ էջմիածնը՝ վահօրէից անմիջապէս իշխանութիւնը, գրականապէս չ'եր իմանում և գուցէ «այժմ ևս չ'փառէ ոչինչ այս գիւտերի մասին»: * Քիչ հայեր կ'գտնուին նմանապէս, որ չ'համակիրեն այն առողջ մտքերին և ամենակարեսը խորհուրդներին՝ որոնք Մեղուի և Փորձի Պ. Պ. խմբագիրների կողանէ քանիցս անգամ առաջարկուել են՝ հիմնել էջմիածնում մէկ ընդարձակ ազգային թանգարան, ուղարկել ժողովէին հին զէնքեր, դրամներ, հրովարտակներ, ձեռագրեր, արձանագրեր և այլն: Կազմել հոգհորականներից և աշխարհականներից հնասիրական ընկերութիւն՝ որ հետախուզէ հայ թագաւորանիստ մայրաքաղաքների աւերակներ, ապաբանքներ ու տմարաններ, և հսկէ ազգային հնութիւնների մնացած մասերի անկորուստ մնալուն, որոց համար և սկզբնական ծախքերի զումար ցոյց են տուել Ամբո-

*Փորձ երկրորդ տարի չորրորդ թիւ 359 և 404 երեսներ:

տերդամի Հայոց եկեղեցւոյ վաճառումից ստացած 30,000 արծաթները: Եւ կամ բնչպէս մէկ հայ մարդ չ'ի հաւանիլ մշակի երեանի թղթակից Պ. Ա. Եր. առաջարկութեանը, «Դարալագեազում հանդիպում «Ենք շատ աների՝ որոնց վերայ գործ են զլուած «վանքերի քարերը: Արգեօք սուրբ էջմիածնի հոգեսոր «կառավարութիւնը չ'ը կարող վարդապետներից մէկ «յանձնաժողով կազմել, որի պարտը լինէր հսկել «հնութիւնների վերայ և ոչ ոք իրաւունք չ'ունենար նրանց մի քարը շարժել իր տեղից»: *

Ինչ որ այժմ հնութիւնների և կալուածների անկորուստ պահպանութիւնն է մեզանում հետզհետէ գնալով աւելի և աւելի կարեսը համարուում, մէկ ժամանակ էլ հոգեսոր գպրոցների միակողմանի ուղղութիւնով պահպանութեան խնդիրն էր քննւում: Այս վերջին հարցը իրեն լուծումն ստացաւ և օր ըստ օրէ կանոնաւորուումէ ազգայնոց իրաւացի ու կարեսը միջամտութիւնով, կամիմ ասել դպրոցի մերձաւոր խնամակալութեան պաշտօնն իրենց վերայ առնելով: Ուրեմն շատ բնական է՝ որ ոչինչ բարի խորհուրդ, առաջարկութիւն և պահանջ յառաջ գնալ չ'է կարող՝ առանց ազգային հոգաբարձուների օր յառաջ միջամբաւութեան և եկեղեցական կալուածական ու հոգեսոր կառավարութեան գործերում: Երջանկայիշատակ ներսէս կաթուղիկոսը գորա պատկերը ցոյց տուաւ՝ աշխարհական խորհրդական անգամներ կարգելով վիճակային և թեմական տաեանների մէջ: Այդ մեր եկեղեցւոյ և ազգութեան վայելուշ եղած զրոշմը

կըում է այժմս և Տաճկաստանի մերազգի եղբայրների ներքին կառավարութիւնը. Մենք կարծում ենք՝ առանց այսպիսի կարեոր բարեփոխութեան, երբէք և երբէք ազգային շէն ու անշէն հնութիւնների, վանքերի վարչական կորստարեր ձեզ չի փոխուիլ: Շատ տեղեր ուխտատեղիների արդիւնքները պատկանում են դպրոցների, թէ այսօր մէկ քանիսն ճեմարանի անունով էջմիածնի կառավարութիւնը յետ է ստացել, ուրեմն՝ բնչ ապօրինութիւն կ'լինէր երբ թեմական դպրանոցների և վիճակային ուսումնարանների հոգաբարձուք կոնսիստորիաների և հոգեոր կառավարութիւնների մէջ առանձին անտեսական բաժանմունք ունենալով՝ վանական խորհուրդ անուն կրէին և հոգեոր հարց հետ ի միասին վանքերի ներքին և արտաքին կառավարութիւններին հոգ տանէին, վանահայրերի և միաբանութիւնների հետ սերտ յարաբերութիւններ ունենալով. Մենք համոզուած ենք, որ այս եղանակը շատ օգտակար կարող էր լինիլ ամէն կողմանէ: Նախ ուխտաւորների առաջ առաւել ազգեցութիւն կունենայ պատուաւոր աշխարհական տեսուչը հոգեոր տուրքերը կրկնապատճելու մասին: Երկրորդ՝ քաղաքացի հայր առաւել լաւ կ'հասկանայ և կ'կարգադրէ վանքի նորոգութիւնն և կացարանների շինութիւնները՝ քան թէ աչքախուփ պարսպի մէջ մեծացած վեղաբաւորը: Երրորդ՝ բանագէտահոգաբարձուն յաջողակ կարող է կարգագրել վանքական կալուածական գործերը արդիւնաբերութեան ու անկորուստ պահպանութեան համար, քան թէ հոգեոր ատեանների բաղմազքաղ և թերուումն անդամը: Չորրորդ՝ զարգացած և աշխարհատես

մարզը աւելի կ'հաշառուի այն մտքի հետ՝ շէն վանքերի արդիւնքներով ամէն մի մերձակայ աւերակ վանք կամ նորոգել, կամ գնէ չթողնել բոլորովին անհետանալու, քան թէ մի վանքեցի ամփոփ հասկացողութիւն ունեցողն: Խոկ թէ ինչեր կորցրած է ազգն իւր հարիւրաւոր կանգուն և կիսակործան վանքերի բարձի թողի գրութեան մէջ այս վերջին յիսնամեայ ժամանակում, երբ նոցա բոլորի շուրջը ժողովուած են դարձեալ նոցա օտարացած որդիք, դժուար չ'է հասկանալ կամեցողի համար գուշակելն:

Փոքր ինչ ընդարձակ խօսքերով յայտնենք մեր միտքը՝ իրողութիւններ յառաջ բերելով: Ա. Վարդավագուի տօնին Գեղարդայ վանքումն բաւականին ուխտաւորներ կային, համեմատելով անցեալ տարիներին խիստ շատ էր համարվում: Այդ տօնի արդիւնքն ինչպէս տեղեկանում ենք, մօտ չորս հարիւր մանէթ է լինում. բաղմութեան հետ բաղդասելով շատ քիչ է: Եթէ աշխարհական բանագէտ վերակացուներ լինէին տօնը կարգագրուներ՝ մենք կարծում ենք, երեք հարիւրի չափ մորթվող մատաղներից առնուազն յիսունն կենդանի կ'թողնուէր յօդուա դպրոցի, շինութիւնների մատենում փոխանակ ութառուն մանէթի երկու հարիւր կ'ստորագրուէր, մոմավաճառութիւնից փոխանակ հարիւր յիսուն մանէթի երեք հարիւր կրասացուէր, և այլն, որով ընդհանուր եկամուռն երկպատիկ կ'լինէր: Ինչպէս մենք նկատել ենք՝ շատ տեղեր՝ ուխտաւոր ժողովուրդի սառնութիւնը չէ պատճառ ուխտաեղիների արգեանց աննշան լինելուն, այլ նորա չ'հասկացողութիւնն: Նա արգէն իւր

տանից դուրս գալով աչքի առաջ ունի ծախքերը, որոնց համոզող խոհեմ հոգաբարձուն կարող է այլ ուղղութիւն տալ ուսումնարանների օգտին, քան թէ մինչև ցայսօր եղած 'ի դուր վատնոգութիւնները: Ի՞նչ է եղել արդեօք ուխտակնացութիւնների բուն նպատակը: Հին և նոր պատմութիւնները մեղ ուսուցանում են, առաջինը՝ ուխտաւորի դաշինքն է մեկ տեսակ առւրգով, որ իրեն համար զոհողութիւն է, ուխտատեղին շահել, և երկրորդ՝ իւր խղճի վերայ ծանրացող բարոյական բեներից թեթևանալ ճանապարհորդութեան նեղութիւններով ու անհանգստութիւններով, որ մի տեսակ ապաշխարանք է: Այս ուղղութիւնից ամենին տարբեր չ'է այժմեանս ուխտաւորների արարքը. իսկ թէ կան աչքի ընկնող զանցառութիւններ, գորանց առիթն այնքան նոցա համարձակութիւնների մէջ որոնելու չ'է, որքան վանքական կառավարութիւնների թուլութեան և անկարգապահութեան: Այլ թէ որքան սառոյդ է այս մեր գիտութիւնը՝ կարողեն փորձած լինել այն պարոններն, որոնք գաւառացի ուխտաւորի խառնակ նիստուկացի համար թեթև նկատմունք արած ժամանակ՝ իսկոյն լսել են նոցա բերանից «աղա ջան, գիւղացի մարդիկ ենք, չ'գիտենք, ով է մեղ խրատ տուողն» և տեսել են նրանց ամօթոյ քրանքով ողողուած՝ իրենց անվայել շարժմունքն ուղղելը:

Այն որ հայն է՝ որ սուրբ էջմանի վանքը մատած ժամանակ այս և այն կողմը շրջելէն յետոյ, երբ տեսնի արելեան, արևմտեան և հարաւային կողմերից հին ուսումնարանի ու հացտան, վեհարան-

կան և շտեմարանների ու սեղանատների շինուածքների յետեկից պարսպամիջի ընդարձակ գատարկութիւնը, հիւսիսային կողմից պարսպի ընդարձակելու հարաւորութիւնը, տեսնի վեհ և հոյակապ տաճարի շրջագաւթի անձկութիւնը և մարի ունենալով տեղւոյն օդի խստութիւնը, իսկոյն չ'խստովանի այդ խառնագինթորութեան մէջ (թէ համեմատելով ուրիշ վանքերի հետ՝ էջմիածինը ամենակատարեալ բարեձեռութիւն ունի), առողջապահական կանոնների հետեւողութեան և վայելչութիւնների նմանողութեան բացակայութիւնը: Միթէ միաբանութեան սենեակների, շտեմարանների, հիւրանոցի, վեհարանի և այն շինութիւնները չ'էր կարելի յետ տանել այնքան՝ որ հին պարիսպը գեղեցիկ քար ու կիր նորոգուելով՝ լինէր միանգամայն ամրութիւն վանքին և յետին պատր շինութիւնների. իսկ միջավայր անագին ընդարձակութիւնը կանոնաւոր խճուղիներով և վայելչական ձևով բազմասաղարթ տունկերով զարդարուելով՝ առաւել հոյակապութիւն ու շքեղութիւն տարտաճարին և վանականների խղճուկ փակուած կացութեան դիւրութիւն լինէր: Այն որ հայն է՝ որ փոքր ՚ի շատէ ճաշակաւոր շինութիւններ տեսած լինելով՝ ազգացին որ և իցէ շէն կամ անշէն հասաւառութիւն մտնելով զիւաւոր շէնքերի ճարտարապետական դրոշմուածքի վերայ հիացած ժամանակ, իսկոյն չ'ցուի այն առաջնակարգ շինուածքի մերձակայ անյարմար կցուրդների վերայ, որոնք՝ թէ լինին հաւաշէն և նրբածն, չեն դադարիլ գեղեցիկ և բարեձե երեսի վերայ բուսած անձոռնի ելունգների (պալար, խոց)

Նմանութիւնը տալուց ի՞նչ է պատճառ այս անշրջութիւնների, եթէ ոչ վանական խցակեաց գլուխների նորանց արտազրութեան հեղինակ լինելը։ Հասկացող մարդը, թող իւր մաքով զնահատէ սուրբ Աթոռի՝ բացի տաճարի և ձեմարանի—բոլոր շնչքերը, թող հաշուէ նա հազար տարիներով Հայոց մեծաց Հայրապետանոց լինելն, իսկ մենք կասենք նորան պատմական անսուտ տեղեկութիւններ՝ թէ ամէն մէկ տարի առնուազն շինութիւնների և նորոգութիւնների անուազվ ծախս է եղած այստեղ ազգի քսակից տասն հազար արծաթ, այդ խարխուլ շինուածքներն ունին այժմ գէթ ծախսուածի հարիւրերորդ մասի արժէքն՝ ամենին։ ի՞նչ է պատճառը։ Շատ հասարակ և սովորական բան, մի կաթուզիկոս շինել է, միւսն անյարմար համարելով քանդել և այլ կերպարանք է տուել զործին։ Չէ եղել մէկ բնդհանուք նախազիծ բոլոր հարկաւոր համարուածների մասին, որին համեմատ տարուէ տարի ամուր, հաստատուն ու բարեձև շինուելով համենէր մէկ երջանիկ օր, որոյ մէջ այլ ևս նոր շինութիւնների անհրաժեշտ պէտքեր չ'զգացուէին։* Այժմս ևս ուշ չէ, եթէ ազգայնոց մէջամութեան շնորհիւ Մայր Աթոռի կառավարութիւնը ունենայ հարկաւոր շինութիւնների խելացի ձեռփ կազմուած նախազազափար՝ աներկմբան ենք, որ երեսուն տարուայ մէջ ամէն տարի տասն հազար ծախսելով, կարող է ունենալ հիասքանչ, կատարելած և ամբափնդ շրջապատ շինութիւններ և ահազին դրախտանման,

* Շինուածական զրութեամբ մասամբ այժմ ևս ողբալի կացութեան մէջ է Մայր Աթոռն, ըստորում գաղիմի ան-

վայելուչ դաւիթ, որոնք ամեն տեմսողի կարողանան գմայլեցնել:

Գ. Քանի քանի անգամ զրաւոր ու բանաւոր առարկութիւններ կ'լինին եղած մեր ազգայնոց շըջաններում՝ թէ այս ինչ վանքի կալուածքները վիճողներին աւար գարձաւ, այս ինչ վանքի կալուածքիրը կորած է, անհետացել է. այս ինչ վանքի կալուածքը չորս անգամ տուաել արդիւնք է բերում, քան որքանով տրուած է նա կապալի։ Բարեխաղանութիւնով

խորհուրդ գործողութիւնները կրկնվում են և ժամանակիս տհաջութեան կողմանէ։ Հազիւ 15 տարի լինի երր ՚ի Տէր հանգուցեալ Հայրիկն ազգի նուէրներով հազարներ ծախսելով կանգնեց տաճարի հարաւ-հիւսիս կողմերում աննպատակ գմբէթապարդ բարձունքներ՝ մինն հանգիսակասարութեան և միւսն հայրապետական գերեզմանոցի համար, և ահա վերջին օրերս՝ զարձեալ ազգային հինգհարիւր բուպիւներ ծախսելով—ինչպէս հրատարակուեց լրազրերում, օրպէս թէ ձարտարապետական խորհրդով քանդուեցան։ Մատենագարանի համար՝ բարեյիշատակ Առաքել Ծատուրեանցի 30,000 բուպիւնով, կանգնուեց քարուկիր նոյակապ շինութիւն՝ ուր տեղափոխուեց մատենագարանն ու թանգարանն. և ահա նոր այժմ կառուցվում է՝ արժանապատի Մեսրովը վարդապետ Տէր Մովսիսիանի ջանքերով, նոր մատենադարանական շինուած, և այն տեսլի քան թէ անյարմար տեղում, Բագուեցի մի յարգելի նուիրատուի 25—30,000-ի գումարով։ Զգիտենք՝ ի՞նչ անուն տանք այսպիսի անհաշիւ և աղիկամի վարժունքներին։

Արդար իրաւունք ենք համարում մեզ բողոքախառն յայտնել հրապարակաւ, ՚ի նկատի ունենալով ներկայ զրաւոր արտունջը՝ հրատարակուած 1878 թուականին, 1891-ին Մակար կաթուզիկոսի մահուանից անմիջապէս յատոյ—երբ Սինօդական անդամութեան բարձ և աթոռ ունէինք—հաւա-

քննուել է արդեօք դորանց պատճառները։ Շատ շատ
անհարազատ և անհոգ անուն է արուել վարչութեան
գեկը ունեցողներին՝ որով և գործը վախճան է ստա-
ցել։ Սակայն մոռացուել է այդ պատճառների հետ
կցել և օրէնքի անհմտութիւնը հոգեոր կառավարու-
թեան անդամների կողմանէ, կամ նոյն իսկ գործա-
վար աշխարհականների կողմանէ, որոնք առ առաւելն
գաւառական ուսումնարանների աշակերտական սե-
ղանի վերայից բարձրանալով՝ մէկ կոչման թուղթ
ձեռք բերած ստախճան ստանալու, ազնուանալու
բաղձանքով՝ հոգեոր դիւանների գրեթէ բացման օրից
նութեամբ անդամակիցների՝ Տփիխսից ճարտարապետ ակա-
դեմիկ Շտերնին հրաւիրեցինք սուրբ էջմիածին և ամսօր-
եայ ժամանակով աշխատեցնելով՝ գծագրել տուինք Մայր
Աթոռի անհրաժեշտ պէտքերի, նշանակութեան և Հայոց ազ-
գի արժանեաց համապատշաճ վայելչական ընդհանուր շինու-
ածքի պատակագիծ։ որպէս զի համաշափ ընդարձակութեամբ
ամէն կողմից յետ քաշուին վանական շէնքերը մինչև Սիմէօն
կաթողիկոսի կանդնած արտաքին աղիւսապատ պարիսպն և
սուրբ տաճարն կիստրոնանայ շրջապարփակ հաստատու-
թեանց մէջ՝ որպէս մէկ շքեղաշուր դշխուհի։ Այս յատակա-
գիծն արժեց 3000 բուլլի չափ դրամ և սրբազն Սինօդի
յայտարարութեամբ յանձնուեց յայնժամեան տեղապահ գե-
րապատիւ Երեմիս եպիսկոպոսին, որպէս զի նորընտիր
Հայրապետի յէջմիածին ժամանելու միջոց՝ յանձնէ ՚ի տնօ-
րէնութիւն Նորին Սրբութեան, ասելով՝ առ այժմ Մայր Ա-
թոռը կ'կարօտի շինուածոց մասին այսպիսի վերանորոգու-
թեան՝ որ յընթացս 25—30 տմաց, տարեկան 15—20 հազար
արծաթ ծախքերով կարող են վճարուիլ։ Տաճարի նորոգու-
թեան համար արդէն կար հանգուցեալ Մակար կաթողիկոսի
հոգածութեամբ գումարուած 43 հազար բուլլի՝ որք սակաւ
բաւելուածով կարող էին այդ պէտքն դլխաւորել։

աքնում, տեղերում են կարկատուն մաքերով վճիռներ
գրելով։ միևնոյն միջոց կալուածական խնդիրների
օրինական հազար ու մէկ նըրութիւնների մաղերով
անցնելու վտահութիւնը յանձն առնելով։ Թէ որքան
ողբալի է կալուածական կառավարութեան գործը
մեր հոգեոր շրջանում, հարկ եմ համարում այստեղ
թուեր բերել ապացոյց, որոնք գործավարների օրի-
նական անհմտութիւնների հետ, ապացուցանում են
և նոցա աններելի գանցառութիւնները։ Գեղարգայ
վանքի Վանահայր Պօղոս եպիսկոպոսը՝ 1862 թուա-
կանին իւր յայտարարութիւնով, ուղղած Սինօդին
մարտի 28, լուծումն է խնդրում վանքի արդիւնքով

Սակայն որքան եղաւ մեր վիշտ, տրամութիւն և հիա-
սթափութիւն՝ երբ Արեօլ-Պալտաւայի աքսորէն վերադառնա-
լով տեղեկացանք, որ Կաթուղիկէի վերանորոգութեան մա-
սին գանձուած գումարը՝ հանդերձ Մայր Աթոռոյ աւելի
քան այնչափ դրամով, ծախսուած են միաբանութեան ան-
ձաշակ սենհեակների կառուցման վերայ խանգարումն յառաջ
բերելով Շտերն ճարտարապետի ծրագրի մէջ, այլ ևս անօգուտ
և աննպատակ է համարվում նորա նորընտիր Հայրապետին՝
ներկայացնելու։ Այս անձնահամ համարձակութիւն լինում է
միայն նորա համար, որպէս զի Տէր Երեմիա եպիսկոպոսն
ունենայ բաղգաւորութիւն զնել շինութեան ճակատին ար-
ձանագիր իւր անուան յիշատակին։ Իսկ ազգընտիր Հայրիկը՝
տեղեկանալով հանդերձ անիշխանական ժամանակի ինքնահամ
գործողութեանց, արհամարհում է ճարտարապետական ձեւա-
կերպութիւնն, յառաջ բերելով այնպիսի անձաշակ շինու-
թիւններ՝ որոնք չնորդիւ ճարտարապետական արձանագրու-
թեան բարձուեցան և զեռ պիտի բարձուին։ Տարակոյս Հ'կայ
Ղաղարապատ կոչումն անփառասէր Հայրապետին քուն և դա-
դար չ'էր տալի, պէտք էր այն վերանար և Հայրիկաշէն հիւ-
րանոց-աւագականոցը նորան փոխարինէր։

գնել Գողթ զիւղացի Նաբէ Հասան-օղիկից իննսուն արծաթով մի ջրաղաց։ Սորա հիման վերայ իշխանութիւնից նոյն տարուայ ապրիլի 28, 790 թիւ հրամանագրով թոյլառութիւն է լինում ջրաղացը գնելու և նորա կալուածագիրը վաճառողից ստանալու և առաջարկելու նոյն ատենին։ Այդ լուծման համաձայն Գեղարդայ միաբան՝ նոյն և վանահօր պաշտօնակատար, Յովհաննէս քահանայն ջրաղացը գնումէ և կալուածագիրն իւր յայտարարութիւնով 1864 թուականի ապրիլի 27 ներկայացնումէ Վեհափառ Կաթուղիկոսին։ Իսկ նորին Սրբութիւնը անմիջապէս յանձնումէ Սինօդին։ Սոյն կալուածագիրը Բարձրագոյն Ատեանը՝ իւր հրամանաթղթով նոյն 1864 տարուայ յունիսի 20, 817 թուահամարով ուղարկումէ Երևանայ վիճակային կոնսիստորիային, որպէս զի նա իւր կողմանէ գրագրութիւն բանայ նահանգական դատարանի հետ և հաստատել տալով նոյն ջրաղացագիրը վանքի անուամբ՝ վերագարձնէ Սինօդին։ Կարծում ենք՝ բաւականին պարզ է վերոյլերեալ պատմութիւնը, այժմս տեսնենք այդ անցրի պղտորութիւնը, որոյ մէջ շաղախուումէ ինքն իրեն գերագոյն եկեղեցական առեանը, վանքական կալուածների և իրաւունքների անկորուստ պահպանութեան միակ հոգատարը։ Սինօդի կալուածագիրը Երևան ուղարկելուց ինն ամիս տասն օր յետոյ՝ այսինքն 1865 ամի մարտի 9, 641 թուահամարով կրկնողական հրաման է գրւում Գեղարդայ վանուց վանահայր Միքայէլ վարդապետ Զամոյեանցին, որ շուտով ջրաղացը գնէ և փաստաթուղթը ուղարկէ։ Բաւական չէ այդ, մինոյն պա-

հանջը երեքինվումէ 1869 ամի յունիսի 29, 1533 համարով։ Այս ևս քիչ է, չորեքինվումէ այդ պատուերը ներկայ վանահայր Վարդան վարդապետին՝ տարւոյս յուլիսի 8, 1705 թուով, որոյ մէջ ծանր տըրտունջ է յայտնուում թէ այսքան և այնքան անգամ ձեր նախորդներին առաջարկուեց ջրաղացը գնել և իրաւագինն առաջարկել, «բայց չ'հետևեցաւ ի նոցունց զպահանջ Սինօդիո»*)։ Միթէ այս տասն և չորս տարուայ ընթացքում ջրաղացի եկամուտը չ'յայտնուեց իշխանութեան գոնէ վանքի տարեկան մուտք ու ծախքի մատենով, որոնք պէտք է քննուերին տարուէ տարի։ Հիմա աչքի առաջ ունենալով դիւանահանեցի ելեմտական թղթերի մատեանները, կանոնաւոր կազմած գործերը, այբբենական ցուցակները, օրագրութիւններն և այլն, ի՞նչ պէտք է անենք Սինօդի անգիտութեանը, որ կալուածագիրը իւր ձեռքին, նոր ի նորոյ փաստաթուղթ է պահանջում։ ի՞նչ ենք առում պահանջել, նոր ի նորոյ հրամայումէ ջրաղաց գնել, երեկի առաջուայ առևտուրն անընդունակ է համարվում։ Ուրեմն, եթէ վանահայրն այժմ ևս իննուուն արծաթծախը ցոյց տայ վանքի տարեկան ծախքերի մատենումն և վաճառադ տաճկից ստանայ նոր մէկ տնական վաճառադիր ու առաջարկէ Սինօդին, կ'նդունվի։ ի՞նչ

*) Ամէն բան գլխաւորելու համար պիեագիր Զամն էր պակաս, որ անկօչ հիւրի նման բազմէր անուն բայիի շարկին։ Եւ այս հրամանին ստորագրումէ արքութեան մօտիկ եպիսկոպոսն։ Ուրեմն, առանց ուսումնասիրելու գործն և նորանից քաղուած հրամանն, անգամների պարտքն է միայն աչքինուփ թուղթ ստորագրել։

են պատասխանում այդ կը կնողական թղթերին վահաճայրերն, չկայ վանքումն ոչ գործ, ոչ թուղթ. նաև անդամ իշխանութեան հրամանագիրն. երեխ առաջում են կամ վախենում ցոյց տալ Սինօգին իւր սխալն: Ի՞նչ է պատճառն, աշխարհի այնքան աչքարաց կառավարելու ժամանակ, մեր առ խարխաբ գնալուն: Պատճառն այն է, որ Գեղարդայ վանքը 1862 թուականից մինչև 1878 ունեցել է տառն վահաճայրեր, *) որոնցից ոչ մեկն էլ չէ յետ պահանջել վանքի ջրաղացի կալուածագիրը: Իսկ Սինօգին փոխել է թերևս նոյնչափ գրասեղանապետներ, որոնք ամեն մի փոխանցուելու ժամանակ միմեանց գործնական թղթեր՝ են հաշիւ տուել և ստացել. կամ շատ անգամ անգարծագիր հարիւթաւոր թղթեր կապցներով թողել են գրագրանոցում վայր ձզուած, անվերջ վիճաբանութեան իւմոց եղած, թէ գորանք չեն պատկանում կառավարչական մասին, այլ հաշուարարական և ընդհակառակն: Պատճառն այն է, որ էջմիածինն չունի մէկ կանոնաւոր մատեսն՝ որի մէջ մի առ մի արձանագրուեն իւր և այլ վանքերի կալուծագրերը: ՚Ի հարկէ այսպէսով կարող են թերթեր էլ կորչել, իրաւագրեր էլ, հենց այդպէս էլ եղած պէտք է լինի՝ որ Սինօգին վիճակային կոնսիստորին գրած իսկական հրամանագիրը (ունենալով իւր ճակատին անդամ քահանայի ստացականը, ճախ անկիւնում մատենաւ վարի եկեալ տոմարի յօդուածահամարն, որոյ տակ

*) Պօլոս հպիսկոպոս, Յովհաննէս քահանայ, Եղիշէ, Ստեփանոս, Միքայէլ, Թափայէլ, Մամբրէ, Յակով, Պիտրոս և Վարդան վարդապետներ:

նա մուտք էր գրուած և լուսանցում զործապետի յատկանշաններն թէ ինչ գործի է վերաբերում, շատ մեծ զգուշութիւններ), չնայելով գիւտնական օրինասահման խստութիւններին՝ գտնվում է Գողթ գիւղացի Յովակիմի տանն՝ անզիր թերթը պատառուած հինայ (կարմիր ներկ) փաթաթելու համար. իսկ գրաւորը սոխերի տակ փուռած, որ չ'փին նոքա: Այս գիւտին է պարտական ներկայ վահաճայրը՝ յայտնելով Սինօգին՝ թէ ջրաղացի կալուածագիրը Դոյնն ուղարկած է վիճակային Առենին հաստատելու համար: Ըսթեցողները թերևս ասեն այդ ոչինչ՝ իննուուն մանէթ արծէք ունեցող ջրաղացն ինչ է, որ ինչ լինի նորա կալուածագրի մասին եղած հոկողութիւնը, թէն նա այժմս տարեկան իննուուն արծաթ եկամուտ ևս բերելու լինի: Որ ՚ի փոքուն հաւատարիմ է և ՚ի բազմին հաւատարիմ է»: Ահա ձեզ և մեծը: Գեղարդայ վանքի վահաճայր արժանապատիւ Միքայէլ վարդապետն Զամայեանց՝ սորանից ութ տարի յառաջ, յանձնում է Սինօգին իւր վանուց անունով գնած Մեհրաբ-Քիւրդքեանդ Թափարաշ գիւղերն իրենց կալուածագրերով, որպէս զի Ճեմարանը զօրացնէ իւր նիւթական միջոցները. իսկ նա (Սինօգին) տարենը մինչև ութ հարիւր արծաթի վարձով է տալիս: Բայց ահա տարւոյս յուլիսի 8, 1707 թուով արձակուած Սինօգին հրամանը, հարցնումէ վահաճօրը, «ընդ ձեռն պատշաճաւոր իրաւաբանի հաստատեալ է զկալուացիր (գարձեալ զայթակղեցուցիչ զ.) ՚ի նորոյ գնեալ Մեհրաբ-Քիւրդքեանդ գեղջն, թէ ոչ»: Ուրեմն, ի՞նչով է ափել Սինօգին այս ութ տարիների միջոցում նոյն

կալուածքներին. եթէ փաստաթղթեր չ'ունի իւր ձեռ-
քին. իսկ եթէ ունի, ի՞նչպէս չ'ի կարողանում իմա-
նալ նորա հաստատուած կամ անհաստատ լինեն: Ին-
չով է որոշել գաշնակրութիւնների մէջ այդ գիւղերի
շրջակայ սահմանների անուններն ամէն մէկ տարի
կապալով տալու ժամանակ, եթէ կալուածագիր չ'ունի
իւր ձեռքին: Ինչով է իւր իրաւացի գատը պաշտպա-
նել ցայսօր սահմանակից կալուածաերերի ճետ հող
ու ջրի վէճ ծագած միջոց՝ որ անդադար պատահումէ
Գառնիբասարի մահալի ազգաբնակութեան շատութեան
պատճառով, եթէ, կալուածագիր չ'ունի: Միթէ այդ
փաստաթուղթն ևս Աստապատու Կարմիր վանքի և
Խորվիրապի կալուածքների ուղամների խաչովն խո-
չուեցան: Բայց թէ ունին արդեօք անուանուած գիւ-
ղօրաքը իրաւագիր՝ ցոյց ենք տալիս Մինօդի անդամ-
ներին և զործավարներին կարդալ Ալրի Վանից-Գե-
ղարդավանք ստորագրութեան գրքի 65—73 երեսնե-
րը, ուր արժանապատիւ Ստեփաննոս վարդապետ Միթ-
թարեանցը հարկաւոր է համարել Մինօդի զործերից
հանելով գրոշմելու ուռւ և հայ բարբառներով Մե-
հրաբ-Քիւրդքեանդ-Թափաբաշ գիւղերի կալուածագրի,
նորա հաստատութեան և ախրապետողական թերթի
հարազատ պատճէններն: Մենք այստեղ շատ ստուգ
տեղեկութիւններ կարող ենք բերել Տփխիսի կոնսիս-
տորի զործերից Հաղպատի, Սանահնի, Մարցի, Հա-
ղարծնի, Գօշ-Միթարի վանքերի կալուածքների խրլ-
վելու և նորանց ախրապետական վկայաթղթերի
կորչելու մասին: Գանձակի հոգեոր կտուավարութիւնից
Արագլուի, Զարեքի, Եղնասարի, Մուռուափ (Մուռո-

նոտ), թարգմանչաց, Բանանցի և այլ անապատների
հողերի ու անտառների օտարանալու համար: Ախալ-
ցխայի կառավարութեան զործերից բարեյիշատակ
Կարապետ և Գէորգ Արքեպիսկոպոսների արդիւնքով
գնուած գիւղերի հրովարտակի (սանձախ բարաթիի)
Քութայիսի նահանգական գատարանում կորչելու
համար՝ կամ Միթարեանցի ու Թաթոսեանցի կողմանէ
բաւականին հողեր սուրբ Փրկչի կալուածներից տի-
րելու մասին: Սակայն առ ժաման լոելով թողնում
ենք պատեհ ժամանակի, միայն եկեղեցական սեպ-
հականութիւնների բարեմիտ փաստաբանների խզմին
ենք յանձնում պատասխանել, թէ որքան իրաւացի
են մեր նկատմունքները, որ հոգեոր իշխանութիւնը
առանց ազգայինների միջամտութեան չ'է կարող
ըոլոր կալուածներն պահպանել անկորուստ: Բացի
մեզ շատերն ևս կարող են իմանալ այսպիսի կորուստ-
ների տեղեր և պատճառներ ուրիշ տեղերի մասին:
Ցանկալի էր իմանալ արդեօք մեր հոգեոր իշխանու-
թիւնն ունի իւր ըոլոր շէն և անշէն վանքերի, անա-
պատների ցուցակները հանգերձ կանոնաւոր տեղա-
գրութիւններով, սրպէս զի կարեոր դէպքում իւր
իրաւունքը նոցա մնացորդների վերայ կարողանար
գործագրել: Ալ թէ վանքական կալուածների ար-
դիւնաբերութեան զործում որքան հմտութիւն ունի
հոգեոր իշխանութիւնը՝ բաւական է միայն յառաջ
բերել այն օրինակը, որ բժշկապետ Տէր Գրիգորեանցն
Ախալցխայի եկեղեցւոյ կալուածներին տալիս էր տա-
րէնը 5250 մանէթ կապալագրամ. սուրա համար
ժողովրդի կողմանէ անդադար բողոք էր՝ թէ կապա-

Եառուն շատ տալով՝ աշխատում է իրենից անիրաւաբար շատ ստանալ, (թէ և ոչ մէկ կանոնաւոր զիւանատան մէջ չկարողացաւ իւր գանգատը ապացուցանել), ուստի և խնդրում էր Թորոս Զաֆրանեանցի հատուցածի նման 3300 արծաթ լինի աճըքագրամը, որպէս զի ինքը հանգիստ լինի. Սակայն կապալի ժամանակը լրացած օրերը՝ նոյն իսկ բողոքող զիւղացին, յանձն առաւ տալ տարեկան 10,000 բուպի՛ որ 12,000 աճրդագի՞ն տուաջարկողը իրեն գուռն չկայ ամենին. իսկ թէ որքան ջերմեռանդութիւնով պաշտպանում էր եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնն պիւղացիների անարդար առաջին պահանջները՝ շատերին յայտնի նշանաւոր գործ է. Այս թուանշաններից յետոյ պէտք է արդեօք տաել Պ. Գրշին, ահա թէ ուր գնացին, ինչ եղան էջմիածնի կալուածներն, որոնք հարիւրաւոր տարիներ և անհաշիւ ինքնընծայ վարչութիւններ ունին հարցերի մէջ տեղի դատարկութիւնը լցնելու. Պէտք է տաել և Պ. Քաջրերունուն, երանի այսպիսի բարոյական յարաբերութիւն էջմիածնի կողմանէ չլինի և ոչ մէկ կալուածտէր անապատի հետ:

Դ., Հարիւրաւոր աշխարհական և հոգենորական աւերակ վանքերին այցելուներ պատահած են մեզ, նոցանից առաւել լուրջ գատաղութիւններ տուած են միշտ աշխարհականներն՝ որոնք փոքր ՚ի շատէ զարդացում են ունեցել. Օրինակի համար, երբ քանի մի պարոններ սուրբ Ստեփաննասի և Ամենափրկչի կիսուեր և թերաշէն վանքերը տեսան Գեղարդաց Մըակացում, երբ ակղական տաճիկ և հայ բնակիչներից

լսեցին թէ՝ այս ինչ հող, այս ինչ ձոր վանքինն է, այս ինչ այգի, այն ինչ գիւղատեղ վանքինն է, այս ինչ ջրաղացի աւերակ, այն ինչ առու և իւր կրաշէն ջրամբարը վանքինն է՝ անդադար սրաատանջ հարցերով մեզ տափնապում էին. — Ինչու հոգեոր իշխանութիւնը այս շէն, համբաւաւոր և եկամուտներով ապահովացած վանքերը իբրև միջոց չէ գործածում հետզհետէ միւս անապատների նորոգութեանը, որով նոցա կալուածները՝ թերևս կիսով շափ, ձեռք կրեռին. քանի որ նոյն իսկ բնակչաց բերանում է նորանց կալուածագիրը. Ինչու այնքան անխնամ թաղվում են այն ճարտարաքանդակ խաչարձանները, որմանքարերն ու տապանագրերն, որոնք մեր ազգի անցեալ ճոխութեան վկայագրերն են այսօր և պատմութեան խօսքերին ուժգնութիւն և անսոււտ ապացուցութիւն. միթէ ք'իչ հաց ուտողներ կան ազգի հաշուով. ինչու մէկ քանի անձննք և այն նուիրական աեղերը չեն գտնւում՝ նորանց անեղծ պահպանութեանը հսկելու. Միթէ հոգեոր իշխանութիւնը չէ հուատում իւր ժողովրդի ջերմեռանդութեանը, որ երբ տեսնէ այսօր այս ինչ աւերակ վանքումն ծովի գուրս եկաւ, բնակութիւն հաստատուեց, վազը անշնչու նորա ուխտաւորն է, նորա կաթնատու և արօրածիգ անասունների նուիրատուն է, նրա վանահօր աջահամբոյը բաշխողն է և այն և այն.» Թորանց վերայ մենք աւելացնում ենք. այս, անցել է այժմս այն նախնական յարմարութիւնն, որ անապատները կլինին մանկանց համար վիշերօթիկ կրթարան, ոս այն նորա դեռ ևս չեն կորցրել իւրեանց նշանա-

կութիւնն արծարծելու ժողովրդի մէջ կրօնասիրութիւն, ներշնչելու ազգասիրութիւն, քահանայացու դպիրներին վարժելու եկեղեցական ուսմունքների, խորհրդական արարողութիւնների, միակերպ շարժողութիւնների և համանման երգեցողութիւնների մէջ, որոնք արտաքին աչքի ընկնող պայմաններն են մէկ առանձին կրօնական հասարակութեան։ Այս պէտքերը առաւել զգում են ժողովրդականք, քանի թէ մենք, ըստ որում նոքա տւելի ծանօթ են պայմաններին՝ որոնք ազգերի սրտերը միացնում են իրենց հայրենիքի հետ անբաժան։ Նոքա լաւ գիտեն թէ՝ ինչ յատկանիշներ և ինչպիսի մնացորդներ կապում, շղթայում են ժողովրդի ներկայն անցեալի հետ։ Նոքա աներկմիտ հաւատացած են՝ որ ամեն մէկ մտացի, գործին քննողական աշքով նայող օտարազգին, աւերակների մնացուածքների վերայ կարող է առանց արձանագիրների և բնեռագիրների և՛ս կարդալ մեր վաստակասէր նախորդների բարոյական ոյժը, քանի քարը, տարօրինակ կրօնասիրութիւնը, բնածիր ճարտարութիւնը և մտաւորական գարգացումը։ Ուստի այս պատճառով է, որ նոքա եկեղեցականներից աւելի սրբազն կհամարին ամէն մէկ մեր նախնեաց ձեռքից գուրու եկած հիւսուած ու կաղաշեն։ Այս պատճառով է, որ կցանկան իւրեանց ինկելի հայրերի վառք զրոշող քարաշէն տախտակներն անբեկանելի և անհետանալի մնան։ Այս պատճառովն է, որ մենք մեծ և փոքր վանքերի եկամուտքի ինչ տեսակ բաժանմունքների, վանահայրերի ինչ տեսակ համաձայնութիւնով—իբրև սեպհականութեան աէր և ոչ ա-

ւանդապահ—վարւելներու մասին, կամ հնութիւնների ինչ աչքով նայելու համար մանրամասն չխօսելով՝ մեր փորձով գիտեցածը յայտնեցինք անկեղծ մտքով, և հրաւիրում ենք ազգայինների միջամտութիւնը հոգեսոր կառավարութեան գործերին, քանի դեռ ևս ուշ չէ։ Հրաւիրում ենք բանիմաց և ձեռնհաս հայերին կազմել ընկերութիւն հայրենի հրաշաճարտար հնութիւններն պահպանելու և հարկաւոր եղած տեղերը հետազօտելու, որից թերեւ խրախուսուի հոգեսոր տեսչութիւնն իւր կողմանէ պարտուպատշաճ եղածներն անելու։ Գոնէ մէկ մէկ վեղարաւոր կարգելու այն անապատներում, որոնց շրջակայ բնակիչների վկայութիւնը ձեռնտու է վանքական հոգերի համար վէճեր բարձրացնել՝ կառավարութեան կողմանէ երկրաշափական գործողութիւնները սկսած ժամանակ։ Բաւական համարելով այն կորուստներն, որոնք ցայսօր անհոգութեան պատճառաւ հասել են մեր ազգութեան, որ բացի եկեղեցական կալուածներն իւր բնակած երկրում ուրիշ ընդհանուր սեպհականութիւն չնւի։

Պ. Ս. Ե.

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ.

Բարեմիտ ընթերցողն արդէն զրքուկիս վեցերորդ պրակում տեսաւ՝ Սրբազն ներսէս և Արիստակէս եպիսկոպոսների նամակներից, հայր Խորէն վարդապետ Ստէփանէի մեր անձին վերաբերութեամբ ունեցած ջանքերը՝ նզովից կոնդակի տարածման մէջ։ Արակէս զի կարող լինինք գաղափար տալ նրբամիտ քննասի-

բին մեր ընկերին թշնամանք անտեսելով՝ նորա հետ
բարինամբոյք կենցաղավարութեան մասին, յառաջ
ենք բերում երկրորդ յաւելուածիս մէջ այն պժգալի
գործողութիւններից երկու և կէս տարի անցնելուց
իւսոյ՝ Աստրախանից մեր 1886 թուականի յուլիսի
18-ին համարաւ 240, յայտարարական և մտերմական
գրութիւնների օրինակները Վեհափառ Մակար Կաթու-
ղիկոսին ուղղուած՝ բարեջնորհ Խորէն վարդապետ
Ստեփանէի մասին։ Տեսնելով այդ եռանդուն անձ-
նաւորութեան մէջ պախարակելի թերութիւնների
հետ զուգընթաց և գովանի յատկութիւններ ու հա-
զուագիւտ արժանիք՝ ըստ բնածին մեր ձգտման, չ'է-
նք կարող չընահատել նորան։ Մանաւանդ որ սու-
գապէս տեղեակ էինք թէ նա իւր միամտութեամբ
այլոց ձեռքին չարութեան գործիք է՝ ինչպէս Ստե-
փաննոս եպիսկոպոս Միխարեանի. ուստի և եղ-
բարական սիրոյ պարտք կ'համարէինք առիթներ ուրո-
նել՝ պատուականն անարգէն հանելու, բաժանելու,
որով և ուղղութեան առաջնորդելու։ Յառաջ ըերենք
ապա և չնորհալի վարդապետի նոյն թուի գեկտեմ-
բերի 31-ին ուուրը եջմիածնից մեզ յլած նամակի
հաւասարն՝ որ մաքուր հայելի է նորա վառվուն,
աշխոյժ, սիրափառ հոգուոյ յափշտակութեան և յեղե-
զուկ կրքերից ալէծուփ բնաւորութեան։ Մարդկային
որտի գաղտնի խորշեր և նորա բիւրատեսակ յոյզեր
քննող աստուածեղէն իմաստութեան Հողին որքան
անսփառ սուուգութեամբ առաջնորդ է հանդիսացել
Սրբազն Պօղոսին ճշմարիտ հաւասարցեալներ վաս-
տակելու ոյն հրահանդով։ «Մի յաղթիր ի չարէն, այլ

յաղթեան բարեաւն չարին։ Եթէ քաղցեալ է թշնամին
քո՞ նաց տուր նմա, և եթէ ծարաւի է՝ ջուր տուր
նմա, զայս արարեալ կայծակունս հրոյ կուտեսցես
՚ի գլուխ նորա»։ Ահա խրատ ընկերահաշտ կենցա-
ղավարութեան՝ որ սիդամիրովտ առիւծներ հեղահամ-
բոյք զառների քաղցրաբարոյւթեան կփոխարկէ՝ որոյ
հաւաստի պատկերն է վերջընթեր թուղթն։

ԶԵՐԴ ՎԵՀԱՓԱռՈՒԹԻՒՆ

Աստուածարեալ Քահանայապետ.

Պատուադիր մեծարանոք ընկալայ զՀայրապե-
տական պատուական կոնդակ Սրբազնագոյն Քահա-
նայապետիդ՝ տուեալ յշ այսր յուլիսի թուահամա-
րաւ 365, ՚ի մասին բացման միջաւեան և երկուա-
նան ծխական հոգեոր գալրոցաց վիճակիս՝ ՚ի կատա-
րումն որոյ փութացից Տեսն յաջողութեամբ և մե-
ծի Դիտապետիդ օրհնութեամբ։

Վեհափառ Տէր, որովհեան քանի քանիցս հրա-
մայեալ է ինձ ՚ի Սրբազն Սինօդէ որբոյ եջմիածնի
ընտրել զարժանաւոր թեմական տեսուչ և բարձրա-
գոյն հաստատեալ հրահանգ վարչութեան գալրոցաց մե-
րոց զաեսուչն բացաւապէս որոշէ ի հոգեոր ան-
ձանց, վասնորոյ յառաջ քան զամենայն կանխեմ հայ-
ցել զփութաշնորհ անօրէնութիւն Վեհաստիճան Հո-
տապետից տալ ինձ կցորդ գործոց զալրոցական կա-
ռափարութեան զարժանապատիւ Խորէն Ծայրագոյն
վարդապետն Ստեփանէ՝ կարգելով զնա ՚ի պաշտո-
ման փոխառաջնորդի ՚ի Նպար քաղաքի։ Նա ստուծ-

ձընելով և զպարտաւորութիւն թեմական տեսչի ստացի ՚ի տարին հանդերձ ճանապարհածախիւր զմի հաղար երկերիւր ըուպլիս արծաթոյ և եռանդուն գործունէութեամբ զբանալի երկդասեան դպրոցս ՚ի Ղզլար և ՚ի Մողդոկ քաղաքս տակաւ առ տակաւ ամբարձէ ՚ի վիճակ միջնակարգ վարժարանաց:

Ի յայտարարութենէս առ Սրբագան Ախնօդն՝ ՚ի 18 մարտի տարւոյս ընդ համարտու 80 Ասառածարեալ Տէրդ իմ ունի լիովին հասու գտանիլ կարեորութեանց ներկայ խնդրոյս. ըստորում ՚ի վիճակիս չըգտանի բանիմաց քահանայ ոք, որ հնարեսցի տալ գիարեօր ուղղութիւն նորոգ բանալի վարժոցաց ՚ի խոյս ապագայ նախատեսանելի անախորժութեանց և տարակուսութեանց, մանաւանդ՝ որ զլխաւորն է, գժուարինէ սոսկ քահանայի կամ աշխարհականի ՚ի հաւանութիւն ածել բերել զհասարակութիւնս Ղզլար և Մողդոկ քաղաքաց՝ յորս, չգտանելով արքունի միջնակարգ ուսումնարանաց, օր յառաջ հոգալ պէտք են զընդլայնելոյ զշրջանակ ուսման երկսեռ զաւակացն մերազանց:

Յանձն եղեալ ՚ի շնորհս Աստուածարեալ Հայրապետի, պատիւ ունիմ լինել միշտ Զերդ
Սրբութեան ամենախոնարհ ծառայ:

Առանձին:

Հոգենը Տէր.

Աղաչեմ զՀայրականդ ուշադրութիւն երկայն մըտութեամբ լսել ինձ: Անորոշ դրութիւնն փատիչ և սպանիչ է աշխուժի և եռանդեան հոգւոյն: Յերից

ամաց հետէ գտանիմ յանորոշ կացութեան՝ իբրու առժամեայ կառավարիչ հոգեոր գործոց վիճակիս: Յայսքան միջոցի միեւթ արժանի յիշատակի կատարեցաւ գործ շինութեան ազգային աղքատանոցի: Խոստովանիմ, բազում ինչ հնարաւոր էր առնել, ձեռնարկելով յարմատական փոփոխութիւնս. սակայն առօրեայ տեղակալութեանն յիշատակ յետո ընկրկէր զիս ՚ի համարձակ ձեռնարկութեանց, ընդ սկզբանն որոց և զկատարածն անհրաժեշտ է գիտել:

Յայտարարութիւնս՝ յաղագս տալոյ ինձ գԽորէն վարդապետն, թնգ չլինիցի Տեառնդ իմոյ ՚ի զայրացումն կամ ՚ի զարմացումն. Փոքր ՚ի շատէ ճանաչեմ զիմն ՚ի վիճակիս և ճանաչիմ յիմոցն. յուսամ, զի օդաբեր գտանիցի վատարախոյ քան զիս այրն դիւրաբորոք և բազմատանչ: Իսկ Դուք՝ յետ բազմաթիւ խոհական փորձոց, զփորձ տեսջիք և երկուց ցաւկոտ անձանց զիջողութեամբ իրերաց ՚ի շահ հասարակաց գործելն: Վերսաբն ինդրեմ, եթէ միայն ունիմ մնալ ՚ի պաշտամանս, առանց վարանմանց բարեհաճեցէք տալ ընթացս յայտադրոյն՝ որով առաւելուք ինձ զպատիւ առաջի բանագէտ անձանց, փըրկէք զվանականն ՚ի յուսահատութենէ և զանիորհուրդ դատող համազգիս ՚ի բամբասանաց: Ապա եթէ կամք և հրամանք Զեր յայլ ինչ կոչեն զիս իպարտաւորութիւն՝ չկամիմ զի առանց օգնականի այրն անշրջանայեաց յառաւել դժուար կացութիւն զանձն արկանիցէ և զժողովուրդն միահաւան ՚ի հերձուած հանեալ տանիցէ:

Դրոշմելով զջերմին համբոյը ՚ի վերայ Հովուա-

պետական և Հայրական դաստակաց ամեներանեալ
հոգիոր ծնողիդ իմոյ,

մասմ ամենախոնարհ ծառայ և որդի:

Ի 17 1887 ամի սահցեալ:

Նորին Սրբազնութեան

Տ. Սուքիսս եպիսկոպոս Պարղեանին:

Սրբազն Տէր իմ:

Վեհափառ Հայրապետիս գթառատ հրամանով
դարձեալ արժանացայ Հայութեան փրկութեան Սրբ-
բարյայը համբուրել և պաշտել վերադասնալով ար-
սորից Ս. Էջմիածին ահա մի եօթնեկից իվեր:

Այստեղ միայն իմացայ Զեր Սրբազնութեան
գրութիւնն իմ մասին առ Վեհափառ Հայրապետն:
Երկու եմ կրում, Հայութեան անսուտ բարեկամ
փառաւորեալ Հայր, թէ բառերը կպակասեն
ինձ յայտնելու ինչով որ լցված են միտքս և սիրտ,
ուստի կարճ խօսքով վառ և բորբոք չերմեռանդա-
գոյն որտիս լարերի վերա հեռազբումեմ Սրբազն Տէ-
առնդ, որ այս իմ երկտողս զըումեմ ոչ թէ թանա-
քով, այլ ուրախութեան և երախտագիտութեան ար-
տասուքով: Երախտագիտութեան՝ որ ամենքից մո-
ռացվածիս և ի բաց ընկեցիկիս կամեցել էք լիշել, և
չնայելով իմ բազմաթիւ պակասութիւններին, յօժու-
րում էր սակաւամասն արժանիքս, եթէ ունիմ, ի հա-
շիւ առնել, բայց առաւել ուրախութեան է արտա-
սուքս, որ բազգաւորված եմ համոզումն զարձնել այն
ինչ որ իրրե արտաքին տեղեկութիւն ունի թէ Հայ-

երիս մէջ չէ մեռել բոլորովին հին Հայկական վե-
հանձն սիրտը և հոգեորականներիս մէջ գանգումէ
Զեզապիսի վեհանձն առաքինի, Աւետարանի միակ
պաշտօնեայ: Գոհութիւն եմ մատուցանում անբազդ
Հայերիս նախարինամօղ Արարշին:

Գաղանիք չէ խօսքս եթէ երբեմն խոստովանել եմ
բարեկամներիս առաջ Զեր պատուաբեր արժանիք-
ները, այսօր պատրաստեմ, եթէ հար էր, ի լուր
աշխահի քարոզիլ:

Խոնարհելով ի համբոյր Աստուածապարգի մար-
դուսիրական սուրբ զգացմունքով արտադրող նուիրա-
կան Աշխատաւումնեմ, Սրբազն Հայր, ցմահ ու-
րախանալ Զեր այգիսի չքնաղ և պանծալի հոգեու-
րական լինելու վերա և լինել երախտագէտ: Եթէ
այս աշխարհից մեղ հետ մի բան պիտի անցնէ միւս
աշխարհ, անշուշտ եմ, որ սոյն զգացմունքով պիտի
ներկայանամ երկնաւոր Դատաւորի առաջ: Զնչին
անձն եմ և վատարազդ, բայց զիտեմ անձնանուիրա-
բար սիրել և ծառայել: Ընդունեցէք աղաչումեմ բոլո-
րանուէր օրտիս ծառայութիւնը այժմ և այսուհետեւ
ցմահ:

Սրբազն Տեառնդ

Խոնարհ և անձնանուէր ծառայ
Նորէն ծայր, վարդապետ Ստեփանէ:
Ս. Էջմիածին 1886 դեկտեմբերի 31.

Յ. Գ. Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ
հրամայել ինձ գնացման առաջնականի Հայերին
հոգիոր հովիւ:



ԱՌՅԱ ԵՆ ՏԵՍԵԼԻ:

1) Սուքիսս եպիսկոպոս Պարզեանցի նամակը դրուած սուբք էջմիածնի Սինօղի ատենապետի Տեղակալ գերապատիւ Երեմիա եպիսկոպոս Գալստեանի անուան, գինն է 60 կոպ.

2) Ճանապարհորդական տովաւորութիւնք և համառօտ նկարագիր գէպքերի վերջին Կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ, գինն է 60 կոպ.

3) Պատուիրակութիւն Սուքիսս եպիսկոպոսի ՚ի Ա. Պետրովը Հայոց գոլոցների մասին:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ԵՒ ՀԵՏԶԵՏԸ ԼՈՅՍ ԿՇԵՄՆԵՆ.

2) «Յայտարարական թուղթ Սուքիսս եպիսկոպոսի յանուն Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տ. Տ. Գլուխովայ Դ-ի»:

1) «Ազգարարական թուղթ Սուքիսս եպիսկոպոսի Պարզեանց առ ոմանս յանդամոց միաբանական ուխտի սրբոց Աթոռոյն Կաթուղիկէ էջմիածնի»:

Վ. Ա. Ճ. Ա. Ռ. Ո. Ի. Ո. Ի. Մ. Է.

Երեանում—Պ. Յովհաննիսեանցի գրախանութում,
իսկ Տփիսիսում—«Գուտտեմբերգ» և «Կենդրոնական»
զրավաճառանոցներում:

ԳԻՆՆ Է 30 ԿՐՈՊԵՐ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0161953

